ԴՐՈՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

№ 1 (1593) ՅՈՒՆՈՒԱՐ 2008


EMBLY

ARMENIA

ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ





Նախընտրական ծրագիր

2 ՀՀ նախագահի թեկնածու Վահան Հովհաննիսյանի նախընտրական ծրագիր

Հարցազրույց

9 «Դրօշակի» հարցերին պատասխանում է Վահան Հովհաննիսյանը

ՀՀ նախագահական ընտրություններ

18 Հայաստանը լիբերալիզմի եւ եվրոինտեգրման խաչմերուկում

28 Ում ընտրել

Հայկական հարց

31 Խարխափումի տարիներ (1908-1915 թթ.)

Դաշնակցական բեմ

40 Հայ ավանդական կուսակցությունների դիրքորոշումը 1960-ականների հայրենադարձության հարցում

Տեղեկանք

44 Հայ եւ հրեա համայնքներ. համագործակցության հնարավոր միտումներ

Խմբագրի անկյուն

51 Կուսակցական ընկերության թեկնածուն

Թերթերով «Դրօշակ»-ի էջերը

53 Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

Նոր գրքեր

55 Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները

Գաղափարական զանձարան

Հիշատակ

56 Հրանտ Դինք

«Դրօշակ» ամենամսյա պաշտոնաթերթ Հայ Հեղափոխական Դաշնակցության:
Հիմնադիր՝ ՀՅԴ
Գլխավոր խմբագիր՝ **Ռուբեն Հովսեփյան**
Խմբագիր՝ Կ.Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝ Ս.Խաչատրյանի
Ձեւավորումը՝ Մ.Հովսեփյանի
Գրանցման վկայական 897
Երեւան,375010,Միեր Մկրտչյան 12/1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am
Տպագրությունը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

"Droshak" monthly, ARF dashnaktsoutiun publication
12/1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am
Editor-in-Chef: **Rouben Hovsepian**

Digitized by ARF PR Office

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ՎԱՀԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության հարգելի քաղաքացի,

Մեր երկիրն ուղղակի պարտավոր է թեւակոխել զարգացման որակապես նոր փուլ: Անկախությունից մինչ այսօր ձեւավորված պետական, քաղաքական, տնտեսական եւ հասարակական իրողությունները այլեւս անհրաժեշտ առաջընթաց չեն ապահովում: Մեր պետության առաջ կանգնած արտաքին եւ ներքին սպառնալիքները, նրա առաջընթացի անհրաժեշտությամբ թելադրված մարտահրավերները, ինչպես նաեւ Սահմանադրության եւ իրական կյանքի անհամապատասխանությունը պահանջում են ծանրակշիռ եւ լայնամասշտաբ համակարգային փոփոխություններ: Մենք պետք է ստեղծենք թռիչքածեւ, կայուն զարգացման նախադրյալներ: Մենք պարտավոր ենք նոր ու թարմ շունչ հաղորդել կյանքի բոլոր ոլորտներին: Հայ մարդը պետք է լիարժեքորեն հավատա իր եւ իր ընտանիքի վաղվա օրվան, պետք է մասնակից դառնա այդ ապագայի կերտմանը:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, ներկայացնելով իմ թեկնածությունը, այս համոզմունքով է մասնակցում նախագահական ընտրապայքարին:

Մենք կազմակերպված ենք, կամք եւ վճռականություն ունենք առաջնորդելու մեր ժողովրդի պատմական երթը դեպի Նոր Հայաստան, դեպի ազատ եւ արդար հասարակություն: Մենք հավատում ենք արդար երկրի եւ ազատ քաղաքացու ստեղծագործ ներուժին: Սա է ապագա Հայաստանը կերտելու գրավականը:

Ազատական գաղափարախոսության սխալ ընկալումը եւ դրա ծայրահեղ գործադրումը, սոցիալական պետության հիմնադրույթի անտեսումը, ազատ շուկայի կարգավորման գործում պետության դերի նսեմացումը հանգեցրել են տնտեսական ներկա կարգին, երբ պետությունը կառավարում են տնտեսական խմբավորումների միջոցով: Նրանք մենաշնորհել են տնտեսության առավել շահութաբեր ճյուղերը, ձեւավորել մրցակցությունից գրեթե զուրկ, սեփական շահերը սպասարկող եւ դրանցով առաջնորդվող տնտեսական համակարգ:

Մենաշնորհները դադարել են միայն տնտեսական երեւույթ լինելուց: Նրանք որոշիչ ազդեցություն ունեն հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների վրա՝ պետական-սահմանադրական կարգից մինչեւ հասարակության արժեքային համակարգ եւ բարոյական չափանիշներ: Վատնելով զգալի միջոցներ եւ գործի դնելով իր տրամադրության տակ եղած վարչական հսկայական պաշարը՝ այդ խավը պարբերաբար վերարտադրում է ինքն իրեն՝ արգելակելով քաղաքական համակարգի կայացումը: Քաղաքական իշխանություն ունեցող դրամատերերի խմբավորումները հաճախ իրենց վեր են դասում օրենքից եւ արհամարհում երկրի պետական կարգը, ոտնահարում մարդկային ազատություններն ու իրավունքները, արգելակում ժողովրդավարական ավանդույթների եւ մշակույթի ձեւավորումը՝ ընտրությունների ժամանակ ճնշումներով եւ ընտրակաշառքով ուղղորդելով տնտեսապես անազատ ընտրողների քվեները: Շահագրգռված չլինելով տնտեսավարման արդյունավետ մեթոդների ներդրմամբ, անվերահսկելի դարձնելով տնտեսական գործունեությունը՝ նրանք վտանգավոր չափերի են հասցնում սոցիալական բեւեռացումը՝ բացառելով հասարակական համերաշխության հասնելու որեւէ հնարավորություն: Նրանք լճացնում են հասարակության կյանքը եւ խոչընդոտում երկրի առաջընթացը:

Հայաստանի ներքին կյանքում ես բացառելու եմ ատելությունն ու թշնամանքը: Իմ սկզբունքն է՝ ոչ թե հակադրվել ուրիշներին, այլ ապացուցել, որ մենք մյուսներից ավելի հետեւողական ենք ու արդարացի: Իմ հայացքն ուղղված է ապագային:

Իմ նպատակն է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում համակարգային փոփոխությունների միջոցով, առողջ ուժերի աջակցությամբ կառուցել Ազատ քաղաքացիների Արդար երկիր: Հայաստանի անկախությունն ու ինքնիշխանությունը ինձ համար բացարձակ արժեքներ են: Միայն բոլորիս ուժերի մեկտեղումով կարող ենք մեր նախնիների երազանքին, մեզ ու մեր զավակներին արժանի հայրենիք ունենալ:

Ես ունեմ այդ նպատակն իրագործելու վճռականություն: Ինձ անհրաժեշտ է Ձեր քվեն ու վստահությունը:

Հարգանքով՝

Ձեր հին ընկեր՝ ***Վահան Հովհաննիսյան***

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մրցունակ պետության երաշխիքը ազատ քաղաքացին եւ արդար համակարգի հիման վրա կազմակերպված հասարակությունն են: Ուստի մեր պետականության հզորացման, ազգային նպատակների իրականացման համար ժողովրդավարության կայացումը եւ քաղաքացիական հասարակության ձեւավորումը այլընտրանք չունեն: Իսկ իրական ժողովրդավարության հաստատումը եւ քաղաքացիական հասարակության կայացումը անհրաժեշտաբար ենթադրում են մարդու իրավունքներն ու ազատությունները երաշխավորող քաղաքական, տնտեսական եւ սոցիալական գործուն մեխանիզմների ձեւավորում, պետական կառավարմանը հասարակության լայն շրջանակների մասնակցության ապահովում:

Պետականաշինության ներկա փուլում առաջնահերթ եմ համարում.

o հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող համակարգային փոփոխությունների հետեւողական իրականացումը,

o սահմանադրական նորմերի անշեղ կենսագործումը,

o սոցիալական արդարության եւ հասարակական համերաշխության հաստատումը:

Կառավարման արդյունավետ համակարգի ձեւավորումը ենթադրում է.

o պետական մարմինների եւ պաշտոնյաների գործունեության հրապարակայնության ապահովում, իշխանության մարմինների նկատմամբ հասարակական վերահսկողության հստակ մեխանիզմների ներդրում,

o հանրային ծառայության որակի, ծառայողների մրցունակության եւ պաշտպանվածության բարձրացում,

o անկախ եւ անաչառ դատական համակարգի ձեւավորում,

o տարածքային քաղաքականության ոլորտում պետության արդյունավետ վարչարարության ապահովում, մարզերի ներդաշնակ զարգացմանն ուղղված պետական հատուկ ծրագրերի իրականացում,

o տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք կայացում, համայնքային բյուջեների ձեւավորման աղբյուրների ընդլայնում, անհրաժեշտ միջհամայնքային միավորումների ստեղծման քայլերի ձեռնարկում:

Իմ հատուկ ուշադրության կենտրոնում է լինելու քաղաքական համակարգի առողջացման հարցը: Այս առումով առաջնահերթություններ են.

o Ազգային անվտանգության ներկայացուցչական խորհրդի կազմավորումը,

o քաղաքական դաշտի գաղափարական բյուրեղացումը՝ քաղաքական ուժերի միջեւ քաղաքակիրթ մրցակցության, հանդուրժողականության եւ համագործակցության մթնոլորտի ձեւավորումը,

o ընտրական համակարգի կատարելագործումը, ԱԺ պատգամավորների ընտրության 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգի օրենսդրական ամրագրումը,

o քաղաքական ընդդիմության արդյունավետ գործունեության համապատասխան պայմանների ստեղծումը,

o հասարակության մեջ քաղաքական մշակույթի արմատավորմանն ուղղված ծրագրի իրականացումը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական համակարգը պետք է հիմնվի ժողովրդավարական եւ իրավական պետության հիմնարար սկզբունքների վրա: Պետությունը լիարժեք կերպով կարող է գործել միայն այն դեպքում, երբ պետական-իրավական կարգի հետ կենսագործվում է նաեւ համարժեք տնտեսական կարգ: Այդպիսի տնտեսական կարգի հիմնական տարրը մրցակցությունն է. միայն մրցակցությունը կարող է ապահովել շուկայական համակարգի արդյունավետությունը եւ երաշխավորել մարդու անհատական իրավունքներն ու ազատությունները: Հայաստանում մրցակցային տնտեսական կարգի հաստատումը լինելու է իմ առաջնահերթ խնդիրը:

Պետությունը դիտարկելով որպես մրցակցային տնտեսական կարգ հաստատող ուժ՝ տնտեսական քաղաքականության հիմքում դրվելու են հետեւյալ երկու հիմնական սկզբունքները.

o պետության քաղաքականությունը նպատակաուղղվելու է տնտեսական իշխանությամբ օժտված խմբավորումների կազմացրմանը կամ դրանց գործառույթների էական սահմանափակմանը,

o պետության տնտեսական քաղաքականությունը ուղղվելու է տնտեսական կարգի ձեւերի ստեղծմանը, այլ ոչ թե տնտեսվարողների գործունեության միջամտությանը:

Մրցակցային տնտեսական կարգը կարող է կառուցվել միայն այն դեպքում, երբ շուկայական հարաբերությունների բոլոր մասնակիցները զրկվեն շուկայական կանոնները փոխելու հնարավորությունից: Մրցակցային կարգը ապահովող համալիր, փոխկապակցված եւ երկարաժամկետ տնտեսական քաղաքականության իրականացման հիմքում ընկած են լինելու մրցակցային շուկայի սկզբունքները:

Պետությունը չպետք է ամբողջությամբ դուրս մնա տնտեսական գործընթացներից եւ անհրաժեշտության դեպքում միջոցներ պիտի ձեռնարկի մրցակցային մեխանիզմի բացասական հետեւանքները եւ խափանումները շտկելու համար:

Առաջնահերթություն է բնակչության տնտեսական ակտիվության բարձրացումը եւ արտադրական ժողովրդավարության հաստատումը՝ բնակչությանը տարբեր ձեռնարկատիրական նախաձեռնություններում ներգրավելու, տարածքային հարաբերական առավելությունների ու մասնագիտացման սկզբունքների հիման վրա փոքր ու միջին գործարարության զարգացումը:

Սոցիալական հարցը մարդու ազատության խնդիր է:

Միայն սոցիալապես ազատ եւ ապահովված մարդը կարող է կատարել ազատ քաղաքական ընտրություն եւ ծառայել իր երկրին ու ժողովրդին:

Մրցակցային կարգի հաստատումը մարդուն ազատում է ոչ միայն տնտեսական կարիքից, այլեւ պաշտպանում նրան իր ազատության նկատմամբ ոտնձգություններից:

Գերխնդիր է բացառել կամ նվազեցնել բոլոր ուղղություններով իրականացվող քաղաքականությունների բացասական սոցիալական հետեւանքները, ինչպես նաեւ ձեւավորել մարդու եւ քաղաքացու սոցիալական իրավունքների ամբողջական իրացման համակարգ:

Հիմնվելով սոցիալական արդարության հիմնարար՝ բոլորի համար հավասար հնարավորությունների երաշխավորման սկզբունքի վրա՝ առաջարկվող համակարգը կապահովի.

o մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող, համակողմանի զարգացած, ինքնակազմակերպման ընդունակ, հայրենասիրության եւ մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների կրթական իրավունքի իրացումը՝ ներառյալ որակյալ գիտելիքներ տվող, միջազգային չափանիշները լիովին բավարարող կրթական համակարգի ձեւավորումը, կրթության մատչելիությունն ու շարունակականությունը,

o երիտասարդների հիմնախնդիրների հետեւողական լուծումը, երիտասարդ քաղաքացիների համար աշխատանքային եւ ինքնադրսեւորման լայն հնարավորությունների ստեղծումը, կրթություն-գիտություն-արտադրություն հըստակ շղթայի իրագործումը,

o ազգային մշակութային քաղաքականության ոլորտում պատմամշակութային ժառանգության պահպանումն ու ներդաշնակ զարգացումը, հասարակության ու անհատի ստեղծագործ ներուժի բացահայտումն ու խրախուսումը, ինչպես նաեւ հայ մշակույթը համաշխարհային մշակութային գործընթացներում արժանապատիվ ներկայացնելը,

o զբաղվածության եւ եկամտաստեղծ գործունեության ակտիվ քաղաքականության իրականացումն ու արդյունավետ, զարգացած աշխատաշուկայի ձեւավորումը, որտեղ աշխատողները ապահովված կլինեն պատշաճ աշխատավարձով, առողջ, անվտանգ եւ ընդունելի պայմաններով աշխատանքով, իսկ գործատուները՝ անհրաժեշտ որակավորմամբ եւ մրցունակ աշխատուժով,

o բնակչության առողջության առաջնային, մոր եւ մանկան առողջության պահպանումը, մատչելի եւ որակյալ բժշկական օգնության, հիգիենիկ եւ համաճարակային անվտանգության, սոցիալական կախվածություն ու հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության, դեղորայքի բավարարման արդյունավետ կազմակերպումն ու հասցեականության բարձրացումը,

o սոցիալապես խոցելի խմբերին ու անձանց՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում լիարժեք ներգրավումը,

o բնակարանային պայմանների բարելավումը՝ ներառյալ նորաստեղծ երիտասարդ եւ բազմազավակ ընտանիքների, ինչպես նաեւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակարանային ապահովության իրավունքի ամբողջական իրացումը,

o պետության, գործատուների եւ արհեստակցական միությունների միջեւ գործընկերային հարաբերությունների հաստատումը:

Սոցիալական ոլորտում իրականացնելով համակարգային բարեփոխումներ՝ անհրաժեշտ է սահմանել եւ պարբերաբար վերանայել կենսապահովման նվազագույն զամբյուղն ու դրա մեծությունը, երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական ռազմավարական ծրագրերը վերածելով ըստ այդ մեծության:

Սոցիալ-տնտեսական կարգերի ակտիվ գործադրումը կապահովի աղքատության մակարդակի շեշտակի կրճատում ու տարածքային համաչափ զարգացում, ժողովրդագրական իրադրության բարելավում՝ ծնելիության մակարդակի աճ, մահացության մակարդակի նվազեցում, կյանքի տեւողության ավելացում, արտագաղթի կասեցում եւ ներգաղթի խրախուսում:

Մերժում եմ աղքատության խնդրի լուծումը բացառապես նյութականով պայմանավորելը: Հայաստանի քաղաքացին պետք է ապրի նաեւ լիարժեք հոգեւոր-մշակութային կյանքով: Միայն նման պարագայում մենք իսկապես կունենանք ժամանակակից բարիքներից լիարժեքորեն օգտվող, ժամանակի հետ համաքայլ ընթացող քաղաքացի:

ԲԱՆԱԿ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.

Երկրի անկախության, տարածքային ամբողջականության եւ անվտանգության ապահովման տեսանկյունից չափազանց կարեւոր է ժողովրդավարական վերահսկողության ներքո՝ քաղաքացիական տարրի մասնակցությամբ, մարտունակ զինված ուժերի կայացումը:

Անընդունելի է զինված ուժերի քաղաքականացումը, նեղ հատվածական շահերի հետապնդումը, որոնք հանգեցնում են բանակում տիրող բացասական բարքերի ձեւավորմանը եւ բանակից ժողովրդի խորթացմանը:

Հայաստանի Հանրապետության դեմ ցանկացած ոտնձգություն զսպելու, սահմանների պաշտպանունակությունը էլ ավելի բարձրացնելու համար, անհրաժեշտ եմ համարում անցկացնել նոր քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական եւ իրավական համալիր միջոցառումներ: Մասնավորապես.

o զինապարտությունը, պետություն-քաղաքացի նոր հարաբերությունների ձեւավորմամբ, պետք է ընկալվի եւ կիրառվի իբրեւ նախազորակոչային պատրաստության, պարտադիր զինվորական ծառայության եւ պահեստազորում գտնվելու ամբողջական շղթա,

o պարտադիր եւ պրոֆեսիոնալ ծառայությունների ճկուն համադրություն՝ պրոֆեսիոնալ սերժանտական կազմի ներդրմամբ,

o արտակարգ իրավիճակներում տնտեսության անհրաժեշտ զորաշարժային նախապատրաստության համապատասխանեցում տնտեսավարման շուկայական հարաբերություններին,

o սահմանամերձ տարածքների եւ ենթակառուցվածքների առաջանցիկ զարգացում՝ ռազմավարական նպատակներին համապատասխան,

o ռազմահայրենասիրական եւ գաղափարական դաստիարակություն: Երիտասարդը բանակ պետք է զորակոչվի ամբողջապես գիտակցելով իր առաքելությունը, իսկ ծառայությունից հետո վերադառնա որպես հասարակության լիարժեք, ակտիվ եւ առողջ անդամ,

o զինծառայողների, զոհվածների ընտանիքների, պատերազմի հաշմանդամների, վետերանների սոցիալական խնդիրների ամբողջական լուծում,

o զինված ուժերում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում՝ Հայրենիքին ծառայելու արժանավայել պայմանների ստեղծմամբ:

Անհրաժեշտություն է հայկական ռազմական մշակույթի ձեւավորումը: Բանակաշինության գործում պետք է հաղթահարել կարծրատիպերով առաջնորդվելու սովորությունը. կիրառել նոր մեթոդներ, համարձակ եւ անսպասելի լուծումներ, ինչը հնարավորություն կտա հաղթական խաղաղությամբ ավարտել մեզ պարտադրված պատերազմը:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անցած տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը գերազանցապես վարել է արտաքին թելադրանքներին արձագանքելու քաղաքականություն:

Այսօր՝ տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական տեղաշարժերի ծավալման ու խորացման պայմաններում, դերակատար տերությունները փորձում են ուղղորդել եւ հունավորել Հայաստանի արտաքին քաղաքականությունը իրենց սեփական՝ հիմնականում մեկը մյուսին հակադրվող շահերով՝ կաշկանդելով մեր դիվանագիտությունը Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացով:

Գերտերությունների դիմակայությունը տարածաշրջանում առաջացրել է օրեցօր սրվող մրցակցություն, հատկապես՝ հարավկովկասյան պետությունների միջեւ: Տարածաշրջանային մրցակցությունում հաղթելու համար ակտիվ եւ նախաձեռնողական արտաքին քաղաքականություն վարելն անհրաժեշտություն է եւ հրամայական: Այս պայմաններում հիշյալ ուժերի հետ փոխհարաբերությունները կառուցելու եմ մեր շահերի շուրջ համաձայնության հասնելու միջոցով:

Արդյունավետ մրցակցության համար ընթացող պայքարում սեփական ինքնությունն ու քաղաքական դիմագիծը պահպանելու, միջազգային թատերաբեմում Հայաստանն արժանապատվորեն ներկայացնելու համար մեր պետությունից պահանջվում է ուժերի գերլարում, կշռադատված, նախահարձակ ու պահանջատիրական արտաքին քաղաքականություն: Տարածաշրջանում եւ նրա հարեւանությամբ ընթացող քաղաքական եւ ռազմական իրադարձությունները, իրենց շահերը հետապնդող ուժային կենտրոնների դիմակայությունը եւ սպասվող աշխարհաքաղաքական տեղաշարժերն առավել եւս թելադրում են, որ արտաքին քաղաքականությունն ուղղված լինի հայ ժողովրդի կենսական պահանջներից բխող ռազմավարական խնդիրների իրականացմանը, մեր պետության զարգացմանն ու հզորացմանը:

Արտաքին քաղաքական հարաբերություններում անհրաժեշտ է առաջնորդվել բացառապես ազգային շահերով՝ առանց տուրք տալու այս կամ այն կուսակցության, սոցիալական դասի կամ պետական-քաղաքական գործչի մղումներին: Նման արտաքին քաղաքականություն վարելու անհրաժեշտ ենթահող կլինի երկրում քաղաքական եւ տնտեսական համակարգերի բարեփոխումը՝ հիմնված ժողովրդավարական եւ իրավական պետության հիմնարար սկզբունքների վրա:

Հայաստանի Հանրապետության ներքին կյանքում մեր առաջարկած համակարգային փոփոխությունները կապահովեն լուրջ նախադրյալներ ինչպես տարածաշրջանային քաղաքական եւ տնտեսական, այնպես էլ երկրի աշխարհաքաղաքական մրցունակության ապահովման համար: Հայաստանի առաջնահերթություններից է եվրոինտեգրման գործընթացների խորացումը՝ ապահովելով երկրի համապատասխանեցումը Եվրոմիության չափանիշներին:

Արցախյան հիմնախնդիրը Հայ դատի բաղկացուցիչ մասն է: Մինչեւ ազատագրված Արցախի կարգավիճակի միջազգային ճանաչումը՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է սատարի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային կապերի հաստատմանն ու զարգացմանը:

Հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցություններում պետք է ապահովել ԼՂՀ ուղղակի մասնակցությունը: Հիմնախնդրի կարգավորումը պետք է միանշանակորեն ընդունելի լինի Հայաստանի եւ Արցախի քաղաքացիների համար:

Թուրքիայի հետ հարաբերությունները մնում են չկարգավորված, քանի որ այս պետությունը շարունակում է Հայաստանի նկատմամբ իր թշնամական քաղաքականությունը եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, հայ-թուրքական սահմանը բացելու դիմաց նախապայմաններ է ներկայացնում: Երկկողմ հարաբերություններ կառուցելու նման ոճը անընդունելի է: Հայաստանը պետք է բարձրացնի Թուրքիայի թշնամական վերաբերմունքի, հայ-թուրքական սահմանի եւ Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության հարցերը միջազգային ատյաններում: Հայաստանի եւ Սփյուռքի համատեղ ջանքերով Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում վերջին տարիներին ձեռք բերված արդյունքները հիմք են տալիս այս ուղղությամբ աշխատանք կատարել նաեւ թուրք հասարակության հետ:

Մեր անմիջական հարեւանների՝ Վրաստանի եւ Իրանի հետ համագործակցության խորացումն ու ընդլայնումը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի համար:

Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների ձեւավորումը լավ հնարավորություններ կստեղծի Հայաստանի համար մի շարք առաջնային խնդիրների լուծման համար: Հայ-վրացական հարաբերությունները կարեւոր են

ինչպես տարածաշրջանում անվտանգության ապահովման եւ կայունության պահպանման, հարավկովկասյան երկրների եվրոինտեգրման գործընթացների խորացման, այնպես էլ երկկողմ փոխշահավետ համագործակցության եւ Ջավախքի հայության իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Հաշվի առնելով Ջավախքի առանձնահատուկ պայմանները եւ նման հարցերում միջազգային փորձը՝ Հայաստանը պետք է ջանք գործադրի հարեւան Վրաստանի հետ երկկողմ համաձայնագրեր կնքելու՝ Ջավախքի եւ հարակից շրջաններում ավանդաբար ապրող հայությանը տնտեսական, սոցիալական, քաղաքական եւ մշակութային կյանքի բոլոր բնագավառներում աջակցելու համար:

Իրանի Իսլամական Հանրապետությունը տարածաշրջանի ծանրակշիռ դերակատարներից է: Այս երկրի հավասարակշռված քաղաքականությունը նպաստում է Հարավային Կովկասում կայունության պահպանմանը: Հայաստան-Իրան հարաբերություններում էներգետիկ, առեւտրատնտեսական, տրանսպորտային հաղորդակցության բնագավառներում համագործակցության զարգացման լայն հնարավորություններ կան, որոնք թույլ են տալիս մշակել եւ իրականացնել ռազմավարական ծրագրեր:

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ

Հայաստանի Հանրապետությունը համայն հայության հայրենիքն է: Երկրի նախագահը կոչված է լինել ամբողջ հայության շահերի պաշտպանն ու երաշխավորը:

Հայության միասնականության եւ համախմբման համար ամենամեծ ազդեցությունը ունենալու են դրական այն տեղաշարժերն ու գործընթացները, որոնք պետք է կատարվեն Հայաստանի Հանրապետության հասարակական կյանքում: Հայաստանը պետք է դառնա հայ մարդու երազանքների երկիրը: Հայությունը պետք է համոզված լինի արդարության, իրավահավասարության սկզբունքների վրա հիմնված, բարոյական, ազգային եւ համամարդկային բարձր արժեքներով եւ ստեղծագործ աշխատանքային կյանքով ապրող հասարակություն ստեղծելու հարցում պետության վճռականության մեջ:

Հայաստանի Հանրապետության նախագահը պետք է հետամուտ լինի.

o Սփյուռքից Հայաստան ներգաղթի համալիր ծրագրի մշակմանն ու իրագործմանը,

o Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունների համագործակցությանը, ինչը չափազանց կարեւոր է ազգային հոգեւոր-մշակութային միասնականության տեսանկյունից: Հետագայում կարող են նախադրյալներ ստեղծվել Հայ Առաքելական եկեղեցին մեկ միասնական կառույցով օժտելու համար,

o Հայաստանի եւ Սփյուռքի տեղեկատվական միջոցների բազմակողմանի համագործակցությանը, համահայկական տեղեկատվական դաշտի ստեղծմանը,

o Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայերի մասնակցության խրախուսմանը եւ Սփյուռքից իրական ներդրումների ներգրավմանը:

Հայաստանի Հանրապետությունը, գործելով այլ երկրների հետ ունեցած միջազգային պայմանագրերի շրջագծում, ելնելով ազգային փոքրամասնությունների միջազգայնորեն ճանաչված կրթական-մշակութային իրավունքներից, պետք է նպաստի.

o հայկական համայնքների առավելագույն ինքնակազմակերպմանը եւ համայնքների միասնականության ամրապնդմանը՝ հայոց լեզվի, հայկական մշակույթի եւ կրթության հենքի վրա,

o հայկական քաղաքական, մշակութային եւ տնտեսական լոբբինգի հզորացմանը՝ ի շահ համազգային խնդիրների լուծման:

Հայաստան-Սփյուռք բարդ եւ բազմակողմանի հարաբերությունները կանոնակարգել, դրանց զարգացման դինամիկան ուսումնասիրել եւ ուղղորդել պետք է ինչպես պետական, այնպես էլ հասարակական մակարդակներով՝ հստակ սահմանազատելով դրանց խնդիրները եւ գործառույթները: Այս առումով կարեւորագույն քայլ կլինի Սփյուռքի եւ հայրենադարձության նախարարության ստեղծումը:

Հզոր, ժողովրդավար Հայաստանի եւ կազմակերպված Սփյուռքի միասնական ներուժը Հայոց պետությունն ու հայությունը աշխարհում առավել ազդեցիկ գործոն դարձնելու երաշխիքն է:

Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվելու դեպքում երաշխավորում եմ՝

o հասարակության մեջ բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, սոցիալական արդարություն եւ համերաշխություն,

o հասարակական լիարժեք կարգ ու կանոնի հաստատում, անպատժելիության վերացում,

o կադրերի ճիշտ եւ անաչառ ընտրություն, իրական պայքար կոռուպցիայի դեմ,

o արդար եւ անկաշառ դատական համակարգ,

o քաղաքական համակարգի ապաքրեականացում եւ ապաառեւտրայնացում, քաղաքական եւ բիզնես վերնախավերի տարանջատում,

o քաղաքական փոխհարաբերությունների նոր մշակույթ, իշխանություն-ընդդիմություն միասնական քաղաքական համակարգի ձեւավորում,

o պետության դերի վերաիմաստավորում՝ պասիվ բարեփոխիչից վերածելով երկրի կայուն զարգացման մասնակցի եւ պատասխանատուի,

o կայուն, բարձր եւ որակյալ տնտեսական աճ՝ սպառող հասարակությունից անցում արարող եւ արտադրող հասարակության,

o արտահանման ուղղվածությամբ արդյունաբերական քաղաքականության իրագործում,

o մրցակցային կարգի հաստատում, տնտեսական մենաշնորհների կազմացրում,

o գործարար եւ ներդրումային միջավայրի բարելավում՝ բացառելով բարձրաստիճան պետական պաշտոնյաների ուղղակի կամ անուղղակի ցանկացած միջամտություն,

o սեփականության իրավունքի եւ մտավոր սեփականության, սպառողների, ներդրողների, փոքր բաժնետերերի օրինական շահերի լիարժեք պաշտպանություն,

o չհիմնավորված մասնավորեցման եւ կոնցեսիոն գործարքների պայմանների վերանայում,

o ռազմավարական, այդ թվում՝ առաջին անհրաժեշտության ապրանքների (վառելիք, հացահատիկ, շաքար, դեղորայք եւ այլն) արտադրության, ներմուծման, ինչպես նաեւ ծառայությունների ոլորտում պետության մասնակցության պայմանների ու կարգի սահմանում,

o աշխատավարձերի, կենսաթոշակների, պետական նպաստների, բնակչության այլ եկամուտների շեշտակի աճ, աղքատության վերացում,

o զբաղվածության մակարդակի բարձրացում, ՀՆԱ-ում սոցիալական, կրթական, գիտական, մշակութային ոլորտներին ուղղվող միջոցների տեսակարար կշռի ավելացում՝ դրանք հասցնելով Եվրոմիության երկրների միջին ցուցանիշներին,

o տարածքային համաչափ եւ բազմակենտրոն զարգացում, ժողովրդագրական իրավիճակի բարելավում՝ բնական հավելաճի խրախուսմամբ եւ ներգաղթի կազմակերպմամբ:

Համոզված եմ՝ այս, ինչպես նաեւ 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների ՀՅԴ նախընտրական ծրագրի դրույթների իրականացման արդյունքում

o հասարակության յուրաքանչյուր անդամ ապրելու է արժանապատիվ՝ համերաշխ եւ ստեղծագործ մթնոլորտում,

o մեր երկիրը դառնալու է տարածաշրջանի գիտական, կրթական, մշակութային, ֆինանսական կենտրոն,

o շեշտակի բարձրանալու է Հայաստանի Հանրապետության միջազգային մրցունակությունը,

o մենք ունենալու ենք հեղինակավոր եւ հարգված պետություն. Հայաստանը դառնալու է ազդեցիկ գործոն տարածաշրջանում եւ աշխարհում:

Իմ նպատակն է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում համակարգային փոփոխությունների միջոցով, առողջ ուժերի աջակցությամբ կառուցել Ազատ քաղաքացիների Արդար երկիր: Հայաստանի անկախությունն ու ինքնիշխանությունը ինձ համար բացարձակ արժեքներ են: Միայն բոլորիս ուժերի մեկտեղումով կարող ենք մեր նախնիների երազանքին, մեզ ու մեր զավակներին արժանի հայրենիք ունենալ:

Ես ունեմ այդ նպատակն իրագործելու վճռականություն: Ինձ անհրաժեշտ է Ձեր քվեն ու վստահությունը:

ՎԱՀԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

"Դրօշակ" - ի հարցերին պատասխանում է << նախագահի թեկնածու Վահան Հովհաննիսյանը

«Դրօշակ» - Շատ իմաստուններ, մեծանուն արվեստագետներ, ճանաչված քաղաքական գործիչներ խոստովանում են, որ իրենք եկել են իրենց մանկությունից: Ասել է, թե մանկությունը անջնջելի հետք է թողնում մարդու կյանքում: Ասել է, թե մարդը հիմնականում ձևավորվում է մանկական տարիներին: Ի՞նչ եք դուք բերել ձեր մանկությունից:

Վ. Հովհաննիսյան - Իմ ձևավորված աշխարհայացքը, գաղափարախոսությունը ծնունդով իսկապես մանկությունից են. մարդկանց, հիմնականում հորս ու քեռուս հետ շփումներում են հասունացել: Եվ սերը դեպի գիրքը, և գիտելիքի արժևորման այն գիտակցությունը, որ դա ուժ է, հնարավորություն է, դա է, որ բարձրացնում է քեզ, նրանք են ներշնչել: Անշուշտ, կային նաև պապեր-տատեր, մայր, ընկերական շրջապատ... Բայց այդ երկուսը, որ այսօր կողքիս չեն... Եղավ ժամանակ, երբ նրանցից մեկը՝ հայրս, բացակայեց իմ կյանքից: Ես տասներորդ դասարանում էի, երբ նա գնաց երկրից, բայց դրսում լինելով, միևնույն է, ինձ ձևավորում էր: Այն փաստը, որ մարդ կարող է փայլուն կարիերայի ընթացքը, ընտանիքը, երեխաներին, վերջապես հայրենիքում ապրելու հնարավորությունը զոհաբերել գաղափարին, ինձ համար ինքնին դաս էր:

Քեռուս, մորս եղբոր ազդեցությունն այլ էր: Թեև հորս նման ընդգծված դիսիդենտ չէր, բայց պատկանում էր սովետական բարքերը չընդունող այլախոհների այն խավին, որոնք նեղ շրջանակի մեջ իրենց բողոքը, իրենց խոսքը դրսևորում էին սովետական ամբողջատիրության մեջ առանձին միկրոաշխարհ ստեղծելով: Քեռիս շատ ազատամիտ, շատ այսօրվա մարդ էր: Խորհրդային 70-ականների ճղճիմ տարիների համար նաև խիզախ էր քաղաքական առումով. բացատրում էր ինձ ու իմ ընկերներին սովետական համակարգի ողջ ապուշությունը և այդ ապուշությունից կախված



լինելու վտանգը: Իրականությունը ներկայացնում էր օրինակներով, գրքերով, պարզ զրույցներով, մի խոսքով, կենցաղս ձևավորելու մեջ նրա դերն իմ կյանքում շատ մեծ է եղել: Ընկերներս էլ են մինչև հիմա երբեմն նրա խրատներով խոսում, հիշելով մեր հասունացման միջավայրը:

Ընկերական շրջապատս ձևավորվել է կյանքիս տարբեր փուլերում, այդ թվում՝ դպրոցական տարիներին: Սովորել եմ այն ժամանակ էլիտար համարվող դպրոցում և հիմա եմ հասկանում «էլիտարության» իմաստը. այնտեղ իսկապես սովորեցնում էին: Պետք է խոստովանեմ, որ կարդացածս գրքերի զգալի մասը կապված է դպրոցական տարիների հետ, հենց այդ գրքերն են, որ հետագա գիտելիքներ ստանալու հիմք են ստեղծել: Գիտելիքը չէ՞ որ աստիճանաբար ես ստանում՝ չես կարող տասնմեկ տարեկան տղայի առաջ Դոստոևսկի շարել ու ասել. դե հիմա «Դևերը» կարդա:

«Դրոշակ»- էլիտար կոչվող դպրոցները, իբրև կանոն, ռուսական էին. շատերս ենք կրթվել ռուսալեզու գրականություն կարդալով: Հետո ռուսերենը հռչակվեց օտար լեզու և առաջացան որոշակի խնդիրներ ազգային պատկանելիության իմաստով: Ձեր՝ հայ լինելու ինքնագիտակցությանը դա երբևէ խանգարե՞լ է:

Վ. Հ.- Կրթությունս, այո, ռուսական է: Գիտելիքների ձեռք բերումը կատարվել է ռուսերենի ճանապարհով: Հիմա, եթե խոսենք օտար լեզուների առումով, կարդում եմ նաև անգլերեն, իսկ ժամանակին գերմաներեն էլ գիտեի, հետո, ցավոք, չօգտագործվեց ու մոռացվեց: Ռուսերեն կրթվելու համար որոշակի պատճառներ կային, որոնց հետ, եթե ուզում էիր մոլորակի հետ առնչվել, հաշվի չնստելն առնվազն տգիտություն կլիներ. համաշխարհային գրականության լավագույն նմուշները հայերեն թարգմանվում էին ռուսերենից: Իսկ այդ դեպքում՝ եթե ռուսերենդ հայերենից պակաս չէ, էլ ինչո՞ւ պետք է կարդաս թարգմանության թարգմանությունը, որն, իբրև կանոն, ավելի վատն էր, քան ռուսականը: Իհարկե, նախընտրում ես բնագրից արվածը: Շատ հազվադեպ ու շատ ավելի ուշ կարող էիր հանդիպել, ասենք, Ռուբեն Հովսեփյանի՝ Մարկեսի մի այնպիսի թարգմանության, որի հայերենով բացահայտվեր բնագիրը... Իսկ մեծ մասամբ հայոց թարգմանչական դպրոցը, կարծում եմ, խորհրդային ժամանակաշրջանում ընդհատում ապրեց: Թերևս կային պոեզիայի փայլուն թարգմանությունների նմուշներ, բայց ոչ արձակի: Դա էր պատճառը, որ հասարակության կարդացող շերտը և ես՝ այդ թվում, ավելի շատ կրթվել ենք ռուսալեզու գրականության հիման վրա:

Ինչ վերաբերում է ազգային պատկանելիության ինքնազգացումիս, ապա ինձ համար լեզուն չէր այնքան կարևոր, որքան ընտանիքում ազգայինի կարևորումը: Մեր տանը, հավաքների ժամանակ, նույնիսկ խորհրդային տարիներին, իբրև ընտանեկան լեգենդ, հիշատակվում էին պատմություններ, որոնք դրոշմվում էին գիտակցությանս մեջ: Օրինակ, թե ինչպես էր տատս տասնհինգ թվականի մայիսի քսանութին՝ Առաջին հանրապետության առաջին տարեդարձի օրը էջմիածնում կազմակերպված մեծ ժողովրդական տոնախմբության ժամանակ, հրացանից կրակելու մրցույթը հաղթելով, սպիտակ ձի շահել: Կամ՝ ինչպես էր նրա հայրը, որն էջմիածնում հարուստ կալվածատեր է եղել – հիմա, ի դեպ, նրանց տունը մանկապարտեզ է – փետրվարյան ապստամբությանը մասնակցելով, Նժդեհի հետ գնացել է Իրան, տանելով և որդիներին, որոնք հայկական բանակի սպաներ էին: Թե ինչպես տղաներից երկուսը փորձեցին Նախիջևանով վերադառնալ՝ արդեն բոլշևիկյան Հայաստանից կանանց դուրս բերելու համար, բայց բռնվեցին: Մեկը՝ Վարդգեսը հաջողեց փախչել և հետագայում հայտնվեց Բաքվում, մյուսին՝ Խորենին, որը կապիտանի կոչում ուներ, գնդակահարեցին:

Հորական կողմի ազգականներս իգդիրցիներ են, ապրել են Դրոյի հետ նույն փողոցի վրա, հարևանություն են արել: Պարզ է, չէ՞, թե ինչ քաղաքական հայացքներ պետք է դավանեին: Պապս, որ ավելի վաղ էր տեղափոխվել Երևան, հաճախ երգում էր Նժդեհի մասին երգը, որը մինչև հիմա իմ սիրած հեղափոխական երգերից է:

Այնպես որ հայ լինելու գիտակցությունը, որ սերնդե

սերունդ էր գալիս, մեր տանը շատ տիրական էր և պայմանավորված նրանով, որ նախնիներս կիրթ մարդիկ են եղել, օրինակ՝ մորս կողմը սկիզբ է առնում գեներալ Տեր-Ղուկասովից, բայց, իհարկե, բոլոր փաստաթղթերը Թիֆլիսում հասցրել են ոչնչացնել, որպեսզի ազնվական ցեղի մասին ոչ մի տեղեկություն չմնա ու ընտանիքը չկործանվի: Իսկ երբ տատիս եղբորը, որն Առաջին համաշխարհայինի ժամանակ Ավստրիական ճակատում է կռվել, հասնում է Հայաստանի անկախության լուրը, նա՝ բոլշևիկներին չծառայելու հնարավորությունից ոգևորված, ջոկատն առած վերադառնում է հայրենիք, որ միանա Հայոց բանակին: Փորձ է անում անցնել Կովկասյան լեռները, Ռուսաստանի տարածքը, խառնվել սպիտակգվարդիականներին, բայց արդյունքում բոլորը զոհվում են, ըստ երևույթին, ընկնում են չեչենների կամ ադրբեջանցիների դարանը:

Ես ունեմ նաև այլ կարգի շատ հետաքրքիր ազգականներ. օրինակ, տատիս ամենափոքր եղբայրը՝ Զավենը ջազի հիմնադիրներից էր: Ապրում էր Սոչիում, որովհետև Հայաստանում ջազն ավելի էր հետապնդվում, քան, ասենք, ծովափնյա քաղաքներում, և առաջին սաքսոֆոնիստը հենց Զավենն էր, որի շառավիղներն, իհարկե, կան, բայց ապրում են Արխանգելսկում: Այսինքն, ինչպես և շատ ու շատ հայկական ընտանիքներ, մենք էլ ենք աշխարհասփյուռ վիճակի մեջ, բայց ազգականներիցս յուրաքանչյուրն իր բաժին ներ-դրումն ունեցել է հայության իմ ինքնազգացողության մեջ:

«Դրոշակ» - Իսկ որքանո՞վ են ազգային պատմությունն ու մշակույթը նպաստել այդ ինքնազգացողության զարգացմանը:

Վ. Հ. - Պատմություն ես միշտ սիրել եմ, նույնիսկ դպրոցական առարկայի տեսքով՝ բացարձակ հինգի գիտեի: Դա ինձ չէր խանգարում վիճել ուսուցիչների հետ դասագրքերի բովանդակության շուրջ՝ թե դպրոցում, թե ինստիտուտում, իսկ լրացուցիչ գրականության ուսումնասիրումը օգնում էր ավելի վստահորեն պաշտպանել սեփական տեսակետը: Հետո, երբ ես արդեն ամուսնացած էի ու լրացուցիչ փող էր հարկավոր, մասնավոր դասեր էի տալիս, և աշակերտներս միշտ փայլուն գնահատականներով էին ընդունվում համալսարան նաև այն պատճառով, որ փորձում էի սովորեցնել ավելի խորը սուզվել առարկայի մեջ: Ես ասում էի. այ, տես, իրականում այսպես է եղել, դու սա մտքումդ պահիր, բայց պատասխանիր այնպես, որ պատասխանդ ընդունվի: Այսինքն, եթե դու խելացի մարդ ես, սուտը վաղ թե ուշ կբռնես, հո չե՞ս կարող սովետական պոլիտէկոնոմիայի դասագիրքը կարդաս ու բավարարված տեղիցդ վեր կենաս: Նշանակում է, կսկսես որոնել: Բայց եթե քեզ չօգնեն, կարող ես և չգտնել, չէ՞: Իսկ քանի որ այդ իմաստով ես լավ գիտեի, թե ինչ էր իրականում կատարվել պատմության այս կամ այն հատվածում, նաև պատմաբան քեռուս շնորհիվ, ուրեմն պարտավոր էի մյուսներին էլ օգնել:

Զարգացման ճանապարհը միայնակ անցնելը շատ դժվար է: Ես մենակ չէի: Մեր տանը հավաքվում էին ծնողներիս ընկերները՝ հայ, ռուս, հրեա, փայլուն գիտնականներ, շինարարներ, ինժեներներ, որոնց հետ որոշակի տարիքից սկսած ես անհատապես էլ էի շփվում: Շատ էի նրանց սիրում, մինչև հիմա էլ սիրում եմ, թեև շատերն արդեն չկան:

Եվ իհարկե մեծ դեր է ունեցել մայրս՝ թերահավատական իր աշխարհայացքով: Այն իմաստով թերահավատ, որ ամեն կերպ հակազդում էր պետական՝ ուղեղ պղտորող քարոզչական մեքենայի ներխուժմանն իր ընտանիք: Երբ հայրս գնաց, մեզնից անմիջապես սկսեցին պահանջել, որ փոխենք մեր ազգանունն ու, առհասարակ, հրաժարվենք նրանից: Շատ երկար ժամանակ էին հետապնդում: Ֆիզիկապես, իհարկե, չէին խոշտանգում, բայց հատկապես մորս տարբեր տեսակի ակնարկների միջոցով, խորհուրդ էին տալիս բաժանվել ու մաքրել իր երեխաների ճանապարհը դեպի պայծառ ապագա: Մայրս այդ բանը չարեց, թեև նրա համար

շատ դժվար էր՝ երեք երեխա ձեռքին, կրտսեր եղբայրս դեռ երկու տարեկան էր, ես դպրոցն էի ավարտում... Մայրս կարողացավ շրջափակել մեզ արտաքին ճնշումներից և նրա պահվածքն այդ իրավիճակում՝ էլի մի դաս էր իմ զարգացման ճանապարհին:

«Դրօշակ»- Կարելի՞ է ասել, որ այդքան դասեր ստացած ու գաղափարապես կոփված մարդը պատրաստ էր այն իրադարձություններին, որ տեղի ունեցան. ԽՍՀՄ-ի փլուզում, Հայաստանի անկախություն, Արցախյան շարժում, Դաշնակցության մուտք: Դուք հոգեպես պատրա՞ստ էիք:

Վ. Հ.- Եթե որևէ մեկը ձեզ ասի, որ պատրաստ էր՝ սուտ կասի: Ոչ ոք էլ պատրաստ չէր: Սկսած Միխայիլ Սերգեևիչ Գորբաչևից, վերջացրած «Ղարաբաղ» կոմիտեով, Ռոբերտ Քոչարյանով, ինձնով ու բոլորով: Այս մասշտաբի կոլապսին պատրաստ չեն լինում: Որովհետև նույնիսկ պերեստրոյկայի տարիներից կոլապսի հոտ չէր փչում: Անհրաժեշտ փոփոխությունների, բարեփոխումների կարիք և այդ բարեփոխումներն ուղղորդելու ցանկություն շատերն ունեին, բայց որ կատարվելու էր այն, ինչ կատարվեց, ոչ ոք չէր սպասում: Եվ մանավանդ, որ կատարվածը փոխելու էր կյանքիդ ուղղությունը:

Անձամբ ես երբեք չեմ ձգտել քաղաքական կարիերայի՝ գիտնական էի ու ինձ բավարարված էի զգում: Հիմա արդեն կլինեի, ենթադրենք, հնագիտության ինստիտուտի տնօրեն, երևի դոկտոր, պրոֆեսոր, կդասավանդեի, այդ թվում՝ արտասահմանում, քանի որ հրավերներ ստացել եմ... Կապրեի լիարժեք, գիտնականին վայել կյանքով: Երևի: Ես արժևորում էի աշխատանքս, չէ՞ որ այդքան հեշտ չեմ դարձել պատմաբան: Սկզբից մտադիր էի ընդունվել պատմության ֆակուլտետ այստեղ, Երևանում, բայց հորս վաղեմի ընկեր Կարեն Դեմիրճյանի կինը խորհուրդ տվեց մորս, որ այդ ճանապարհով չգնամ, որովհետև պատմությունը այսպես կոչված նոմենկլատուրային մասնագիտություն էր՝ կուսակցական ղեկավարներին հիմնականում այդ բաժնից էին ընտրում: Ու ես գնացի Մոսկվա, քանի որ Մոսկվայում, իբրև կայսրության կենտրոն, շատ ավելի հեշտ էին նայում այս տեսակ բաներին: Հետո ծառայեցի նաև բանակում, թեև, խոստովանեմ, որ բանակից խուսափելու համար պատրաստ էի ուսումն ավարտելուն պես աշխատել որևէ հայկական խուլ գյուղում, բայց ինձ ասացին. դու ՌՍՖՍՌ-ի կադր ես, պիտի գնաս աշխատելու մեր նշանակած ռուսաստանյան վայրում: Ու հանձնեցին ուղեգիրս, որտեղ նշված էր Սիբիրի տայգաներում կորած Երոֆեյ Պավլովիչ անվանումով մի քաղաք: Երոֆեյ Պավլովիչը՝ Խաբարովի անունն էր: Փաստորեն կար առանձին Խաբարովսկ քաղաք և առանձին՝ Երոֆեյ Պավլովիչ: Ես չգնացի... Երբեմն մտածում եմ. ինչպես կդասավորվեր իմ հետագա կյանքը, եթե այնուամենայնիվ գնայի... Ինչևէ: Բանակից վերադառնալուց հետո պատմության ֆակուլտետի ղեկավարներին հայտնեցի, որ ուզում եմ զբաղվել հայ միջնադարով: Պատասխանն էլ էր բնորոշ. գիտես, դու, լավ կլինի, մի այնպիսի ժամանակահատված վերցնես, որտեղ մարքսիզմ քիչ կա: Այսինքն, դասակարգային պայքար ու նման բաների հետ գործ չունես, որովհետև վիճելու ես, քո դեմ լարելու ես, պրոբլեմների առաջ ես կանգնելու... Ես էլ ընտրեցի բրոնզե դարի հնագիտությունը, որի համար բացարձակապես չեմ զղջում, մի քիչ էլ բախտ ունեցա ու հետաքրքիր պեղումներ կատարեցի, գյուտեր, հայտնագործություններ... Ու հիմա ափսոսում եմ միայն, որ ամբողջ նյութը չեմ հասցրել մշակել, մտադրություններս՝ իրագործել: Անելիք շատ կար:

«Դրօշակ» - Գուցե այդ դեպքում հակառա՞կն է ստացվել՝ ոչ միայն պատրաստ չէիք, այլև ցնցման նման մի բան եք ապրել:

Վ. Հ.- Չէ, ցնցում, իհարկե, չեմ ապրել: Պարզապես դրա

ժամանակը չկար, որովհետև հենց սկզբից եկավ որոնումների փուլը՝ ինչպե՞ս պետք է դուրս գանք ստեղծված իրավիճակից: Գիտակցո՞ւմ ենք, ի վերջո, միասնական շահն ինչ բան է, թե՞ չենք գիտակցում: Հետո վրա հասավ երկրաշարժը ու ամեն ինչ փոխվեց: Գլխումդ միայն մի միտք էր. կամ դու տեր ես կանգնում ազգիդ ճակատագրին, կամ ի՞նչ ես առհասարակ այստեղ անում: Նույնն էլ վերաբերում էր Արցախյան շարժմանը: Երբ տեսա, թե մեր ժողովուրդն ինչ վիճակում է մտադիր գնալ հայրենիք պաշտպանելու՝ թեկուզ և մեծ պոռթկումով, բայց բացարձակապես անպատրաստ, ինչի հետևանքով այդ պոռթկումն էլ հնարավոր չի լինի իրականացնել, հասկացա, որ պետք է այդ ամենը կազմակերպել: Բանակում ծառայել էի չինական սահմանի վրա, որտեղ ամեն ինչ սովորեցնում էին, ուրեմն ես էլ էի պարտավոր փոխանցել սովորածս: Այդ պահին եկավ Դաշնակցությունն ու դուռս ծեծեց: Հասկացա նաև, որ սովորեցնելն արդեն բավական չէ՝ ինքս պետք է գնամ: Այ, գնալուն՝ հաստատ պատրաստ էի, որովհետև նույնիսկ շարժման սկզբնական փուլում ռոմանտիզմով չտարվեցի. Գորբաչևին հղված նամակները, ցույցերը, հացադուլները, որոնք ինքնին շատ գրավիչ էին, քանի որ ո՞վ էր երբևէ նման բան տեսել, ինձ այնուամենայնիվ չգրավեցին: Ինձ համար շատ հստակ էր, որ կռիվն անխուսափելի է: Այդպես չի լինում՝ խնդրեցիր – տվեցին:

«Դրոշակ»- Իսկ ինչո՞ւ Դաշնակցություն: Որովհետև՝ հայր, թե՞ էլի ինչ-որ բան կար:

Վ. Հ.- Եվ որովհետև՝ հայր, և որովհետև՝ էլի բան կար: Հայրս ուղղությունը ցույց տվեց. այ էս տղերքն են, որ փորձն էլ ունեն, ուժն էլ, կազմակերպված էլ են: Հենց սրանց մասին էինք խոսում տարիներ առաջ, հենց սրանց էինք սպասում...

Ու թեև սպասածդ, մանավանդ եթե երկար ես սպասել, միշտ էլ հեքիաթի է նման, ինչը կյանքում սկսում է կամաց-կամաց մարել, այնուամենայնիվ, իրականության վերածվելով ավելի հետաքրքիր է դառնում: Հատկապես, երբ դու դրան մասնակից ես: Մի կողմից՝ սարսափում ես, հանկարծ մտնելով հարյուրամյա կենսագրություն ունեցող կուսակցության կենտրոնական կոմիտե, մյուս կողմից՝ հպարտություն ես ապրում ու ահռելի պատասխանատվության զգացում: Գլխումդ միակ հարցը, որ թրթռում է. հո իմ վրա չի՞ վերջանալու այսպիսի մի պատմություն... Դա տղամարդկային պատասխանատվության ու պարտականության չափանիշ էր՝ էլ ո՞վ, եթե ոչ ես: Կարելի էր, իհարկե, ամեն ինչից ձեռք քաշել, այլ ճանապարհ ընտրել, թողնել, հեռանալ ու ապրել ֆինանսապես, ֆիզիկապես կիսաստվածի նման: Բայց այդ կյանքում ես չէի ունենա հոգեկան հանգստություն: Հիմա էլ չունեմ, բայց սա՝ այլ տեսակի անհանգստություն է: Սա ավելի բացատրելի ու ավելի մարդկային անհանգստություն է, իսկ եթե գնայի՝ պարզապես կմեռնեի:

«Դրոշակ» - Իսկ ի՞նչ է ապրում մարդը, երբ նման հույզերի, քայլերի, զոհաբերությունների արդյունքում հայտնվում է բանտում: Ի՞նչ է խլել ձեզնից բանտն ու ի՞նչ է տվել:

Վ. Հ.- Ֆիզիկապես բանտը խլեց իմ կյանքից համարյա երեք տարի: Խլեց երեխաներիս հասունացման կարևորագույն ժամանակաշրջանում նրանց կողքին լինելու հնարավորությունը: Եվ շատ ուրիշ հնարավորություններ, որոնցից մի մասն այլևս չես վերադարձնի: Առաջացան նաև որոշակի առողջական պրոբլեմներ, բարեբախտաբար, ոչ այնքան լուրջ:

Բայց բանտը ոչ միայն ինձնից խլեց: Ոչ միայն ընկերներից: Խլեց նաև ժողովրդից. արժանապատվության ու սեփական ուժերին ապավինելու հույսը խլեց: Շատերն այդ պահին վախեցան: Կուսակցության մասին չէ խոսքս՝ կուսակցությունը դիմացավ: Խոսքս հասարակության այն շերտերի մասին է, որոնք քաղաքական առումով ձգտումներ ու իղձեր ունեին՝ նրանք մի կողմ քաշվեցին: Մեր ձեր-

բակալուսից հետո ու բանտարկության տարիներին, նույնիսկ, արտագաղթի տեսակը փոխվեց, վերածվեց քաղաքականի: Շատերին թևաթափ արեց այն միտքը, որ մեր երկրում որևէ բան փոխել չի լինի: Տնտեսական հիասթափության դեպքում մարդը ժամանակ հետո ընդունակ է վերականգնել հավատը, իսկ քաղաքական հիասթափության պատճառով գնացածները շատ հազվադեպ են վերադառնում երկիր:

Այնուամենայնիվ, ես իմ երեք տարվա մենությունը միանշանակ կորուստ չեմ համարում: Ձեռքբերումներ էլ եղան. օրինակ, ծխելը թողեցի: Անգլերեն լեզվին տիրապետեցի: Սկզբնական շրջանում գրքեր չէին տալիս, հետո կամաց-կամաց ահագին գրականություն կարդացի... Բանտը նաև մտածելու ժամանակ է տալիս: Արած-չարածներդ վերանայելու հնարավորություն: Առհասարակ բանտում իրեն շատ վատ է զգում այն մարդը, որի համար հասարակական կյանքից բացի ուրիշ բան չկա: Բանտում ամենասարսափելի տեղը համարվում է մենախուցը, իսկ ինձ համար այնտեղ հայտնվելը տոն էր: Ինձ պետք չի եղել ինչ-որ մեկի հետ խոսել հոգեկան բավարարվածություն ստանալու համար, հակառակը՝ դու ես, քո մտքերը, քո գրքերը, քո հիշողությունները...

«Դրոշակ»- Իսկ պահեր եղա՞ն, երբ զղջացիք, որ քաղաքական կյանք եք մտել:

Վ. Հ.- Հիասթափության պահեր լինում էին, բայց ոչ այն պատճառով, որ իբր սխալվել եմ: Եթե կային սխալներ, դրանք մարտավարական էին, բայց ռազմավարությունը, հո, գիտեի, որ ճիշտ էր: Ու գիտեմ, որ իմ մեջ ոչինչ չի փոխվել: Պարզապես քայլերս եմ վերանայել, որպեսզի հասկանամ՝ որ պահին եմ վրիպել: Պատժի գաղափարը պարտադիր չէ, որ մեղքի հետևանք լինի, ճիշտ լինելու դեպքում էլ կարող ես պատժվել, եթե սխալ ես քայլել: Համենայն դեպս, բանտարկված ժամանակ երբեք չեմ մտածել. վայ, ես ինչ արեցի, ինչու մտա այս խաղերի մեջ, էլ չեմ անի...

«Դրոշակ»- Իսկ հակառակը մտածե՞լ եք: Նկատի ունեմ վրեժխնդրության գաղափարը: Օրինակ, ասում են, որ Մայիսյան խռովության ղեկավար Մուսայելյանի դռնփակ դատավարությանը ներկա է լինում նաև Ռուբեն Տեր-Մինասյանը: Նրան դուր է գալիս բոլշևիկ առաջնորդի տղամարդկային պահվածքը: Համակրանքը մի կերպ թաքցնելով, հարց է տալիս՝ ինչպե՞ս կվարվեր Մուսայելյանը, եթե խռովությունը հաղթանակեր և ինքը՝ Ռուբենը ընկներ հաղթողների ձեռքը: «Ես անմիջապես կգնդակահարեի ձեզ», - պատասխանում է Մուսայելյանը...

Վ. Հ.- Ոչ էլ հակառակն եմ մտածել. հիմա դուրս կգամ ու դրանց աչքերը կհանեմ: Վրեժխնդրության պահանջ երբեք չեմ ունեցել ու հիմա էլ չունեմ: Այդ ռեժիմի ու դրա ղեկավարների նկատմամբ պարզապես գարշանք եմ զգում: Իսկ վրեժխնդրությամբ առհասարակ պետություն չես կառուցի. վենդետան իր ետևից վենդետա է բերում, և այդպես շարունակ... Պատահական չէ, որ Իտալիայի անկախությունը Սիցիլիայից չի սկսվել...

Ի վերջո, Տեր-Պետրոսյանի դեմ շարժումը հաղթեց: Ուրիշ բան է, որ անմիջապես իր նկատմամբ պետք է արվեին որոշակի քայլեր. գահընկեցությունից հետո սահմանադրական ժողովը պետք է որոշեր նրա քաղաքական նոր կարգավիճակը, որից հետո արդեն ձևավորված լեգիտիմ իշխանությունը քննություն անցկացներ: Դա մեր խնդիրը չէր: Մենք տեսնում էինք երկիրը թալանչիներից, ապազգային տարրերից ազատագրելու նպատակը, որն, ի դեպ, բոլորովին չէր ենթադրում իշխանության գալու պարտադիր պայման: Այն ժամանակ կային, հիշում եմ, հնգյակների, վեցյակների բլոկներ, հանրապետականները սկզբից մեզ հետ էին, հետո Լևոնի հետ ինչ-որ ձևով լեզու գտան, Վազգեն Մանուկյանը նշանակվեց պաշտպանության նախարար... Մի խոսքով, Լևոնին հաջողվեց քայքայել ընդդիմադիր միասնությունը՝ մեկին կաշառեց, մեկին համոզեց, իսկ մեզ՝ քանի որ ոչ կաշառել էր կարելի, ոչ էլ համոզել, փորձեց ջարդել: Բայց ի՞նչ շահեց. մեզ չջարդեց, իսկ ինքը պարտվեց:

«Դրոշակ»- Եվ այնուամենայնիվ չպատժվեց: Հետն էլ այնքան ոգևորվեց, որ այսօր նորից ընտրությունների է մասնակցում:

Վ. Հ.- Սա իսկապես մեր հասարակության հիվանդության հետևանք է: Երբ իշխանափոխությունից, ավելի ճիշտ՝ մասնակի իշխանափոխությունից հետո մենք դրեցինք քաղաքական գնահատականի և դրանից բխող իրավական և այլ գնահատականների վերաբերյալ հարցը, ներկա նախագահի կողմից ըմբռնում չգտանք: Հենց դա է, որ բացահայտում է իշխանափոխության մասնակի լինելը: Բոլոր նրանք, ովքեր Լևոն Տեր-Պետրոսյանի հետ աշխատել են, մնացին շատ ուժեղ դիրքերի վրա: Եվ ի՞նչ եղավ. փոխվեց միայն նախագահը: Իրական իշխանափոխության դեպքում նա-

խագահի կողմից - իսկ դրա մասին մենք դեռ այն ժամանակ էինք խոսում – տրամաբանական կլիներ ճահճացած խորհրդարանի լուծարումը և նորի կազմավորումը: Եվ Հայաստանում բոլոր գործընթացներն արդեն ուրիշ կերպ կընգնային: Բայց Ռոբերտ Քոչարյանը չկարողացավ դա անել: Արդյունքում յուրաքանչյուր հաջորդ խորհրդարանում ավելանում էին ճահճային տարրերը:

«Դրօշակ»- էլ ինչո՞ւ էիք մտնում կոալիցիա:

Վ. Հ.- Կոալիցիայի մեջ մտնելը սխալ չեմ համարում, թեև շատ-շատերը այդ քայլը որպես սխալ ընկալեցին, շատ շատերին այդ քայլը նույնիսկ հիասթափեցրեց: Իրականում մենք մի քանի խնդիր էինք լուծում ու պետք է ասեմ, որ նպատակին հասանք:

Առաջին. չնայած բոլոր թերություններին, երկրի քաղաքական, տնտեսական վիճակի մեջ տեղի ունեցան որոշ դրական փոփոխություններ:

Երկրորդ. մենք ապահովեցինք երկրի կայունությունը, որն ուղղակիորեն կապված էր Արցախյան հարցի շուրջ մեր տեսակետը առաջ տանելու հետ: Ի վերջո, հենց մեր մոտեցումների շրջանակում էր հիմնականում ձևավորվել Քոչարյան-Օսկանյան արտաքին քաղաքականությունը, դրա գլխավոր ուղղվածությունը: Այդ ժամանակահատվածում էր, որ ցեղասպանության ճանաչման հետապնդումը բարոյականության խնդրից վերածվեց քաղաքականության խնդրի: Եվ սա մեծ հաջողություն է:

Մենք պաշտպանել ենք Քոչարյանին ու կոալիցիա մտնելու տրամաբանությունը դրա մեջ էր, կոալիցիայի ստեղծումն էլ դրա արդյունքն էր: Իսկ հիմա կոալիցիայի մեջ չենք, որովհետև Քոչարյանը շուտով նախագահ չի լինելու:

«Դրօշակ»- Իսկ արդյո՞ք տոտալիտար ռեժիմի ախտանշան չէ այն հանգամանքը, որ ազգային խնդիրներն առաջ տանելու համար դու պարտադիր պետք է իշխանության մաս կազմես:

Վ. Հ.- Դա հետխորհրդային բոլոր հասարակությունների ախտանշանն է: Դաշնակցության համար պարզ էր, որ մեր երկրում, ցավոք, ընդդիմություն հասկացությունը, գուցե արհեստականորեն ու միտումնավոր, միշտ նետվում է բարիկադից այն կողմ: Մենք չենք հասել եվրոպական այն գիտակցությանը, որ ընդդիմությունը պետական կառույցի մաս է ու պետք է դիտվի իբրև որոշումներ կայացնող տարր: Բնականաբար, դա տոտալիտարի հետևանք է, բայց մենք չենք կարող անտեսել իրականությունը, մանավանդ եթե մտադիր ենք բարեփոխումներ իրականացնել ու քաղաքականության վրա մեր ազդեցությունը թողնել: Այո, ինչ-որ տեղ դա պարտադրված քայլ էր, մենք գիտակցում էինք, որ ինչ-որ բան զոհաբերում ենք, պատրաստ էինք որոշ դեպքերում ավելի զուսպ լինել, քան ցանկալի էր: Որովհետև կային շատ շատ ավելի կարևոր նպատակներ, քան սեփական ամբիցիաներն են: Եվ վերջապես, դու չես կարող հաշվի չնստել ռեալ իրավիճակի հետ: Մեր պարտությունն անցյալում ռեալ իրավիճակի հետ հաշվի չնստելու հետևանք էր, որից մեծ դժվարությամբ դուրս եկանք:

«Դրօշակ»- Քաղաքական հասունությունը միայն սեփական փորձո՞վ է ձեռք բերվում, թե՞ օրինակներով ևս: Համաշխարհային կամ դաշնակցական քաղաքական առաջնորդների մեջ կուռքեր ունե՞ք:

Վ. Հ.- Ոչ, կուռքեր չունեմ: Մեծագույն հարգանք է ներ-

շնչում, թերևս, Դը Գոլը: Ձախջախված պետություն դարձած Ֆրանսիան կարողացավ մեծ տերության կարգավիճակի հասցնել: Երբ ստեղծում էր Ազատ Ֆրանսիա շարժումը, նրան սկզբից լուրջ էլ չէին ընդունում, բայց նա, օկուպացիայի տակ լինելով, կարողացավ այնպես իրեն պարտադրել, որ դաշնակիցները հարաբերվում էին նրա հետ իբրև հավասարազոր պետության ղեկավարի: Որովհետև Դը Գոլը Ֆրանսիայի բռնազավթված տարածքի հարավում հաջողեցնում էր ղեկավարել պարտիզանական շարժումը: Նա փրկեց իր երկիրը ստորացումից: Սովորական մարդուն դա չէր հաջողվի:

«Դրօշակ»- Իսկ որքանո՞վ է դեմոկրատական արժեքների ձգտող առաջնորդին օգնում ինքը՝ դեմոսը: Արդյո՞ք հասարակությունն իսկապես դերակատար է պետության զարգացման ճանապարհին:

Վ. Հ.- Նայած ինչ հասարակություն է: Դը Գոլի ժողովուրդը՝ այո, մերը՝ դեռ ոչ: Որովհետև մեր ժողովուրդը դեռևս ազգ դառնալու ճանապարհին է: Ժողովրդի ու ազգի տարբերությունը մեծ է: Ժողովուրդն այն է, ով այսօր է ապրում: Ազգը՝ պատմական ժառանգության հետևորդն է, միաժամանակ՝ նախնին: Ժառանգորդ է նրանց, ովքեր մեռել են, ովքեր գրքեր, կամուրջներ, եկեղեցիներ, հիշողություններ են թողել, և նախնին է նրանց, ովքեր դեռ չեն ծնվել: Այսինքն, շղթայի մեջ ժողովուրդն այսօրվա օղակն է: Եթե ժողովուրդն իրեն շղթայի մեջ չի պատկերացնում, ուրեմն պարզապես գոյատևում է:

Հիմա մեր ժողովուրդը գոյատևման փուլի մեջ է: Ինչո՞ւ ենք մենք գնում ընտրությունների այսպիսի վճռականությամբ: Որովհետև ուզում ենք ուղղորդել ժողովրդին դեպի զարգացման ճանապարհ: Գոյատևումը աղքատի, չքավորի հոգեբանություն է. որքան ուզում ես նպաստները բարձրացրու, հազար դոլար տուր, միևնույն է՝ եթե դա նպաստ է, այդ մարդը մնում է ստրուկ: Իսկ ստրուկը ազատություն չի ուզում, ստրուկը ուզում է ինքն էլ ստրուկներ ունենա: Ահա այս հոգեբանությունն է, որ պիտի մեր ժողովրդի միջից հանենք: Դժվար ճանապարհ է, բայց ազգ լինելու ավանդույթը, ազատագրական ձգտումը, բնատուր խելքը մեր ժողովրդին, այնուամենայնիվ, հնարավորություն տալիս է համեմատաբար անցավ կտրել այս ճանապարհը: Եթե, իհարկե, առաջին հերթին դրան նպաստի երկրի նախագահը: Դա է նրա հիմնական պարտավորությունը: Իսկ ժողովրդի պարտավորությունն է մտքից հանել հետևյալ բանաձևը, ըստ որի անկախությունը համարժեք է արդարությանը: Հազարամյակներով անկախությունից զրկված ժողովուրդը արդարության ծարավ է ունեցել ու կապել է մեկը մյուսի հետ. հենց անկախությունը գա, իր հետ անմիջապես արդարություն կբերի: Այս բանաձևը մարդու ինքնուրույն առաջընթացի խոչընդոտն է, որովհետև արդարության բացակայության դեպքում հուսալքում է առաջացնում, փոխարենը ոտքի կանգնեցնելու:

Մեր հասարակությունը հիասթափություն ապրեց, երբ հանկարծ պարզվեց, որ անկախությունը եկել է, բայց հետը արդարություն չի բերել: Ու չհասկացավ, որ արդարության համար առանձին պայքար է պետք: Այդ պայքարին մեր ժողովուրդը պատրաստ չէր:

«Դրօշակ» - Նախագահ ընտրվելու դեպքում ինչպե՞ս եք պատկերացնում ձեր և արդարության համար պայքարելու անպատրաստ ժողովրդի հարաբերությունները:

Վ. Հ.- Պատկերացնում եմ միասնական շահի գիտակցության և դրան հասնելու ճանապարհին փոխադարձ վստահության հիման վրա: Ի վերջո, ե՞րբ է հաստատվում արդարությունը հասարակական հարաբերություններում: Այն սուբյեկտը, ումից արդարությունը ակնկալում են՝ պետությունն է: Դա նշանակում է, որ առաջին հերթին պետությունը պետք է արդար ճանապարհով ձևավորվի: Եվ դաշնակցական նախագահը պարտավոր է ապահովել իսկապես արդար ընտրություններ:



Անվստահության այս ողջ մթնոլորտը և իրողությունը որտեղի՞ց է մեր երկրում: Դա նրանից է, որ շատ դեպքերում հայրենիքին և պետությանը ծառայելը արհեստականորեն փոխարինվում է իշխանությանը ծառայելով: Շատ

ընդունված ու հաճախակի են մեր կյանքում դեպքերը, երբ մեծահարուստը կարող է հարկերը չվճարել ընտրածայներ հավաքելու դիմաց: Հենց որ այս կամ այն պատճառով նա փորձում է հակառակվել, ինչպես, ասենք, Խաչատուր Սուքիասյանը, նրան հիշեցնում են հարկերի, պարտականությունների, խախտումների մասին: Իհարկե, խախտումներ կան, որովհետև համակարգն է այդպիսին, հրեշտակներ չկան, բայց այս տեսակ մոտեցումը նշանակում է, որ իշխանությունը հենվում է մարդկանց մեջ արմատացած բացասական հատկանիշների վրա՝ ժլատության, ագահության, անտարբերության, վախի, քծնանքի, նենգության... Սրանք են պետության ղեկավարների իշխելու մեխանիզմները: Եվ սրանք պիտի արմատախիլ անի դաշնակցական նախագահը:

«Դրօշակ»- Արդեն հրապարակվել է ձեր ծրագիրը: Ո՞ր կետերն եք հատկապես կարևորում և համոզվա՞ծ եք, որ ձեր հնարավոր պաշտոնավարման տարիներին իրագործվելու են բոլոր այն խնդիրները, որոնք առաջադրված են ծրագրում:

Վ. Հ.- Կարևոր անելիքներից է համազգային շահի ձևավորումը, որը ենթադրում է գոյատևման հոգեբանությունից դեպի զարգացման հոգեբանություն դուրս գալը: Ընդ որում, մի վիճակից մյուսը պետք է թռիչքով անցնել: Ու թեև դրա մասին արդեն խոսեցինք, ծրագրային ենթատեքստում կցանկանայի ավելացնել, որ այսօր գոյատևում են առանձին-առանձին՝ և անհատը, և հասարակությունը, և պետությունը: Անհատը՝ թշնամական տնտեսական-հասարակական միջավայրում, հասարակությունը՝ սեփական ճակատագրի վրա ազդելու մեխանիզմների բացակայության ներքո, պետությունը՝ արտաքին սպառնալիքների շրջապատում: Ու հենց այդ է պատճառը, որ անցումը պետք է կտրուկ լինի, որովհետև փուլայինն այսօր արդեն իրեն չի արդարացնում: Փուլային զարգացման համար հիմք հանդիսացող ռեսուրսը վերջանում է: Անհատը զզվել է, հասարակությունը հիասթափվել է դեմոկրատական ամեն տեսակի ինստիտուտներից, պետությունն էլ մաշվում է: Այս թռիչքն է, որ պետք է իրականացնել՝ և արժանապատվությունը, և ազգային ինքնագիտակցությունը, և արդարության համար պայքարելու ուժը վերականգնելու համար: Այս բոլորը, բնականորեն, իրենց ետևից կբերեն արդեն որոշակի ինստիտուցիոնալ փոփոխությունների անհրաժեշտություն: Վերջ ի վերջո, որտե՞ղ է ժողովուրդը առնչվում պետության հետ: Դա ոստիկանությունն է, դատարանը, հարկային, մաքսային տեսչություններն են: Այս ոլորտները գտնվում են նախագահի վերահսկողության տակ, ոչ թե՝ գործադիր իշխանության: Իսկ անարդարության մեծ մասը բխում է անճոռնի դատավճիռներից: Մարդը, որին խաբել են, գիտե, որ իրեն խաբեցին, ու գիտե, թե ինչու: Ումի՞ց պետք է ակնկալի իր գործի վերանայումը՝ նրանից, ով իրավասու է վերանայել, այսինքն՝ նախագահից: Ուրեմն նախագահը պետք է այդ համարձակությունն էլ ունենա ու հայտարարի. վերջացավ հեռախոսային իրավունք հասկացությունը, պարոն այսինչ դատավոր, ձեզ ոչ ոք այլևս չի զանգահարի, դուք եք՝ ձեր օրենսգիրքը ու վայ ձեզ, եթե ես անարդար դատավճիռ տեսնեմ: Եվ սա արքայական իշխանության ցուցադրություն չէ, որովհետև նախագահն ունի նաև արդարադատության խորհուրդ, որն իրավասու է մատնացույց անել դատավորին հանցանքի պահին, ոչ թե պատժել միայն քաղաքական աղերսների առկայության դեպքում:

Հայաստանից ընդհանրապես պետք է հեռանա անպատժելիության մթնոլորտը: Սափրագլուխ ասածը, որպես սոցիալական տերմին, այլևս չի լինելու, այն կվերածվի նորաձևության տերմինի. Ուզում ես՝ գլուխդ սափրած ապրիր, բայց դա քեզ չի ազատի պատասխանատվությունից:

«Դրօշակ»- Այդ բարեփոխման միտումը կուրախացնի հատկապես երիտասարդներին, որոնք ինքնահաստատման փուլում գուցե և ուզում են սափրագլխությամբ դրսևորվել, բայց խուսափում են, որովհետև ակամա ներկայացնելու են անպատժելիների դասը: Իսկ ինչպե՞ս եք դուք ընկալում երիտասարդներին՝ իբրև հասարակության լիարժեք տա՞ր, գործընկե՞ր, թե՞ աշակերտ:

Վ. Հ.- Բոլորը միասին: Եվ նույնիսկ որոշ դեպքերում՝ ուսուցիչ: Չէ՞ որ նրանց աշխարհայացքն ավելի առողջ է ու արդիական. խոսքս, իհարկե, որոշակի չափանիշներին համապատասխանող երիտասարդության մասին է: Բայց ամենաշատը կցանկանայի նրանց տեսնել ակտիվ զրուցակցի դերում, ինչպիսին ես էի ու իմ սերունդը: Թող գլուխները սափրեն, թող մազերը երկարացնեն, թող լսեն ինչ ուզում են, միայն թե չմոռանան, որ ընտրության իրավունքն ու հնարավորությունը ձեռք է բերվում բազմաթիվ ճանապարհներին պեղումներ կատարելու ընթացքում: Իսկ եթե կողքիդ էլ խորհրդատու կա՝ արդեն հարուստ ես:

Հարցազրույցը վարեց Լիլիթ Հեվսեփյանը

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎՐՈՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԻՋԵՎ

ԵՎ

Բենիամին ՄԻՐԶՈՅԱՆ

Խորհրդարանական ու նախագահական ընտրությունների փորձը ցույց է տալիս, որ տասնյակ կուսակցությունների միջև պայքարը գնում է ոչ թե գաղափարների, այլ խոստումների միջև: Մինչդեռ կարևորագույն ռազմավարական խնդիրն այն է, թե Հայաստանը շուկայական տնտեսության որ մոդելով ու գաղափարախոսությամբ պետք է զարգանա ու կառուցի իր ապագան:

Այստեղ երկընտրանք չի կարող լինել, քանի որ ՀՀ-ն դեռևս 1995 թ. ընդունված Սահմանադրությամբ հռչակվել է «սոցիալական պետություն» և կոչված է ապահովելու ժողովրդի «ընդհանուր բարեկեցությունը»: Սակայն, ի սկզբանե, Հայաստանի իշխանություններն ընտրել են տնտեսական բարեփոխումների նեոլիբերալիզմի մոդելը, որի հետևանքով հարստությունը կուտակվել է մեկ, իսկ աղքատությունը՝ մի այլ բևեռում, առաջացել է սոցիալական

խիստ լարվածություն, մեծ չափերի են հասել ստվերային տնտեսությունն ու կոռուպցիան: Տնտեսական բարձր տեմպերով աճը կրում է միակողմանի բնույթ և դեռևս չունի ընդգծված սոցիալական ուղղվածություն:

Վիճակագրական տվյալների համառոտ վերլուծության հիման վրա փորձենք ցույց տալ նեոլիբերալիզմի կործանարար հետևանքները և ուրվագծել այն ուղիները, որոնք կարտացոլեն սոցիալական պետության կայացումը:

Նեոլիբերալիզմի հայթայթումը

Նեոլիբերալիզմն անգլոսաքսոնական գաղափարախոսություն է, որի հիմքում փաստորեն ընկած է կենդանական աշխարհին յուրահատուկ գոյության պայքարի օրենքը: Տնտեսական լիբերալիզմի հիմնադիր է համարվում Ադամ Սմիթը (1723-1790), որն իր «Հետազոտություն ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին» աշխատությունում (1776) հիմնավորեց «տնտեսական մարդուն» հատուկ եսասիրությունը, սեփական նպատակներին հասնելու և եկամուտներն ավելացնելու ձգտումը: Նրա ուսմունքում տնտեսական զարգացման և երկրի հարստացման բոլոր հարցերը լուծվում են «անտեսանելի ձեռքի» օգնությամբ, իսկ պետությանը հատկացվում է միայն «գիշերային պահակի» դերը: Լիբերալիզմի լոզունգն է. «laisser faire, laisser passe» («յուրաքանչյուրը թող գնա իր ուղիով»):

«Ինքնակարգավորվող» շուկայական հարաբերությունները դրական դեր են խաղացել ֆեոդալիզմի կործանման և կապիտալիզմի ձևավորման ու զարգացման գործընթացում: Իր հերթին «ազատ» մրցակցությունը հանգեցրել է արտադրության ու կապիտալի համակենտրոնացմանն ու կենտրոնացմանը, մենաշնորհային ընկերությունների, ֆինանսական կապիտալի ու օլիգարխիայի առաջացմանը, տարբեր երկրների անհամաչափ զարգացմանը, նախադրյալներ ստեղծելով իմպերիալիստական պատերազմների ու սոցիալիստական հեղափոխությունների համար:

Վերջապես, 1929-1933 թթ. տնտեսական խոր ճգնաժամն ապացուցեց, որ լիբերալիզմը սպառնալիք է դառնում կապիտալիզմի բուն իսկ գոյատևմանը: Այս անգամ արդեն առաջ քաշվեց պետության վճռորոշ դերի կարևորությունը շուկայական տնտեսության կարգավորման գործում, որի հեղինակը նույնպես անգլիացի Ջոն Մեյնարդ Քեյնսն էր (1883-1946): Նրա ուսմունքի հիմքում ընկած էր ամբողջական պահանջարկի խրախուսումը, ինչն իր վրա պետք է վերցներ պետությունը, օգտագործելով դրամավարկային ու հարկային մեխանիզմները:

Սակայն կապիտալիզմին յուրահատուկ հակասությունները ոչ միայն պահպանվում, այլ նաև խորանում են: Աշխարհի ռեսուրսները, հարստությունը և եկամուտները գնալով ավելի ու ավելի են կենտրոնանում նեղ շրջանի մարդկանց, կորպորացիաների ու պետությունների ձեռքում: Այսպես. եթե աշխարհի բնակչությունը բաժանենք 5 մասի (քվանթիլի), ապա ստորին և վերին խմբերի մեջ մրցող երկրների բնակչության եկամուտների տարբերությունը 1960 թ. կազմել է 30:1, իսկ 1997 թ.՝ 74:1: Նախորդ դարի վերջում աշխարհի բնակչության (6 մլրդ.) առավել հարուստ երկրներում բնակվող մեկ հինգերորդին բաժին է ընկել համաշխարհային ՀՆԱ-ի 86 %-ը, իսկ ամենաաղքատ քվանթիլի (20 %) երկրների բնակչությանը՝ միայն 1 %-ը: Աշխարհի ամենահարուստ երեք միլիարդատերերի ակտիվները գերազանցել են 600 մլն. բնակչությամբ առավել թույլ զարգացած երկրների ամբողջական ՀՆԱ-ն:

Այս և այլ արտառոց ու տագնապալից թվերը բերված են ՄԱԿ-ի 1999 թ. «Մարդու զարգացման մասին» զեկույցում: Աշխարհում և առանձին երկրներում եկամուտների բևեռացումը կանխելու և երկրագունդն աղքատությունից ձերբազատելու նպատակով ՄԱԿ-ը 2000 թ. ընդունեց «Հազարամյակի հռչակագիրը», որը պարտավորեցնում է բոլոր երկրներին ավելի ակտիվ դիմագրավել եկամուտների անհավասարության, լայնածավալ սովի, սեռական անհավասարության, շրջակա միջավայրի վիճակի վատթարացման, ինչպես նաև կրթվածության ցածր մակարդակի, բուժսպասարկման ու մաքուր ջրի հետ կապված հիմնախնդիրները:

Սակայն նոր հազարամյակում ևս շարունակվում է նեոլիբերալիզմի հաղթարշավը, որի հետևանքով մարդու անվտանգության սպառնալիքը դարձել է մեծագույն չարիք ինչպես հարուստ, այնպես էլ աղքատ երկրներում: Աշխարհի ռեսուրսներն ու հարստությունը էլ ավելի են կուտակվել մի բուռ միլիարդատերերի ձեռքում, որոնց թիվը XXI դարի առաջին 7 տարիներին ավելի քան հնգապատկվել է, հասնելով մոտ 1000-ի: Ընդ որում, նրանց հարստացման հիմնական աղբյուրը ոչ թե արտադրության ընդլայնումն է, այլ ֆինանսական մեքենայությունները:

Խրախուսելով ապրանքների, ծառայությունների, աշխատուժի և կապիտալի ազատ հոսքը, Համաշխարհային բանկը (ՀԲ), Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ), Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) փաստորեն պաշտպանում են գերհզոր մենաշնորհային ընկերությունների և զարգացած երկրների շահերը, նպաստելով գլոբալացմանը, զարգացող ու անցումային երկրների կախվածության ուժեղացմանը, սոցիալական բևեռացման խորացմանը:

Նեոլիբերալիզմը պետական դոկտրինա է հանդիսանում ԱՄՆ-ում, որտեղ հարստանում են «ուղեղների» ներմուծման, ամերիկյան «ապրելակերպի» արտահանման, զարգացող ու անցումային երկրները թալանելու հաշվին: Այսպես, ԱՄՆ-ի բնակչության թիվն աճում է բավականին արագ և արդեն գերազանցում է 300 միլիոնը, գրեթե այնքան, որքան բնակվում են Պակիստանում և Բանգլադեշում: Սակայն, ՄԱԿ-ի տվյալներով, ԱՄՆ-ի բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 1998 թ. կազմել է 29,6 հազ., իսկ 2005 թ.՝ 41890 ԱՄՆ դոլար, մինչդեռ Պակիստանում և Բանգլադեշում՝ համապատասխանաբար 1715 և 2370, 1361 և 2053 ԱՄՆ դոլար (համարժեքով): Այդ նույն ժամանակաընթացքում գրեթե 150 մլն. բնակչությամբ Նիգերիայի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն նույնիսկ պակասել է (1154-ից մինչև 1128 ԱՄՆ դոլար):

Անգամ Ռուսաստանը հայտնվեց նեոլիբերալիզմի գայթակղիչ ցանցի մեջ, ինչի հետևանքով ազգային հարստությունը թալանվեց և կենտրոնացավ մի խումբ միլիարդատեր օլիգարխների ձեռքում: Ըստ «Ֆորբս» հրատարակչության հաշվարկների, առաջին հարյուրյակում ընդգրկված ամենահարուստ միլիարդատերերից տասներկուսը ռուսաստանցի են, չհաշված նրանց, ովքեր փախել կամ բանտարկվել են: ՌԴ նախագահ Վ. Պուտինը իրավացիորեն հարց է տալիս, ինչպե՞ս կարող են առանձին մարդիկ մի քանի տարում միլիարդատեր դառնալ: Դրա հիմնական պատճառը նա համարում է «աջ», այլ կերպ՝ լիբերալ կուսակցությունների վարած քաղաքականությունը 90-ական թվականներին: Պատահական չէ, որ ռուսական հասարակայնությունը լիովին մերժում է ծայրահեղ լիբերալ քաղաքականությունը, որի ներկայացուցիչները Պետդումայի ընտրություններում հազիվ 1-2 % ձայն հավաքեցին:

«Ազատական» բարեփոխումների սոցիալական գինը

Ամփոփելով անցումային շրջանի 10 տարին, ՄԱԿ-ի Ռեգիոնալ մոնիտորինգային զեկույցում (N 8, 2001) նշվում է. «Թեև մասնավոր սեփականության զարգացումը ոչ մեկի մեջ կասկածանք չի հարուցում, մեծ նշանակություն ունի ուժեղ պետական հատվածի պահպանումը»: Եվ որպես բացասական օրինակ 27 անցումային երկրների մեջ մատնանշվում են Հայաստանն ու Վրաստանը, որոնք պետական ծախսերն իջեցրել են այն աստիճան, որ առողջապահությանն ու կրթությանը 1998 թ. հատկացրել են ՀՆԱ-ի միայն 4 %-ը: Նույն զեկույցի տվյալներով, Հայաստանը զբաղեցրել է առաջին տեղը եկամուտների անհավասարության ցուցանիշով (Ջինիի ինդեքսը 1999 թ. = 0,59, այն դեպքում, երբ 1989 թ. եղել է 0,25): Թվարկվում են նաև անհավասարության խորացման պատճառները. պետության դերի և նրա ջանքերի թուլացումը եկամուտների վերաբաշխման գործում, ոչ ֆորմալ զբաղվածության ավելացումը, գործարար խմբերի և պետության սերտաճումը: Հատուկ շեշտվում է այն տեսակետը, որ «տնտեսությունում պետական հատվածի կրճատումը կոռուպցիայի ծաղկման համար ստեղծել է բազմաթիվ նախադրյալներ»:

Տնտեսության բազմակացութաձևությունը երաշ-

խավորում է նաև ՀՀ Սահմանադրությունը: Սակայն գործնականում իշխանությունը խրախուսել և իրականացրել է համատարած ու արագ մասնավորեցումը, ինչը հանգեցրել է երկրի 16 մլրդ. ռուբ. արժողությամբ (1990 թ.) հիմնական արտադրական ֆոնդերի «ալան-թալանին», ոչնչով չնպաստելով երկրի տնտեսության աշխուժացմանը և պետական բյուջեի եկամուտների ավելացմանը: Արձագանքելով ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի բազում մեղադրանքներին, ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը նշեց, որ «ՀՀՇ-ն քանդեց երկրի տնտեսությունը՝ Հայաստանը դարձնելով ամենաաղքատ երկրներից մեկը»: Սակայն «ՀՀՇ-ական և ոչ մի գործիչ հալածանքի չի ենթարկվել: Հակառակ դեպքում նրանց կեսը մինչ այժմ «նստած» կլիներ խոշոր հափշտակումների համար»: Նրա կարծիքով, օբյեկտիվ պատճառներով «տնտեսության հնարավոր կորուստները պետք է լինեին 15-20 տոկոսից ոչ ավելին»: Այլ կերպ՝ ՀՀ նախագահը հավատում է վիճակագրական այն տեղեկատվությանը, ըստ որի Հայաստանում տնտեսական անկումը տևել է 4 տարի (1990-1993 թթ.) և կազմել 55%:

Սկսած 1994 թ. մենք հրապարակել ենք տասնյակ հոդվածներ, բերել բազմաթիվ համոզիչ փաստարկներ այն մասին, որ տնտեսական անկումը Հայաստանում տևել է 5 տարի (1990-1994 թթ.) և ոչ թե երկու, այլ առնվազն հինգ անգամ: Կեղծարարության հիմքը դրել է ՀՀ-ում «ազատական» տնտեսական բարեփոխումների «հայրը» համարվող Հ. Բագրատյանը: Սակայն այդ նույն կեղծ թվերը շարունակում են մնալ շրջանառության մեջ, կատարյալ խառնաշփոթ առաջացնելով Հայաստանի անկախության 16 տարվա տնտեսական արդյունքները ճիշտ գնահատելու և միջազգային համեմատություններում նրա իրական դիրքը որոշելու համար:

Բացենք նորանկախ Հայաստանի առաջին վիճակագրական տարեգիրքը (1993-1994 թթ.) և արձանագրված տվյալների հիման վրա կազմենք հետևյալ աղյուսակը (համադրելի գներով, 1994թ. 1990թ. համեմատությամբ, 1990թ.=100).

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)	49,6
Արդյունաբերության արտադրանք	45,2
Սպառողական ապրանքների արտադրություն	45,0
Գյուղատնտեսության արտադրանք	111,6
Մանրածախ ապրանքաշրջանառություն	11,1
Բնակչությանը մատուցված վճարովի ծառայութ,	11,7
Բնակչության դրամական եկամուտներ	6,2
Միջին ամսական աշխատավարձ	6,5
Պետական բյուջեի եկամուտներ	6,4
Սպառողական գների ինդեքս	22,1 հազ. անգամ
ՀՆԱ-ի դեֆլյատոր	7,5 հազ. անգամ

Ի՞նչ են ասում վիճակագրական այս թվերը:

ՀՀ-ում իրականացված «ազատական» բարեփոխումներն անկախության հենց առաջին տարիներին առաջացրել են աննախադեպ սոցիալական ավերածություն: Սոցիալական ոլորտի ցուցանիշների անկումը կազմել է 10-15 անգամ: Մի շարք հոդվածներում, որոնք տպագրվել են 1994 թ. «Երկիր» թերթում («Հացը և քաղաքականությունը», «Հոգատար» կառավարությունը և նոր «մատչելի» սակա- գները», «Աղքատության սահմանը») մենք մանրամասն վերլուծել և ապացուցել ենք, այսպես կոչված, «ջերմային թերապիայի» կործանարար հետևանքները, որ թելադրել էր Արժույթի միջազգային հիմնադրամը, փոխարենը խոստանալով Հայաստանին տրամադրել 400 մլն. ԱՄՆ դոլարի վարկ: Ստացվել էր այնպիսի արտառոց իրավիճակ, երբ միջին ամսական աշխատավարձով օրական հնարավոր էր գնել միայն 1,2 կգ հաց: «Կամ հաց, կամ ոչինչ»: «Հայաստանն աշխարհում, հիրավի, միակ երկիրն է, որտեղ աշխատավարձը դադարել է տնտեսական հասկացություն ու գոյության աղբյուր լինելուց: Այստեղ գործում են ոչ թե տնտեսական, այլ ջունգլիների օրենքները»:

Աղյուսակի տվյալներից դժվար չէ նկատել, որ Հայաստանի տնտեսության իրական հատվածի ցուցանիշները պարզապես կեղծված են: Այսպես, Հայաստանի «Մարդկային զարգացման զեկույցում» (1996) բերվում են բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի փոփոխության հետևյալ

տվյալները (ԱՄՆ դոլար, գնողունակության համարժեքով).

1990	1992	1993	1994
4741	2420	530	365

Աշխարհում, նշվում է զեկույցում, Հայաստանից ավելի ցածր ցուցանիշ (365 դոլար) ունեն միայն 6 երկիր: Ակնհայտ է այն փաստը, որ Հայաստանի տնտեսական ու սոցիալական կործանումը տեղի է ունեցել հիմնականում 1993-1994 թվականներին, այսինքն՝ Միության տնտեսական համակարգից վերջնականապես դուրս գալու, ազգային դրամի ներդրման, գների ազատականացման տարիներին: Մինչդեռ պաշտոնական վիճակագրական տվյալներով, 1993 թ. տնտեսական անկումը կազմել է 8,8 %, իսկ 1994 թ. նույնիսկ 5,4 % աճ է արձանագրվել: «Ըստ ՄԶՀ դասակարգման,- նշվում է նույն զեկույցում,- 1990 թ. Հայաստանն աշխարհում 47-րդ տեղից (բարձր մարդկային զարգացման դաս) 1992 թ. մղվել է 90-րդ տեղը (միջին մարդկային դաս)»: Հայաստանը 1993 թ. արդեն 130-րդ տեղում էր, հայտնվելով ամենաաղքատ երկրների շարքում:

Մինչև հիմա էլ նույն Լ. Տեր-Պետրոսյանը և Հ. Բագրատյանը արդարացնում են 1992-1994 թթ. էներգատեռորը, որի հետևանքով այդ տարիներին միայն օդային տրանսպորտով հայրենիքը լքեցին մոտ 500 հազ. մարդ, երկիրը հայտնվեց խավարի ու սառնամանիքի մղձավանջի մեջ: Ըստ Հ. Բագրատյանի, կառավարությունը հրաժարվեց պոպուլիստական քայլերից և սուղ էներգառեսուրսներն ուղղեց արդյունաբերության վերակենդանացմանը: Իրականում արդյունաբերության կտրուկ անկումը շարունակվեց նաև 1993-1995 թթ., կանգ առնելով միայն 1996 թ., երբ նահանջելու այլևս տեղ չկար: Եթե հաշվարկների համար հիմք ընդունենք արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը, ապա արդյունաբերության համախառն արտադրանքը 1995 թ. կազմել է 1990 թ. 11,4 %-ը, այլ ոչ թե 46%-ը, որը մինչև հիմա էլ արձանագրված է վիճակագրական տարեգրքերում: Ընդ որում, այդ ահռելի տարբերությունը գերազանցապես գոյացել է, ավելի ճիշտ՝ կեղծվել է 1993-1995 թթ.: 1993-1994 թթ. էլեկտրահաշվեկշռի տվյալներով, արդյունաբերությունում սպառվել է նույն թվականներին «արտադրված» էլեկտրաէներգիայի միայն 12,7%-ը: Ո՞ւր գնաց մնացած 87,3 %-ը...

ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը դեկտեմբերի 8-ին (2007 թ.) տեղի ունեցած հերթական հանրահավաքում երկար ու բարակ փաստարկներ բերեց այն մասին, որ հանրապետության արդյունաբերության կործանումն անխուսափելի էր և որ «վայրի սեփականաշնորհում» չի եղել: «Եթե ժամանակին չիրականացվեր հողի սեփականաշնորհումը, ապա գյուղական նոմենկլատուրան թալանած կլիներ կոլխոզների ու սովխոզների սեփականությունը (ինչպես տեղի ունեցավ այլ հանրապետություններում), և Հայաստանը ցրտից ու մթից բացի, անխուսափելիորեն կմատնվեր նաև սովի»: Նույն կարծիքը նա հնչեցրել է անգամ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ամբիոնից: Հայաստանում հողային բարեփոխումների առասպելական արդյունքները թմբկահարվել են ամենուրեք, մասնավորապես ռուսական մամուլում, որի հիմքում նույնպես ընկած են աղավաղված վիճակագրական թվերը: Դա առանձին թեմա է, որի մասին կանդրադառնանք այլ առիթով:

Այստեղ հարկ ենք համարում միայն նշել, որ հենց հողի, անասունների, գյուղտեխնիկայի հախուռն մասնավորեցման հետևանքով ագրոպարենային հզոր համալիրը քայքայվեց ու թալանվեց, տեղի ունեցավ անասնագլխաքանակի այնպիսի ջարդ, որն անհամեմատելի է անգամ ստալինյան համատարած կոլեկտիվացման հետ: Շրջանառությունից դուրս մղվեցին արժեքավոր մշակաբույսերը, գյուղացին մնաց հողի հետ մեն-մենակ, վաստակելով ավելի քիչ զուտ եկամուտ, քան նա ստանում էր նախկինում իր անձնական օժանդակ տնտեսությունից:

«Ազատական» բարեփոխումներն անխուսափելիորեն հանգեցնում են սոցիալական բևեռացմանը, ոչ ֆորմալ (ստվերային) տնտեսության և կոռուպցիայի չափերի ավելացմանը: Այդ ամենի մասին համոզիչ տվյալներ են բերված նաև Հայաստանի «Մարդկային զարգացման զե-

կույց»-ներում: Այսպես, 1999 թ. զեկույցում բարեփոխումների սոցիալական գնի վերաբերյալ արվել են հետևյալ եզրակացությունները. «Սկզբնական բարեփոխումներն ուղեկցվեցին կենսամակարդակի կտրուկ անկմամբ, զանգվածային գործազրկությամբ, բնակչության մեծամասնության աղքատացմամբ, սոցիալական բևեռացմամբ, ժողովրդագրական ցուցանիշների վատթարացմամբ և արտագաղթով: Գերսղաճի հետևանքով արժեզրկվեցին բնակչության դրամական խնայողությունները, ապրանքների և ծառայությունների սպառումը կրճատվեց 10 անգամ, մեկ շնչին ընկնող ամսական եկամուտը հասավ 5 դոլարի»: «Բնակչության միայն շուրջ 10 %-ը, որի մոտ կենտրոնացվեցին սերտիֆիկատները, օգտվեց սեփականաշնորհման իրավունքից»: «Պետությունը փաստորեն ինքնակամ հեռացավ սեփականաշնորհման գործընթացի կառավարումից»: «Չարդարացան նաև սեփականաշնորհումից բյու- ջեի մուտքերն ապահովելու հույսերը. պետության իրական դրամական եկամուտները սպասվածից առնվազն 10 անգամ ցածր էին: Այս բոլոր վրիպումները խիստ սահմանափակեցին ՀՀ տնտեսության զարգացման հնարավորությունները» (էջ 32):

Վերջապես, կան հանրապետության ճանաչված տնտեսագետների կարծիքները, էլ չենք ասում համաշխարհային փորձը: Այսպես, ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտի հանգուցեալ տնօրեն՝ հանգուցյալ ակադեմիկոս Մ. Քոթանյանն իր «Շուկայական էկոնոմիկա» աշխատությունում (1998 թ.) գրում է.«Ջերմային թերապիայի կուրսը, որը մշակել է Միջազգային տարադրամային ֆոնդը, ՌԴ-ում և Հայաստանում հասցրեց սոցիալական ցնցումների, տնտեսության, հատկապես խոշոր արդյունաբերության ներուժի ավերման: Ապապետականացումը և մասնավորեցումն այդ բնագավառում արագացված տեմպերով իրեն արդարացնել չէր կարող: Առավել արդյունավետ և նպատակահարմար էր ՌԴ-ում և ԱՊՀ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, բարեփոխումներն իրականացնել չինական մոդելով» (էջ 106):

Իրականությունը և կեղծիք թվախաղերը

Հայաստանի սոցիալ-տնտեսական իրական պատկերի մանրամասն վերլուծությունը մենք տվել ենք «Դրօշակի» 2007-ի 2-րդ համարում: Այն ամբողջովին գիտական ուսումնասիրություն է՝ հիմնված վիճակագրական տվյալների բազմակողմանի վերլուծության վրա: Մատնանշված են ինչպես դրական, այնպես էլ բացասական սոցիալ-տնտեսական գործընթացները: Այստեղ անհրաժեշտ ենք համարում բերել ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների ինդեքսները 1998-2006 թթ. (համադրելի գներով, միջին տարեկան աճի տեմպը, %-ով):

Համախառն ներքին արդյունք	10,1
Արդյունաբերության արտադրանք	5,8
Գյուղատնտեսության արտադրանք	6,3
Շինարարության ծավալ	24,3
Մանրածախ ապրանքաշրջանառություն	10,3
Ծառայություններ	16,5
Բնակչության դրամական եկամուտներ	11,2
Միջին ամսական աշխատավարձ	15,6
Հարկային եկամուտներ և տուրքեր	12,2
Արտաքին ապրանքաշրջանառություն	12,1
Սպառողական գների ինդեքս	3,1
ՀՆԱ-ի դեֆլյատոր	3,6

Նոր հազարամյակում Հայաստանը, իրոք, սոցիալ-տնտեսական աննախադեպ վերելք է ապրել, եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ դեռևս չի լուծվել Ղարաբաղի հարցը, պահպանվում են շրջափակումը և ռազմական լարվածությունը: Բավական է նշել, որ ՀՀ կոալիցիոն կառավարության վերջին 6 տարում (2002-07թթ.) հանրապետության տնտեսական հզորությունն ավելի քան կրկնապատկվել է: Մարդկային զարգացման ցուցանիշներով Հայաստանը 2005 թ. գրավել է 83-րդ տեղը, այդ թվում միջին մակարդակ ունեցող երկրների (85) շարքում՝ 13-րդ տեղը, անցնելով Թուրքիային, Իրանին, Վրաստանին և Ադրբեջանին: «Համընդհանուր ճգնաժամի», վիճակագրության դիտավորյալ կեղծարարության մասին խոսք լինել չի

կարող, քանի որ վերոհիշյալ մակրոտնտեսական ցուցանիշների միջև մենք չենք տեսնում հակասություն: Ավելին, բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները աճել են առաջանցիկ տեմպերով, որոնց արժանահավատությունը կասկածանք չի հարուցում: Սակայն ՀՀՇ-ական վարչակարգի օրոք երկիրն այնպիսի սոցիալ-տնտեսական անդունդի մեջ էր հայտնվել, որ անգամ երկնիշ թվով տնտեսական աճը ՀՀ անկախության 20-րդ տարում միայն կարող է հասնել «ստրկացման ու աղքատության» մեջ գտնվող Խորհրդային Հայաստանի տնտեսական հզորությանը և բնակչության կենսամակարդակին:

Վերոհիշյալ տվյալներից նաև երևում է, որ վիճակագրությունը չի թաքցնում չկարգավորվող շուկային յուրահատուկ տնտեսության միակողմանի ու անհամաչափ զարգացումը, ինչպես նաև հսկայական ստվերային տնտեսության առկայությունը: Սակայն վիճակագրությունը փաստում է միայն թվեր, եթե դրանք նույնիսկ անհեթեթ են: Ուստի այդ թվերը պետք է դիտարկել իրենց ամբողջության ու տրամաբանական կապի մեջ, հակառակ դեպքում դրանք դառնում են խաղալիք բախտախնդիր քաղաքական գործիչների ձեռքում՝ իրենց կեղտոտ նպատակներին հասնելու համար: Թվախաղերով է սկսել զբաղվել անգամ Լ. Տեր-Պետրոսյանը, որն իր նախագահության տարիներին այդպես էլ չհասկացավ, թե ինչ բան է տնտեսությունը, չառաջարկեց ոչ մի հեռանկարային ծրագիր:

Այս անգամ էքս-նախագահն իրեն յուրահատուկ թույնով ու դեմագոգիայով ձգտում է վերադառնալ իշխանությանը «հակաղարաբաղյան» շարժում հրահրելու օգնությամբ: Հենվելով «լուրջ տնտեսագետների» ուսումնասիրությունների վրա, նա հայտարարում է, որ Քոչարյանի նախագահության տարիներին «տնտեսական տարեկան աճը իրականում չի գերազանցում 3-4 տոկոսը», միաժամանակ Հայաստանի հետամնացությունը ցույց տալու համար ամբոխի առջև բացականչում է՝ տեսեք, այդ տարիներին Հայաստանի ՀՆԱ-ն ավելացել է մոտ 4, իսկ Ադրբեջանինը՝ ավելի քան 5 անգամ: («Առավոտ», 27.10.2007):

Եվ այսպես, մի դեպքում Հայաստանի ՀՆԱ-ի միջին տարեկան աճի տեմպը կազմում է 3-4, մի այլ համեմատությունում՝ ավելի քան 16 %: Իր հերթին «լուրջ տնտեսագետ» համարվող Հ. Բագրատյանը կոչված է ապացուցելու, որ Հայաստանի տնտեսական «հրաշքը» տեղի է ունեցել իր կառավարության օրոք (1993-1996 թթ.), իսկ հետագայում երկիրն ընթացել է կործանման ուղիով: Նույն թերթի էջերում (28.09.2007) նա առանց ամոթի խայթ զգալու պնդում է, որ ՀՀ ԱՎԾ-ն և ԿԲ-ն «ՀՀ ղեկավարությունից հրաման են ստանում երկնիշ տնտեսական աճից ցածր թիվ ցույց չտալ», տարբեր «կախարդական փայտիկների» օգնությամբ հանրապետության ՀՆԱ-ի իրական աճի տեմպը գերագնահատելով 3-4 անգամ: Մի այլ համեմատությունում նա արդեն ընդունում է, որ «այսօր ՀՆԱ-ն և հարկերը աճում են նույն տեմպով: Օրինակ, 2001-2005 թթ. ՀՆԱ-ն աճել է 90 %-ով, հարկերը՝ 96»: Վիճակագրական տվյալներով, նույն 5 տարում ՀՆԱ-ն ավելացել է 78,2, իսկ հարկային եկամուտներն ու տուրքերը, համադրելի գներով՝ 83,1 %-ով: Ի դեպ՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և տուրքերի ամենացածր ցուցանիշ է արձանագրվել 1996 թ. (10,5 %), իսկ 2006 թ.՝ 14,4 %, որը գոհացուցիչ լինել չէր կարող:

Քննադատության թիրախ դարձնելով տնտեսության իրական հատվածի ցուցանիշները, մեր «լուրջ տնտեսագետը» աղավաղում է, նույնիսկ, պաշտոնական վիճակագրական տվյալները, թվերը խառնում ու թվախեղդ անում, տնտեսական աճը հատերով, մետրերով, կիլոգրամներով հաշվարկում: Նա զարմանք է հայտնում. «Տեսեք, 2006 թ., ըստ վիճակագրության, ՀՆԱ-ն կազմել է 1990 թ. 134 %-ը», «բայց արի ու տես, որ նույն պաշտոնական տվյալներով, բնակչության իրական եկամուտները կազմել են 1990 թ.-ի ... 16 տոկոսը»:

Նախ, այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմում են 137 և 40 %: Երկրորդ, նման դիսբալանսի պատճառը նույն Բագրատյանի կառավարության օրոք ՀՆԱ-ի անկումը գրեթե 3 անգամով կեղծելն է: Վերջին տասը տարում բնակչության դրամական եկամուտներն աճել են ավելի արագ, քան ՀՆԱ-ն: Այո, երբ հանցագործը չի

պատժվում, նա նմանվում է չբռնված այն գողին, որն առաջինն է բղավում «բռնեք գողին»:

Եվրոինտեգրման չափանիշները և նախընտրական ծրագրերը

Եվրոմիությունն իր գոյության ընթացքում մերժել է ծայրահեղ լիբերալիզմը, հիմնականում առաջնորդվելով Սոցինտերնի գաղափարախոսությամբ, որի լիարժեք վաղեմի անդամ է նաև ՀՅԴ-ն: Նախագահության թեկնածու Վ. Հովհաննիսյանն իրավացիորեն նշում է, որ «մեր երկրում լիբերալիստական տնտեսավարությունն սպառել է իրեն: Հայաստանը հնարավորություն ունի ավելի սոցիալական մեխանիզմներ կիրառել ներքին կյանքում, ինչը, մեր կարծիքով, չի արվում»:

Ինչպես տեսանք, լիբերալիզմը ոչ միայն իրեն սպառել, այլև ավերել է Հայաստանի տնտեսությունը: Անգամ նույն մոդելով ընթացող Ռուսաստանում պետական ամբողջական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ 1996 թ. կազմել է 41,9, իսկ Հայաստանում՝ 26,2 %: Այնտեղ աշխատավարձն արժեզրկվել է 3, իսկ Հայաստանում 15 անգամ (Բելառուսում՝ 2 անգամ): Բելառուսը, ինչպես նաև Մերձբալթյան երկրները, իրոք, սոցիալական պետություններ են և մտել են մարդկային զարգացման բարձր ցուցանիշ ունեցող եվրոպական երկրների շարքը:

«Դրոշակի» 2007-ի 2-րդ համարում նշել ենք. «Մեր հանրապետության սոցիալական ոլորտի նախկին (1990 թ.) մակարդակը վերականգնելու համար պետության սոցիալական ծախսերն անհրաժեշտ է ավելացնել 4-5 անգամ, սոցիալ-մշակութային միջոցառումներին ու գիտությանը հատկացնելով ՀՆԱ-ի առնվազն 14 %-ը, ներկայիս 9 %-ի փոխարեն»: Իրատեսական եմ համարել նաև ՀՅԴ նախընտրական ծրագրում առաջադրված խնդիրները, մասնավորապես՝ նվազագույն աշխատավարձը սահմանել 50000, նվազագույն կենսաթոշակը՝ 30000 դրամ, իսկ միջին կենսաթոշակի չափը՝ առնվազն 50000 դրամ, կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում հասցնել 6 տոկոսի: Ծրագրում մատնանշված են նաև այն միջոցառումները, որոնք արմատապես կփոխեն հարկա-բյուջետային քաղաքականությունը և հնարավորություն կտան հարկային մուտքերի ծավալն «առաջիկա 5 տարվա ընթացքում հասցնել ՀՆԱ-ի 25 տոկոսին»:

Այդպիսի հիմնավոր և եվրոպական չափանիշներին համապատասխանող առաջարկություններ մենք չենք տեսնում կուսակցական ոչ մի ծրագրում: Այսպես, «Ազգային միաբանության» 78 էջանոց ծրագրում, որտեղ Ա. Գեղամյանը հարյուրավոր թվեր է բերում ներկայիս «համընդհանուր ճգնաժամը» ցույց տալու համար, բայց չի առաջարկում ոչ մի կոնկրետ ցուցանիշ, որին երկիրը պետք է հասնի հեռանկարում: «Օրինաց երկիր» կուսակցության ծրագիրը պարզապես բարի ցանկությունների շարան է, որում սոցիալական ու տնտեսական հարցերը լուծվում են «հարկային բեռի թեթևացման» միջոցով:

Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) ծրագիրն աչքի է զարնում արտառոց անփութությամբ, հակասական ու անհեթեթ թվերով: Այստեղ նշվում է, որ «վերջին տարիներին մի քանի անգամ կրճատվել է աղքատությունը, մի քանի անգամ ավելացել են աշխատավարձերը», և խնդիր է դրվում 2007-2012 թթ. աղքատության մակարդակը կրճատել 1,5, աշխատավարձերը բարձրացնել 2, կենսաթոշակները, նպաստները՝ 2,5 անգամ: Արդյունքում կապահովվի միջին աշխատավարձի երկու երրորդից ոչ պակաս միջին աշխատանքային կենսաթոշակ, կհաստատվի սոցիալական համերաշխություն և արդարություն, եկամուտների համաչափ բաշխում, արժանապատիվ կյանք...

Հիշեցնենք, որ 2006 թ. միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 62,3 հազ., իսկ կենսաթոշակի միջին ամսական չափը՝ 10,9 հազ. դր.: Եթե մի պահ ընդունենք, որ իրական աշխատավարձը կավելանա 2, իսկ կենսաթոշակը՝ 2,5 անգամ, ապա 2012 թ. կենսաթոշակի միջին ամսական չափը կկազմի միջին ամսական աշխատավարձի ոչ թե երկու երրորդը, այլ ընդամենը 22 %-ը: Ան-

ներելի է նաև այն փաստը, որ վերջին տարիներին ձեռք բերված սոցիալ-տնտեսական ցուցանիշները նույն ծրագրում լուսաբանվում են ընթացիկ գներով, աղավաղելով իրականությունը: Այստեղ նշվում է. «2006 թ. արդյունքներով Հայաստանի իրական ՀՆԱ-ն 1989 թ. մակարդակը գերազանցել է 30 %-ով», իսկ 2007-2012 թթ. կավելանա 2 անգամ: Հետևապես, Հայաստանը կդառնա մի պետություն, որի տնտեսական հզորությունը 2012 թ. կգերազանցի 1989 թ. մակարդակը 2,6, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով՝ մոտ 3 անգամ: Միաժամանակ հազիվ կվերականգնվի միջին աշխատավարձի նախկին մակարդակը, իսկ կենսաթոշակինը՝ միայն 50 %-ը:

Նախընտրական ծրագիր է ներկայացրել նաև «դատարկ խոստումներ չտվող» նախկին նախագահը, որը որոշել է 5 տարում կրկնապատկել երկրի ՀՆԱ-ն, եռապատկել աշխատավարձը և պետբյուջեի եկամուտները, քառապատկել կենսաթոշակը: Նման չհիմնավորված ցուցանիշները պոպուլիստական ցնդաբանություն են:

ՀՀ կառավարության գործունեության 2008-2012 թթ. ծրագրում նախատեսվում է ապահովել միջին տարեկան տնտեսական աճի տեմպը 8-10 %-ի սահմաններում, ներդրումներինը՝ 10 %, աղքատության մակարդակը կրճատել մոտ 3 անգամ, գրեթե վերացնել ծայրահեղ աղքատությունը, կենսաթոշակի միջին մակարդակը բարձրացնել այնքան, որ գերազանցվի աղքատության ընդհանուր գիծը 1,5 անգամ, ոչ գյուղատնտեսական զբաղվածությունն ավելացնել 10 տոկոսով, սոցիալական ոլորտին ուղղել 6,2, առողջապահությանը՝ 2,2, կրթությանը և գիտությանը՝ 3,5 % (ՀՆԱ-ի նկատմամբ): Սակայն նույն ծրագրով նախատեսվում է, առանց հարկային դրույքաչափերի ավելացման, ապահովել հարկային եկամուտների տարեկան հավելաճը 0,3-0,4 տոկոսային կետով (ՀՆԱ-ի նկատմամբ), որը հեռու է բավարար լինելուց առաջադրված սոցիալական խնդիրները լուծելու համար: Նույն ծրագրում չի լուծվում նաև զբաղվածության հիմնախնդիրը, քանի որ տնտեսական աճն առաջիկայում ևս պետք է տեղի ունենա, գրեթե ամբողջովին, աշխատանքի արտադրողականության հաշվին:

Մեր հաշվարկներով, Հայաստանը 2012 թ. վերջնականապես կհաղթահարի անցումային շրջանը, թևակոխելով զարգացած երկրների շարքը: Սակայն նա դեռևս կմնա առևտրա-ագրարային երկիր, որի ինդուստրիալ նախկին ներուժը կվերականգնվի հազիվ 1/3-ով: Բավական է նշել, որ արդյունաբերության մեջ 1985 թ. զբաղված է եղել 467 հազ., իսկ 2006 թ.՝ 141 հազ. աշխատող: Հայաստանը թողարկում էր Միության արդյունաբերության 1, իսկ ներկայումս՝ ԱՊՀ երկրների արդյունաբերական արտադրանքի հազիվ 0,2 տոկոսը:

Պետությունը փաստորեն կորցրել է տնտեսական իր հենարանը: Կապիտալ ներդրումների մեջ պետբյուջեի տեսակարար կշիռը 2006 թ. կազմել է միայն 7 տոկոս, իսկ մշակող արդյունաբերության բաժինը շինարարության ամբողջ ծավալի մեջ՝ 6 տոկոս: Հայաստանը, հիրավի, աշխարհի միակ պետությունն է, որտեղ բնակելի շենքերը կառուցվում են գրեթե միայն մայրաքաղաքում և մեծահարուստների համար: Այսպես. 2004-2006 թթ. կառուցվել է 3,6 հազ. բնակարան, որոնցից յուրաքանչյուրի միջին չափը կազմել է 281, այդ թվում 2006 թ.՝ 317 քառ.մ ընդհանուր մակերես:

Հայաստանի ՀՆԱ-ն 2001-2006 թթ. ավելացել է 2 անգամ, բայց նույն ժամանակաընթացքում տնտեսության մեջ զբաղվածների թիվը կրճատվել է 14,5 տոկոսով: Շինարարության ծավալը 7 տարում (2000-2006 թթ.) ավելացել է 6,2 անգամ, մինչդեռ աշխատողների թիվը կրճատվել է 44,6 տոկոսով, այսինքն՝ շինարարի աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է 11,2 անգամ: Ահա այդպիսի անհեթեթ ելակետային ցուցանիշների վրա էլ մշակվում են տարբեր ծրագրեր:

ՀՀ ԱՎԾ-ի և ՀԲ-ի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցում (2007) նշվում է. «Հայաստանի աշխատաշուկայում շարունակում է բարձր տեսակարար կշիռ ունենալ թաքնված կամ ոչ ֆորմալ զբաղվածությունը», որն աճի միտում ունի և 2006 թ. կազմել է տնտեսության մեջ զբաղվածների 25 տոկոսը: Միաժամանակ շեշտվում է այն աննկարելի իրողությունը, որ «հարուստ տնային տնտեսությունները համատարած հրաժարվում են ընտրանքային հետազոտություններից»: Արդյուն-

քում ստացվում է այնպիսի ցուցանիշ, ըստ որի Հայաստանը եկամուտների անհավասարության Ջինիի գործակցով (2006 թ.՝ 0,37) մոտենում է եվրոպական չափանիշներին:

Անգամ ԱՄՆ-ում՝ գերհարուստների ու լիբերալիզմի այդ հզոր երկրում, ֆունկցիոնալ եկամուտների մեջ աշխատավարձի տեսակարար կշիռը կազմում է մոտ 75 տոկոս, իսկ Հայաստանի բնակչության դրամական եկամուտների կառուցվածքում աշխատավարձի տեսակարար կշիռը 2006 թ. կազմել է 35,9 տոկոս: Այստեղ վարձու աշխատողների թիվը կազմում է ընդամենը 330,7 հազ. մարդ (չհաշված մասնավոր հատվածի փոքր և գերփոքր կազմակերպությունները), մինչդեռ «թաքնված» աշխատողների թիվն անցնում է 400 հազարից, որոնք աշխատանքային ստաժ չեն ձեռք բերում, իսկ գործատուները սոցապհիմնադրամին ոչ մի դրամ չեն փոխանցում:

Հայաստանը փաստորեն դարձել է ռանտիե (ռենտայով ապրող) պետություն, որտեղ մեծահարուստները սերտաճել են իշխանության հետ, թաքցնելով ոչ միայն իրենց աշխատողների ու եկամուտների իրական չափերը, այլև հարստանալով հիմնականում տոկոսի, ռենտայի, ֆինանսական մեքենայությունների ու առևտրական սպեկուլյացիայի հաշվին: Միայն աշխատողների իրական թիվը թաքցնելու պատճառով սոցապ հիմնադրամի եկամուտները կրճատվում են գրեթե 2 անգամ, կազմելով ՀՆԱ-ի ավելի քան 3 տոկոսը: Շահութահարկի, եկամտահարկի ու գույքահարկի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2006 թ. կազմել է ընդամենը 4 տոկոս, մինչդեռ պրոգրեսիվ հարկադրման պայմաններում կարող է առնվազն 3 անգամ ավել լինել:

Հայտնի է, որ անուղղակի հարկերը ծանրանում են սպառողի վրա, դրանց հավաքագրումը մեծ դժվարություն չի ներկայացնում: Այդ պարզ ճշմարտությունը հասկացել էր Ն. Բոնապարտը՝ իր կայսրությունում մտցնելով անուղղակի հարկային համակարգը: Ներկայիս զարգացած երկրներում, այդ թվում նաև ԱՄՆ-ում գերակշռում են ուղղակի պրոգրեսիվ հարկերը: Օրինակ, Շվեդիայում եկամուտների տարբերությունը մինչև հարկումը կազմում է 100:1, իսկ հարկումից հետո 4:1: ՄԱԿ-ի տվյալներով, ԱՄՆ-ում առողջապահության վրա պետական ծախսումները 2003 թ. կազմել է ՀՆԱ-ի 6,8, իսկ մասնավորի դեպքում՝ 8,4 %, մինչդեռ Հայաստանում՝ համապատասխանաբար՝ 1,2 և 4,8 % (Թուրքիայում՝ 5,4 և 2,2, Նիգերում՝ 2,5 և 2,2 %):

ՀՀԿ ծրագրում կարդում ենք. «Բյուջետային մուտքերի մեջ ուղղակի հարկերի տեսակարար կշռի էական մեծացում և հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցության զգալի ապահովում՝ որպես տնտեսության ստվերացման կրճատման կարևոր գործոն»: ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի նախընտրական ծրագրում խնդիր էր դրվել «բնակչության եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրումը 2005 թվականից»:

Սակայն այդ բոլոր խոստումները մնում են թղթի վրա: Հայաստանը շարունակում է զարգանալ լիբերալիզմի մոդելով, որտեղ հասարակության մի ստվար խավ շարունակում է հարստանալ աստղաբաշխական տեմպերով՝ բնակչության մեծամասնության հաշվին, իսկ պետական բյուջեն մնում է տկար: Բավական է նշել, որ ՀՀ համախմբված բյուջեի եկամուտները, ներառյալ պաշտոնական դրամաշնորհումները, 2006 թ. համադրելի գներով, կազմել են 1990 թ. պետական բյուջեի 23,8 %-ը, չհաշված միութենական ենթակայության ձեռնարկությունների ֆինանսավորումը: Մինչդեռ Բելառուսի համախմբված բյուջեի եկամուտները, համադրելի գներով, 2005 թ. գերազանցել են 1990 թ. մակարդակը 74 %-ով, կազմելով ՀՆԱ-ի 48,4 %-ը:

Ապացուցելու կարիք չկա, որ Հայաստանը նման բյուջեով երբեք չի կարող դառնալ սոցիալական պետություն, ապահովել իր ազգային անվտանգությունը, հասարակության տարբեր խավերի միջև համերաշխությունը, սոցիալական արդարությունը, առավել ևս հավակնել եվրոինտեգրմանը:

Հայաստանը պետք է վերջնականապես ազատվի լիբերալիզմի գայթակղիչ ցանցից, ունենա սոցիալ-տնտեսական զարգացման իր մոդելը, որն արտացոլի ազգային առանձնահատկությունները և ՀՀ Սահմանադրության բոլոր հիմնադրույթները:

Մեր կարծիքով, ՀՅԴ նախագահության թեկնածու Վահան Հովհաննիսյանի նախընտրական ծրագիրն ամբողջապես համապատասխանում է այս պահանջներին:

ՈՒՄ ԸՆՏՐԵԼ

Սեփական համոզումի իրավունքով՝
Արտաշես Շահբազյան

Նախագահական ընտրությունները կարեւոր են այնքանով, որ լուրջ ազդեցություն են ունենում որեւէ երկրի առաջիկա տարիների զարգացման վրա: Հենց մեզ ծանոթ որոշակի օրինակներ նկատի ունենալով պիտի փաստել, որ նույնիսկ ամենազարգացած ժողովրդավարական համակարգերում նախագահի անձը բնավ էլ չի դառնում սոսկ «պտուտակ»՝ հստակ ծրագրով, հավասարակշռված գործող մեխանիզմների մեջ, այլ կարողանում է շոշափելի ազդեցություն թողնել պետության ներքին ընդհանուր կյանքի եւ արտաքին ճակատում իրականացվող քաղաքական վարքագծի վրա: Այդ երեւույթն առավել տեսանելի է դեռեւս չամրապնդված պետական կառույցի պայմաններում, որտեղ երկրի առաջին դեմքը, օգտվելով օրենքի անկատարությունից եւ քաղաքական ավանդույթի բացակայությունից, ձգտում է ի հաշիվ համակարգի, հնարավորին չափով, ընդլայնել իր ազդեցության եւ դերակատարության սահմանները:

Կարծում եմ, վիճարկման խնդիր չէ, որ Հայաստանը պատկանում է վերջիններիս շարքին: Նկատի ունենալով առկա ներքին ու արտաքին մարտահրավերները, տարածաշրջանային ճակատագրական մրցակցությունը, թվում է, թե մեզ տրված չէ սխալվելու եւ կամ նույնիսկ հարցին թեթեւակի նայելու իրավունք: Որպիսի՞ նախագահ պետք է ընտրի յուրաքանչյուր երկիր եւ, մասնավորապես, Հայաստանը, իհարկե, ուղիղ համեմատության մեջ է երկրի զարգացման տվյալ փուլի մարտահրավերների եւ այդ մարտահրավերներին լուծում տալու նախագահի թեկնածու անձի կարողության հետ: Երեւի պատահական չէ, որ ղեկավարելու համար գրեթե ամենուր երկրի առաջին դեմքին տրվում է պաշտոնավարման ոչ ավելի, քան երկու ժամկետ, որովհետեւ այս ընթացքում հավանական է, որ նա սպառի իր ծրագիրն ու ներուժը, նաեւ իր իսկ ղեկավարմամբ թեւակոխած նոր հանգրվանի համար դառնա ոչ համապատասխան:

2008 թվականի փետրվարի տասնիններին Հայաստանում անհրաժեշտ թեկնածուին նախագահ ընտրելուց առաջ անդրադառնանք նախ այն հարցին, թե ո՞ւր ենք այսօր հասել, եւ ապա՝ թե ի՞նչ խնդիրներ ու առաջնահերթություններ են ծառացել մեր երկրի առջեւ:

Իր կառավարման տարիներին Ռոբերտ Քոչարյանին հաջողվեց կանգնեցնել երկրի տնտեսության գահավեժ անկումը, կայունացնել իրավիճակը եւ ապա զարգացման ընթացք հաղորդել նրան: Արտաքին քաղաքականությունը դարձավ ակտիվ, Հայաստանը որոշակի վարկ ձեռք բերեց միջազգային ասպարեզում: Արցախի խնդիրը դուրս բերվեց պարտադրված անելից, առավելության կշռաքարը թեքվեց դեպի հայկական կողմ, միջազգային ճնշումներին դիմակայելու դերակատարությունը հիմնականում փոխանցվեց ադրբեջանցիներին: Հայաստանն իր պաշտոնական քաղաքականության բաղկացուցիչ մաս հռչակեց ցեղասպանության ճանաչման հարցը, վերացան հայրենիքի եւ սփյուռքի միջեւ դրված արհեստական արգելապատնեշները:

Ներքին կյանքում տեղի ունեցած բազմաթիվ դրական փոփոխությունները կարելի է մանրամասն թվարկել, սակայն, ցավոք, անհնար է չտեսնել այն բացասականը, որ կար ու խորացավ, կամ առաջացավ երկրորդ նախագահի ղեկավարման տարիներին:

Այս ընթացքում էր, որ տնտեսության ոլորտի առանձնաշնորհյալները վերածվեցին տարբեր ոլորտների մենաշնորհյալ օլիգարխների: Տնտեսությունը ձեռք բերեց կլանային բնույթ եւ սերտաճեց իշխանության հետ: Առանձնաշնորհյալների այս դասը դարձավ ոչ միայն տնտեսական կյանքի, այլեւ վերջինիս կարգավորման թելադրողն ու օրենսդիրը, նա դարձավ օրենքից վեր՝ երկրում ձեւավորվեց անպատժելիության մթնոլորտ: Առաջացավ բեւեռացում հարուստների ու աղքատների միջեւ: Երկրի զարգացումն իր ներգործությունը չունեցավ հասարակության բոլոր խավերի վրա, նվազագույն աշխատավարձը չապահովեց ապրելու համար կենսական նվազագույնը, իսկ գործազուրկները դատապարտվեցին չքավորության:

Սերտաճման պայմաններում, մենաշնորհյալ տնտեսությունը հիմնական շրջանառությունը կատարում է ստվերում, իսկ բյուջե լրացնելու անհրաժեշտությունը պարտադրում է հարկային քայքայիչ քաղաքականություն վարել միջին եւ մանր բիզնեսի նկատմամբ: Գնային քաղաքականությունը ենթակա դարձավ գործարարների կամքին, իսկ դրամի արժեւորման վերջին տարիների կուրսը ոչ միայն ծանր հարված հասցրեց պարզ քաղաքացու գրպանին, այլեւ լուրջ խոչընդոտ դարձավ ներքին արտադրության եւ հայրենական արտադրության արտահանման ճանապարհին: Ներքաղաքական անհանդուրժողությունը մշտակա լարվածություն ստեղծեց իշխանության ու ընդդիմության միջեւ՝ արձանագրվեց նահանջ ժողովրդավարությունից: Լրատվական-քարոզչական դաշտը հայտնվեց պետական մեքենայի ճնշման ներքո:

Հռչակվեցին երկրի զարգացման գերակա ուղղությունները, սակայն այդպես էլ չձեւավորվեցին առանձին ուղղությունների զարգացման հայեցակարգեր:

Օրենքից վեր հայտնված նորահարուստները, պետական որոշակի քաղաքականության բացակայության պայմաններում, դարձան նաեւ համապատասխան ճաշակի ու արժեքների թելադրող, որոնք էլ տիրապետող դարձան հասարակական կյանքում:

Ներքին անբարենպաստ դրսևորումները իրենց ազդեցությունը թողեցին երկրի արտաքին վարկի վրա:

Հաստատումների այս շարքը կարելի է շարունակել, սակայն բավարարվենք ասվածով:

Այս ամենից հետո ասել, թե նոր նախագահը պետք է պահպանի նախորդի վարած կուրսը, նշանակում է մեր սոցիալ-տնտեսական, հոգեւոր-բարոյական, ինչպես եւ քաղաքական կյանքը դատապարտել հասունացող ճգնաժամի: Չհաղթահարելով այն իրավիճակը, որ գոյություն ունի տնտեսության ասպարեզում, չի կարելի երազել ոլորտի հետագա դինամիկ զարգացման մասին: Չհաղթահարելով իշխանության հետ սերտաճած օլիգարխա-կլանային համակարգը, չի կարելի ակնկալել ոչ օրենքի գերիշխանություն, ոչ օրենքով պաշտպանվածություն, ոչ ազատ, մրցակցային շուկա, ոչ վերահսկելի գներ ու օրինաչափությունների ենթակա ֆինանսական դաշտի կայացում, ոչ էլ հոգեւոր-բարոյական մթնոլորտի առողջացում: Իշխող համակարգի ինքնապաշտպանական բնազդը թույլ չի տա, որ անձերի խմբիշխանության թելադրանքին փոխարինի քաղաքական հարաբերությունների ժողովրդավար կերպը: Իսկ ո՞վ կարող է հաղթահարել այս համակարգը: Բնականաբար նա, ով ունի համապատասխան քաղաքական կամք, նա, ով սերտաճած չէ, չի սնվում եւ չի հենվում տվյալ համակարգի վրա, նա, ով գործում է համապատասխան թիմի հետ: Ոչ պակաս չափով կարեւորելով վերջին պահանջը՝ ստիպված ենք խիստ թերահավատ լինել նրանց նկատմամբ, ովքեր արատավոր թիմի ուժերով ցանկանում են իշխանության հասնել, իսկ հետո դուրս գալ իրենց պարտապանների դեմ: Այդպես չի լինում, դա հին հեքիաթ է: Թերահավատ ենք

նաեւ նրանց նկատմամբ, ովքեր ներկայանում են սոսկ սեփական անձով կամ մի քանի ընկերներով եւ ոչ միայն հաղթանակ են ակնկալում, այլեւ ստեղծված վարչատնտեսական սարդոստայնը քանդելու հավակնությունը ունեն: Հանրապետության վաղվա նախագահը պետք է ներկայանա հստակ գաղափարաքաղաքական կողմնորոշմամբ եւ ծրագրով: Այլապես, չունենալով համապատասխան հիմք ու կողմնորոշիչներ, նման ղեկավարը արտաքին ու ներքին մշտական ճնշումների ներքո շատ շուտով վեր է ածվելու իրադրային-պատեհապաշտ (իրենց բնորոշմամբ՝ պրագմատիկ) գործչի եւ պատկերացում չի ունենալու, թե ի վերջո, երկրի զարգացման մասին խոսելով, ինչ նպատակակետ է տեսնում պետության համար, ինչպիսի խնդիրներ պետք է կարողանա լուծել: Ի՞նչ դաստիարակություն պետք է ստանա աճող սերունդը, ինչպիսի՞ տեսլականներ պիտի դավանի ու ձգտի հասարակությունը: Այլապես, եթե նպատակը կուշտ ապրելն է, ապա արդյո՞ք ճիշտ չեն այն հազարավորները, ովքեր տարբերություն չեն տեսնում, թե մարդը աշխարհի որ անկյունում կհոգա ստամոքսի խնդիրը:

Այսօրվա տագնապներից ելնելով՝ հանրապետության նոր նախագահը հիմնական խնդիր պետք է համարի սոցիալական, տնտեսական, իրավական արդարության խնդրի լուծումը: Հիշենք, որ մեր ժողովուրդը Ղարաբաղյան պատերազմի արհավիրքներին դիմացավ, բայց սեփական հայրենիքը լքեց չհանդուրժելով ներքին անարդարությունը: Առանց արդարության հաստատման՝ չեն կարող լինել երկիրը սիրող, նրան նվիրված քաղաքացիներ եւ միասնական հասարակություն: Հետեւաբար, այս հիմնական մտահոգությունը չունեցող թեկնածուն կամ նրա թիմը չեն կարող վստահություն վայելել եւ ձեռնամուխ լինել ուժեղ պետության կայացմանը: Արդարությունն ու օրենքը, սոցիալական արդարությունն ու օրենքի առջեւ հավասարությունը սերտորեն շաղկապված են, եւ համապատասխան գաղափարներ ու նպատակներ չունեցող անձը չի կարող դառնալ ցանկալի նախագահ:

Ցանկալի նախագահը պետք է դառնա միայն նա, ով նպատակին հասնելու համար ո՛չ արեւմուտքին է ապավինում, ո՛չ արեւելքին եւ ոչ էլ հյուսիսին կամ հարավին, այլ միայն սեփական ժողովրդին: Հնարավոր չէ օգտվել ինչ-որ մեկի ծառայություններից ու հետո չլինել նրա պարտատուն:

Արդեն տասնամյակներ ի վեր, ճարպիկ, անօրինական ճանապարհներով հարցեր լուծող տեսակը այս երկրի հասարակական մթնոլորտում տիրապետող է դարձրել իր կերպարը, այսպես ասած՝ գողականությունն ու «լավ տղի» կերպարը: Վերջապես Հայաստանը դեպի նոր ափեր պետք է առաջնորդի մտավորականի տեսակը, ժամանակի հերոսը պետք է դառնա անբասիրը, կիրթը, նվիրյալը, հավատարիմը, ինտելիգենտը: Նա պետք է ասպարեզը բացի այս տեսակի առաջ, եւ հակառակ տեսակը, որքան էլ կապիկի պես թռչկոտի, այս նշածողից չպիտի կարողանա կառչել:

Ժամանակն է, որ Հայաստանում ղեկավարման ղեկը ստանձնի մեկը, ով իրեն կզգա ամենայն հայոց առաջնորդ, ով արյամբ ու գաղափարով կզգա իրեն ծառա եւ տեր՝ հայրենաբնակ ու աշխարհասփյուռ հայության, եւ համազգային հարցերի գլխավոր պատասխանատու կկարգի ինքն իրեն:

Ազգային շահի գերակայության գիտակցումով նա կմոտենա Հայ դատի ու ցեղասպանության ճանաչման հարցին, Արցախի խնդրի եւ ազգային մեծ ու փոքր այլ հիմնահարցերի լուծմանը:

Գաղափարական ընդհանրականության ու միասնականության կողմնորոշմամբ նա ոչ միայն ջանք չի խնայի հայրենիքի ու սփյուռքի հոգեւոր միացման համար, այլեւ ներքին կյանքում կձգտի հասարակական համերաշխության: Ձերծ լինելով իշխանության կենտրոնաձիգ վարչաձեւի մտայնություններից, երկրի ներսում չունենալով թշնամիներ, նա նախանձախնդիր կլինի, որ ազգի բոլոր առողջ ուժերը ներառվեն պետության հզորացման ու առաջընթացի գործում:

Հանելուկ առաջադրած չլինելու համար ուզում եմ ավելացնել, որ իմ կարծիքով խիստ կարեւոր այս պայմաններին առավել չափով համապատասխանում է Հայ Յեղափոխական Դաշնակցությունը ներկայացնող Վահան Հովհաննիսյանը: Իսկ որպեսզի որեւէ մեկը ինձ հակառակը համոզի, պետք է նախ հերքի առկա իրավիճակի վերը բերված գնահատումները, ներկայացնի գոյություն ունեցող հիմնահարցերը հաղթահարելու այլ ուղի եւ մատնանշի այն անձին, ով առավել չափով կհամապատասխանի իրավիճակը հաղթահարողի դերին:

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ

ԽԱՐԽԱՓՈՒՄԻ ՏԱՐԻՆԵՐ
(1908-1915 թթ.)

...եթե հույսը քաղցր է, պատրանքը վտանգավոր է:
ՄՈՆՈ

...ժողովուրդը, որը չի պաշտպանում սեփական շահերը, դառնում է պարարտանյութ ուրիշ ժողովրդի համար:

Պյոտր ՍՏՈԼԻՊԻՆ

Հայաստանի համար պայքարը, որը «եվրոպական» երանգ ու առանձնահատկություն էր ձեռք բերել Բեռլինի կոնգրեսից հետո, նոր փուլ թևակոխեց սուլթան Համիդ II-ի տապալումից հետո (1908 թ.): Եվ դրանից հետո էր, որ հույս առաջացավ ստեղծել «իսկական Օսմանյան հայրենիք», որտեղ կարելի կլիներ կերտել նրա բաղկացուցիչ տարրերի (ժողովուրդների) անհատականությունը: Ընդսմին, այս տեսակետը տիրապետող էր հայ հասարակության տարբեր շերտերում առավել՝ ինչպես հեղափոխական կազմակերպությունների որոշ շրջանակներում, այնպես էլ համիդականությունից հոգնած ու հալածված արևմտահայ զանգվածների սրտերում: Այդ տարիներին է, որ փայփայվում էր Վերածնվող Հայաստանի տեսլականը (իդեալը)՝ Օսմանյան կայսրության իրավահավասար ժողովուրդների ընտանիքում:

Այդպես էին մտածում հիմնականում հայերը և այդ մղումով էր գործում նրա ազգային հոգևոր-քաղաքական ընտրանին: Գոյություն ուներ առանձին անձերի անհատական կարծիք, սակայն ամբոխային տրամաբանությունն ու առավել ևս հոգեբանությունը իր ծագման մեջ խեղդում էր «անսովոր» տեսակետը: Այսպես, Տարոնի ֆիդայապետը՝ Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան) Օսմանյան Սահմանադրության օրերին ժողովրդի հետ իր հանդիպման և ընդհանուր իրադրության մասին գրում է. ամբոխը «իր առջև կգտնե անխոս ֆեթիշ մը, որ ոչ իր արժեքը գիտե, ոչ էլ դիմացի ամբոխին, ոչ իսկ գիտե, թե **ուրկից եկավ այս հուրիեթը** (ազատությունը - Լ. Շ.) **և ուր պիտի երթա»**[1]:

Ընդհանուր դիրքորոշման մեջ իր որոշակի նշանակությունն ունեցավ «եվրոպականացած» թուրք գործիչներից ոմանց անձնական հմայքը: Իսկ ինչպես հայտնի է, մեզանում հիպնոսացնող արժեք ուներ (և, թերևս, այսօր էլ ունի) հոգեբանական հակվածությունը հանդեպ «քաղաքակիրթ եվրոպացին»: Մանավանդ, որ երիտթուրքերի «հեղափոխության» առաջին շրջանը կարծես

թե նման ենթադրության հիմք տալիս էր: Եվ հանուն այդ ենթադրության Ադանայի երկփուլ (1909 թ., ապրիլ 1/14-3/16, 12/25-14/27) աղետն իսկ գիտակցաբար «կլլվեց»[I], անշուշտ գալիք Մեծ աղետի սարսափազդու ուրվապատկերի հարկադրանքով:

Եվ մինչ Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդները որոնում էին տնտեսական ու մշակութային զարգացման տանելի համակեցություն, «նոր» թուրքերը գնում էին հին ու իրենց քաջածանոթ ճանապարհով, թուրքական «վաթանի» որոնման ու թուրք էթնոսի (ազգի) ստեղծման արյունոտ ուղիով: Վարակված համաթուրքական տեսլականով և ոգևորված պրուսական «Herrenvolk»-ով (տիրող ազգ.- Լ. Ծ.), Թալեաթ-Էնվերն ու ընկ. թուրքական բանդան արտաքին քաղաքականության մեջ որդեգրել էր «սերտ գործակցության» ռազմավարություն Գերմանիայի հետ, ներքին քաղաքականության մեջ՝ կայսրության ոչ թյուրք ժողովուրդների թրքացման տեսակետ: Թուրքական հեղափոխության իբրև թե «պոզիտիվ» զարգացման շրջանն այլևս ավարտված էր:

Ակնհայտորեն ուրվագծվում էր «երիտթուրքերի» «մեծ ռազմավարությունը»՝ **թրքացնել** քրդերին ու արաբներին, **ազատվել** Փոքր Ասիայի բնիկ (aboriginal) ժողովուրդներից՝ հայերից ու հույներից, ինչպես նաև ասորիներից՝ սեփականելով նրանց ունեցվածքն (ավարառություն) ու հայրենիքները: Ընդսմին, թուրքական «վաթանի» տարածական որոնումը շարունակվում էր Համիդի քաղաքականության շրջանակներում: Իսկ նա, Համիդը, «գահի վրա փոխարինելով Մուրադ V-ին,- գրում է թուրքական կնճռին քաջածանոթ Ե. Ա. Ադամովը,- արդեն չի փորձում իր իշխանությունը հաստատել Նեղոսի հովտում և Սիրիայի հարավում: Նրա ուշադրությունը գրավում են **Արևմտյան Արաբիան, մուսուլմանական սուրբ վայրերը և Հայաստանը**»[2]: Մասնավորաբար, այս գերնպատակից բխող քաղաքականությունը (արևմտա)Հայաստանի համար պայքարը դարձնում էր անզիջող և անսահման դաժան:

Իրողությունն այն է, որ այս քաղաքականություն-գերնպատակին հարազատ մնացին ամեն կարգի ու տեսակի թուրք ղեկավարներ՝ ևս միապետական-պանթուրքիստ Թալեաթ-Էնվերը, ևս հանրապետական-շովինիստ Քեմալը, ևս ժամանակակից ժողովրդավարարևմտամետ ընտրանին, ևս թուրք կոչված ժողովուրդն առհասարակ: Այս քաղաքականություն-գերնպատակի վառած կրակե բոցերի մեջ էլ հրո ճարակ դարձավ (արևմտա)Հայաստանի միակ ու իրական տերը՝ հայ ժողովրդի ահռելի զանգվածը: Այդ քաղաքականության կրակե բոցերի մոխիրների տակ էլ դեռևս ծխում է հայկական քաղաքակրթության անսպառ ժառանգությունը, թուրքական եղեռնագործության ականատեսն ու լուռ վկան:

Հայաստանի ճակատագրի վրա, կայսրության ճգնաժամի խորացմանը զուգահեռ, աղետաբեր ազդեցություն ունեցան երկու Բալկանյան պատերազմները (9.X.1912-30.V.1913, 29.VI.1913-10.VIII.1913) և բալկանյան ժողովուրդների ազատագրումը թուրքական լծից: Նախ, Բալկանների ազատագրումով նեղացավ կայսրության տարածքը Եվրոպայում և վայրագ կայսրությունը դարձավ էլ ավելի ասիական[II], ավելի նվազեց հայ ժողովրդի **բնական** դաշնակիցների թիվը: Այնուհետև, Բալկաններից արտամղված թուրանական ավարառու հորդան (շուրջ 1,5 մլն. այսպես կոչված մոհաջիրներ) հրով ու սրով ուղղորդվեցին Արևմտյան Հայաստան, որոնց չարաղետ ուժը ճաշակելու էր հայությունը առաջիկայում իր հայրենիքում: Այս շրջանում է (երբ թուրքերը պայքարում էին իրենց գոյության համար), որ հայերը փաստեցին իրենց հավատարմությունը թուրքերին ու Թուրքիային (Ա. Թոյնբի): Եվ դա Ադանայի եղեռնագործությունից հետո: Հայկական այս դուալիզմն (երկվությունն) էլ հանդեպ «Օսմանյան ընդհանուր հայրենիքը», կազմալուծեց հայոց քաղաքական կամքը և մարտական կորովը[III]: Ու ահագնացող ճգնաժամի պայմաններում, 1913-ին, անսալով թուրքական խարդավանքներին, անտեսելով մարտական պետքերի անփոխարինելի արժե-

քը, Հայկական հարցի լուծման խնդրում հայկական կողմը ապավինեց 61-րդ հոդվածին:

Մինչ այդ, երիտթուրքերի քաղաքականությունը արդեն իր դեմ էր հանել արաբներին՝ 1910-ին՝ Միջագետքի խռովությունները, 1911-ին՝ Եմենի հեղափոխությունը և 1911-ին ու 1912-ին՝ մակեդոնացիների ապստամբությունները: Արդեն 1912-ին Թուրքիան կորցրել էր Մակեդոնիան ու Արևմտյան Թրակիան: Պատահական չէ, որ թուրքերի համար անհաջող այս շրջանում թուրք կառավարությունը, վախենալով ռուսական հնարավոր միջամտությունից (Հայկական հարցը Ռուսաստանի ձեռքում կարող էր դառնալ վտանգավոր ու կործանիչ միջոց՝ դեպի Գերմանիա թեքվող Թուրքիայի համար), թուրքական շողոքորթությամբ ու անգերազանց քծնանքով (թուրքական քաղաքական մշակույթի բաղադրիչներից), առաջ անցնելով խոշոր տերություններից, ինքն առաջարկեց հայկական բարեփոխումների, իբրև թե, իր ծրագիրը: Անշուշտ, նախաձեռնությունն իր ձեռքը պահելու և սոսկ ժամանակ շահելու մտահոգությամբ... Այս քայլը, ինչպես և սպասվում էր, հաջողություն չունեցավ...

Կործանարար եղավ պայքարող Հայաստանի **կրավորական** («Հայ ժողովրդի այդ թուլամորթ կրավորականությունը..., որ հավիտենական անեծքի պես կիալածե մեր ցեղը»՝ Միքայել Վարանդյան) ռազմավարությունը, որը մինչև 1915 թվականը չկարողացավ հաղթահարել «քաղաքակիրթ» մեծերի՝ Անգլիա, Գերմանիա, Ռուսաստան, Ֆրանսիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա, համաշխարհային քաղաքականության համանվագի (concert) տրամաբանությունը: Ընդհանուր առմամբ, այն ընթացավ Թուրքիո հայոց պատրիարք Ներսես արք. Վարժապետյանի «բեռլինյան» ռազմավարությանը հարազատ հունով: 1878 թվականի հուլիսի 21-ին, Պոլսի Ազգային ժողովում արտասանած ճառում Պատրիարք Հայրն ասում էր. «ինչ բառերով ներկայացուցի Հայոց խնդիրն Եվրոպայի», «կամփոփեմ հոս սապես. Հայոց վարչություն Հայաստանի մեջ առանց քաղաքական փառասիրության, զոր երբեք չենք ունեցած և չենք կրնար ունենալ, մեր Վեհափառ Սուլթանին հովանավորությանը և վեհապետական իշխանությանը ներքև»[3]: Հայոց քաղաքական մտածողության մեջ, Բեռլինի կոնգրեսից 37 տարի անց, կարծես ոչինչ չէր փոխվել: Իսկ Մեծ ոճիրից երկու տարի առաջ էր, որ հայ ազգային քաղաքական ազդեցիկ դեմքերից Գրիգոր Զոհրապը, դատապարտվածի հանկերգով, գրում էր. «Հայերը երբեք քաղաքական նպատակ չեն սնուցած: Կյանքի ապահովություն, պատվի, ինչքի ապահովություն, աշխատելու և իրենց աշխատանքին պտուղը վայելելու կարելիություն, իրենց ազգային մշակույթը պահելու իրավունք - այս ամենը կազմած են և այսօր ալ կկազմեն իրենց միակ փառասիրությունը»[4]:

Ըստ էության, նույն տեսակետն է որդեգրում հայոց մարտական կազմակերպությունը՝ ՀՅԴ-ն, չորրորդ Ընդհանուր ժողովում (1907 թ., Սոֆիա), և հստակորեն հայտարարում է այդ մասին: «Դաշնակցությունը Թուրքիո մեջ ունեցած չէ և չունի անջատական և ոչ մեկ ձգտում, այլ իր նպատակն է... տեղական լայն ինքնավարություն»[5]: Վատը այն էր, որ այստեղ ոչ միայն հստակ քաղաքական նահանջ էր արձանագրվում 1891 թվականի դիրքորոշումից[IV], այլև այն, որ կազմակերպությունը, լայն իմաստով, անտեսելով իր պողպատյա առաջնորդի **«հարատև կռվի»** պատգամը, զինաթափվում էր օսմանյան **«հեղափոխության»** տեսլականի առջև[V]: Եվ տեսեք, գործը այնտեղ է հասնում, որ ՀՅԴ-ն իր հերթական, հինգերորդ Ընդհանուր ժողովով «պարտք կհամարեր» հայտարարել, որ «իբրև կռվող հեղափոխական կուսակցություն, վար կդնե դավադրական այն միջոցները, որոնցմով կպայքարեր հին բռնակալ ռեժիմին դեմ...»[6]: Եվ վերջապես, նույն ժողովում հայտարարելով, որ «ի հարկե հանդես կուգա իր ամբողջ ուժով կռիվ մղելու ռեակսիոնին դեմ»[7], ազգային պայքարը ստորադասում էր գաղափարախոսական դոգմային և դառնում «Թուրքիո պետական կյանքի խոշոր ազդակներեն մին»: Այժմ «նա ուներ իր պատգամավորները Օսմանյան խորհրդարանում... 1909-ին... հիմնեցին մամուլը...» [8VI]:

Եվ այսպես, մինչ ամլացած հայ ռազմավարական միտքը շարունակում էր խարխափել, իսկ քաղաքական շրջանակներում տիրում էր մտքերի շփոթը, անորոշությունը, վարանումը, հայերին քաջածանոթ «եվրոպական համանվագը» «հայկական հարցի» լուծման վերջին, բախտորոշ արարը՝ եզրափակիչ բեմականացումով («scenary»), խաղարկեց 1912-1914 թվականներին: Հայտնի է, որ XX դարի սկզբներին աշխարհի վերաբաժանման հայտ էր ներկայացրել Տևտոնյան գիշատիչը և կոթնած «Drank nach Osten»-ի («Թռիչք դեպի Արևելք») թևերին, հաջողությամբ տեղավորվում էր Օսմանյան հետնախորշի տնտեսական ու ռազմական կյանքի բազմաշերտ ծալքերում[9], էապես ազդելով նրա ռազմավարական կողմնորոշումների վրա: Այս իրողությունը, անշուշտ, ամենաշատը անհանգստացնում էր «համանվագի» ազդեցիկ անդամներից Երկգլխանի արծվին: Ուստի նա էլ, հերթական անգամ, իր վրա վերցրեց ժամանակին իրենից Ծովերի առյուծին փոխանցված «Հայաստանի փրկիչի» և «հայասեր քրիստոնյայի» թիկնոցը: Նիկոլայ II թուլամիտի «լոբանովյան Ռուսաստանը» վերածվել էր նույն ցարի «սազոնովյան Ռուսաստանի»: Գերմանական ահագնացող ներթափանցման դեմ միջոց դիտվել էր, եվրոպական մայրաքաղաքներում, «հայկական պատնեշը»: Թվում էր, Ռուսաստանի շահերը, վերջապես, համատեղվել էին հայոց ազատագրության բաղձանքների հետ: Գուցեև դա այդպես էր: Բայց Հայկական հարցի հետագա ողջ զարգացումը, անլույծ մնալը, Հայոց ցեղասպանությունը ցույց տվեցին, որ նա «իր նեղ թե լայն չափերի մեջ, **լինելով միջազգային դիվանագիտության ենթակա մի քաղաքական խնդիր, կլուծվի միայն բոլոր** (կարդա՝ concert-ի.- Լ. Ծ.) **կամ ազդեցիկ մեծամասնության հավանությամբ**»[10 VII]:

...Եվ Ռուսաստանն շտապում էր: «Ռուսական դիվանագիտության խրախուսանքով, Գևորգ Ե կաթողիկոսը 1912 թվականի հոկտեմբերի 2-ին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով դիմեց ցարական կառավարությանը՝ խնդրելով միջամտել ու աջակցել Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցը վերստին արծարծելու համար»[VIII 11]: Նույն թվականի հոկտեմբերի 12-ին ցարին ուղարկված տեղեկագրում, նկատի ունենալով ռուս-թուրքական պատերազմի հավանականությունը և այն, որ Հայաստանը նորից դառնալու է այդ պատերազմի թատերաբեմ, նույն փոխարքան առաջարկում է,- ուշադիր եղեք, Պողոս Նուբարին Վեհափառի կողմից Արևմուտքում դեսպանորդ նշանակելուց (10 նոյեմբեր, 1912 թ.) դեռևս մեկ ամիս առաջ,- կանխավ նկատի ունենալ «հայասեր քաղաքականությունը վերսկսելու» անհրաժեշտությունը և «բացահայտ կերպով ձեռք առնել թուրքահայոց դատի պաշտպանությունը»[12]: Գործնական քայլերը չեն ուշանում: Օսմանյան կայսրությունում ռուսական դեսպանը իր մոտ է հրավիրում Թուրքիո հայոց պատրիարքի (Զավեն արքեպիսկոպոս Տերեղիայան) ներկայացուցիչներին (Ազգային վարչության ատենապետ Ստեփան Գարայան և ազգային երեսփոխան Գրիգոր Զոհրապ) և նրանց հայտնում, որ «ռուս կառավարությունը ի նկատի առած է Ամենայն Հայոց կաթողիկոսական դիմումը և անոր հանդեպ բարյացակամ տրամադրություններ ունի, թե Պողոս Նուբար փաշան Փարիզի ռուս դեսպան Իզվոլսկիի հետ շփման մեջ է արդեն»[13]: Ուրեմն, Կ. Իզմիրլյանը բոլոր հիմքերն ուներ գրելու, որ «Ռուսիան բարենորոգումների պաշտպանն է, **ճիշտ ինքն է հարցը նորեն միջազգային հրապարակ բերել տվողը**»[14 IX]:

Ռուսական կողմը հայերին բավարարող Հայաստանի բարեփոխումների ծրագիրը ներկայացրեց Կ. Պոլսի դեսպանաժողովի (1913 թ., հուլիսի 3-24) քննարկմանը, որն ընթացավ Անգլիայի ու Ֆրանսիայի որոշակի շահագրգռության (հեռանկարում Ռուսաստանի շարժումը դեպի Փոքր Ասիայի խորքեր Հայաստանով սահմանափակելու նախատեսումով, ինչը արտացոլվեց 1916 թվականի Սայքս-Պիկո համաձայնագրում) և Եռյակ միությունից հատկապես Գերմանիայի ընդգծված դիմադրու-

թյան [Հանուն Թուրքիայի անձեռնմխելիության, սուլթանի վեհապետական իրավունքների և այլն (Լեո): Գերմանիայի համար հատկապես անընդունելի էր համարվում հայկական վեց վիլայեթներից մեկ նահանգի կազմավորումը] պայմաններում: Դժվարին պայքարում և փոխզիջումների արդյունքում բարեփոխումների հիմք ընդունվեց Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում ընդհանուր բարենորոգումների թուրքական նախագիծը: Այնուհետև, ռուս-թուրքական համաձայնությունը ստորագրվեց 1914 թվականի հունվարի 26-ին (ն. տ. փետրվարի 8-ին):

...Իրականության մեջ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի երկնած բարեփոխումների ծրագիրը, որը գործադրվելու էր սահմանադրական պատրանքների երևակայական աշխարհում, շրջանցելով բալկանյան ժողովուրդների զինված ազատագրության փորձը, Արևմտյան Հայաստանն ու թուրքահայությանը տեղավորելու էր մահվան մահճում... **Թուրքերը ձգտում էին և նրանց հաջողվեց թույլ չտալ, որ Հայաստանը գնա Բալկանների ճանապարհով:**

Իսկ քաղաքական աշխարհը գահավիժում էր մեծ պատերազմ, Օսմանյան կայսրությունը՝ Հայկական հարցի վերջնական լուծում, Հայաստանը սեփականելու և հայոց ունեցվածքին տեր դառնալու համար... Թուրքական **«կենտրոնատեղին»**[X] ստեղծելու նպատակով:

Հայտնի է, որ բարեփոխումների ծրագիրը բխում էր 61-րդ հոդվածի տրամադրություններից և կառուցված էր երկու մասով: Առաջինը վերաբերում էր բուն բարեփոխումներին և հայերի պաշտպանությանը չերքեզներից ու քրդերից (թուրքերի մասին խոսք չկա.- Լ. Ծ.): Երկրորդ մասը վերաբերում էր համաձայնագիրը ստորագրող տերություններին, բարեփոխումների իրականացման ուղղությամբ ձեռք առնված միջոցների մասին թուրքական կողմի իրազեկումներին: Անհրաժեշտության պարագայում նախատեսվում էր նաև «հավաքական միջամտություն»: Սակայն, հայկական հարցի շրջանակներում այս ԱԿՑԻԱՆ էր (հավաքական կամ անհատական միջամտություն), որ երբևէ չկիրառվեց: Ընդհակառակը, ինչպես նկատել էր ֆրանսիացի դիվանագետ Մ. դը Ֆոգեն, հենց միայն հավաքական միջամտության խոսքերը բավական էին, որ «Թուրքիային հանգիստ շնորհեն»[15]: Ստեղծված պայմաններում, ստորագրված համաձայնագիրը ամբողջովին դիվանագիտական ֆետիշին կըռթնած, մինչսահմանադրական շրջանի հեղափոխական խոյանքները մոռացած հայությանը կանգնեցնում էր թուրքական **շովինիստ** պետության և պարբերաբար ավարառությամբ իր բնազդները հագեցնող օսմանյան մոլեռանդ ամբոխի դիմաց: 1914 թ. հունվարին Կ. Պոլսում տեղի ունեցած միտինգում (որտեղ, ի դեպ, առևտրական պատերազմ հայտարարվեց հայերին ու հույներին), Թալեաթն ասաց, թե «Թուրքիան Անատոլիայի մեջ թույլ չի տա և ոչ մեկ եվրոպական վերահսկողություն»: Այս ոգով էին արտահայտվում տարբեր չափերի իթթիհատական ու պետական գործիչներ և ակնարկում էին նախատեսվող հայկական կոտորածների մասին:

Ակներև է, որ Հայաստանի հարցը սրվեց հատկապես Բալկաններից թուրքերի արտամղման շրջանում և նրանից հետո: Այն առիթ դարձավ թուրքական ռազմավարական սկզբունքի հստակեցմանը. «Մենք պիտի ձգտինք նոր նվաճումների և փոխհատուցման Արևելքի մեջ Արարատի ուղղությամբ»[16]: Ըստ այդմ էլ ձևավորվեց երիտթուրքերի ռազմական դոկտրինան: Քյազիմ Կարաբեքիրը **դիտել է** տալիս (1938 թ.), որ «թուրքերը կովկասյան ճակատը կհամարեին Թուրանի ճանապարհ և **անոր համեմատած մյուս ռազմաճակատներն երկրորդական նշանակություն ունեին»**[17]: Նույն ռազմավարական սկզբունքի շրջանակներում է տեղավորվում թուրքական գլխավոր շտաբի կողմից 1912 թվականին կազմված **հավակնոտ «Ռուսաստանի դեմ գրոհի ծրագիրը»,** որով նախատեսվում էր կայսրության զինված ուժերի գլխավոր ուժերը նետել Արևելյան Հայաստանի և այնուհետև Կովկասի վրա: Այսպես, Պարսկաս-

տանի սահմանի վրա տեղաբաշխված 11-րդ և 12-րդ բանակային կորպուսները պետք է Մակվի (Հյուսիսային Պարսկաստան) վրայով, շրջանցելով Արարատ լեռը, հարձակվեն Ծահթախթի վրա, հեշտությամբ մտնելով Նախիջևան, գրավեն Երևանը, Անդրկովկասը և Կովկասը...»[18]: Տրամաբանական է, որ ռուս-թուրքական համաձայնագրի կնքման պահին Թուրքիան իր բանակի վերակազմությունը «կհանձներ Գերմանիո» (Գ. Լազյան): Սկսել էր աշխատել Թուրքիայում Լիման ֆոն Սանդերսի զինվորական առաքելությունը, իսկ որոշ ժամանակ անց (6.VIII.1914 թ.) Կ. Պոլսում կնքված գերմանա-թուրքական համաձայնագիրը (5-րդ կետ) ազատ էր արձակում Թուրքիայի ձեռքերը և ուղղորդում Օսմանի հորդաներին Արևելյան Հայաստան ու Անդրկովկաս, գերմանական խոստումով՝ «**շտկել Օսմանյան կայսրության արևելյան սահմանները** այն ձևով, որ ապահովվի Թուրքիայի **անմիջական շփումը** Ռուսաստանում ապրող մահմեդական բնակչության հետ»[19]:

Ըստ էության, ողջ պատմական Հայաստանը տեղավորվում էր Մեծ ոճիրի շրջագծի մեջ: Օսմանյան կայսրությունը յոթ մղոնանոց քայլերով գնում էր ընդառաջ գալիք աշխարհամարտին, ընդառաջ (արևմտա)Հայաստանի համար վերջին ու վճռական ճակատամարտին՝ նրա ոչնչացման համապարփակ ծրագրի գործադրումով: Եվ որոշակի ձեռքբերումներով... Թուրքիայի «սահմանադրական զարգացման» շրջանում էլ ավելի էին ամրապնդվել «խաղաղ ազատագրման» հայոց հիվանդագին հակումները, հավատը գոյություն չունեցող (միասնական) Եվրոպայի[XI], «քրիստոնյա» Ռուսաստանի ու սահմանադրական կարգի վերաբերյալ և այլն... Վարանումի և կրավորականության աղետալի տարիների ընդհանուր պատկերը ճշգրտորեն է ներկայացնում Հարություն Ծահրիկյանը (Ատոմ). «Ծատ ջանք թափեցինք: Հանուն համերաշխության մեկ կողմ դրինք մեր բուն հայեցակետը. մեր հավատո հանգանակը՝ ժողովրդի ինքնապաշտպանությունը... Խաբվեցանք, կխոստովանիմ, խաբվեցանք...»: Եվ անհունի մեջ կարծես դիմելով հավաքական հայությանը (1914 թ.), մրմնջում է. «Ազատություն ստացաք, որ մո՛ւշ-մո՛ւշ քնանա՞ք. իսկ ո՞ւր են ձեր խմբերը, զենքերը ո՞ւր են...»[20]:

Հայոց ընտրախավի դիրքորոշումը, որը մեծապես ազդված էր Պոլսի և Անատոլիայի հայության cosmopolite միջավայրի տրամադրություններից, և ո՝չ հայրենիքի՝ ԲՈՒՆ Հայաստանի ընկալումներից, լավագույնս դրսևորվել է Գր. Զոհրապի տողերի մեջ. «Եվրոպացի մը, որպես իշխանության գլուխ՝ կամ ոչինչ: Կկարծենք, որ այստեղ առաջարկված լուծումեն դուրս ոչ մեկ հույս կա բարենորոգումները գործադրելու»[21]: Դիրքորոշումն, անշուշտ, ուներ իր առարկայական-տեսական հիմնավորումը. «Հայ ազգը իր հոգեվարքը կապրեր, երբ Սահմանադրության հռչակումով կարծեց շունչ մը առնել...»[22]: «Մենք առաջնորդված ենք ոչ թե անգո վիճակե մը,- բացատրում էր 1911 թ. նոյեմ. 25-ին Զոհրապը,- այլ իրականությունե...»: Սակայն, արմատապես սխալ էր հենց իրականության գնահատականը, ախտորոշումը. «...Թուրքիան անզոր կկարծեինք» (Կոմս), «ամբողջ իրականությունը կմնար մեզի համար անչափելի» (Կ. Սասունի): Ուրեմն, ոչ միայն հայոց երևակայությունից դուրս էր գալիք Մեծ ոճիրի գլոբալ մասշտաբը, անհասկանալի էր նաև, թե ինչո՞ւ անպաշտպան մնաց, Սահմանադրության շրջանում, հայոց քաղաքական կազմակերպությունը՝ Դաշնակցությունը, ազգի «տականքի» (Ռուբեն), սոցիալական ընդերքի, քաղքենու, գծուծ մեծահարուստի գրոհի դիմաց: «Սահմանադրության հռչակումով,- զայրույթով նկատում է Ռուբեն Տեր-Մինասյանը,- ամոթ էր հեղափոխական չըլլալը. և ահա ազգովին հայությունը դարձավ Դաշնակցություն, մանավանդ, որ թուրքն էր, որ կփառաբաներ Դաշնակցությունը և ֆեդայիները դարձած էին «վաթանփերվեր»-ներ (հայրենասեր - Լ. Ծ.)»[23]: Եվ Մշո առաջնորդարանն ու Դաշնակցության կենտրոնական մարմինները այդ օրերին «իսկույն շրջապատվեցան այնպիսի մարդկանցով, որոնք աֆերիստներ,

կառավարական պաշտոնյաներ կամ կառավարության շուրջ սլքտացողներ էին»[24]: Եվ ինչպես պատահել է (և պատահում է) հայոց ազգային կյանքում, ազգի նույն տականքը, սոցիալական ընդերքը, քաղքենին, գծուծ մեծահարուստը ստեղծում էր կրավորականության, հիվանդագին օտարամոլության, հարմարվողականության, եսակենտրոնության, մորթապաշտության թունավոր մթնոլորտ՝ ամլացնելով մարտական կազմակերպության որոշում կայացնելու կարողությունը: Պատահական չէ, որ բարենորոգումների շրջանում արդեն պատրաստ էր ծայրահեղ հնազանդության ենթահողը: Ազգը կորցրել էր կողմնորոշվելու կարողությունն ու ինքնապաշտպանության բնածին իմունիտետը: Բացված էր, այսպիսով, համազգային սպանդի և հայրենիքի կործանման ճանապարհը: Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի ողջ հայությանը, փոխանցում է այդ եղերական օրերի ճշգրիտ պատկերը Կ. Սասունին, «կկծկվեր հնազանդության և **ինքնապաշտպանության** վարագույրին ետև, սպասողական ու անզեն»[25]:

Օտար տերությունների **կամքը** (անհատական թե հավաքական) վիժեց բարեփոխումների **իրականացման** փուլում, այն զլացավ դրսևորվել նույնիսկ այն օրերին, երբ Հայաստանի ողջ տարածքում գրեթե թուրք չէր մնացել: «Բարեփոխիչների» կամքով վերածնվեց... կործանված Օսմանյան Հրեշը որպես Թուրքիայի Հանրապետություն: Էմիլ Դյումերգը (ֆրանսիացի հրապարակագիր), ամփոփելով այդ շրջանի հայոց քաղաքական ուղին, գրում է. «Բեռլինի դաշնագիրը, անարդար և զզվելի... սխալե մը ավելին էր: Ոճիր մըն էր անիկա հայերուն դեմ գործված: Բեռլինի դաշնագրին տողերուն ընդմեջեն դև մը հազիվ տեսանելի գրերով գրած էր 1878-1916 շրջանի ամբողջ ծրագիրը, և գիրերը սկսան կամաց-կամաց երևիլ կարմիր ջարդերու արյունին պես, հրդեհներու կրակին նման»[26]:

Առաջին աշխարհամարտը իր հետ անդունդ տարավ եվրոպական համանվագը, որն էլ սպանդանոցի վերածեց Արևմտյան Հայաստանն ու Օսմանյան կայսրությունը՝ հայերի համար:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[I] Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, 1908-1909, Տարոնեն Թիֆլիս, հ. Ե, Լոս Անջելես, 1951, էջ 13:

[I] Ադանայի երկփուլ նախճիրը փորձաքար եղավ Իթթիհատի դահիճների համար: Նորից համոզվեցին, որ կարելի է հայերին անխնա կոտորել խոշոր տերությունների աչքի (նավերը Մերսինի նավահանգստի դիմաց խարիսխ էին նետել) առջև, առանց միջամտության սպառնալիքի: Սակայն, կոտորածի առաջին հանգրվանը պսակվեց հայերի հաջողությամբ: «Զարմանալի ռազմագիտական հնարամտությամբ,- գրում է Վ. Տատրյանը,- բոլորովին անփորձ հայ մարտիկներ պաշտպանեցին հայոց թաղերը, միանգամայն ցուցաբերելով հերոսական խիզախության անթիվ օրինակներ»: Դրանից Իթթիհատը եզրակացրեց, որ «եթե հայերը հաջողեին նվազագույն չափով մը զինվիլ, թուրքերու համար լուրջ խնդիր մը կրնար ըլլալ զանոնք դյուրությամբ կոտորելը»: Երկրորդ փուլը եղավ զինաթափված հայերի «զանգվածային ողջակիզումի անօրինակ եղեռնագործություն մը...»: Անկասկած էր, որ «հայերու վաղընդփույթ սպանդը ամեն բանե առաջ պայմանավորված էր անոնց՝ թշնամիին կողմե կատարված նախազգուշական, բայց հայերու համար բախտորոշ զինաթափումով» (**Տատրյան** Վ., Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, «Պայքար», 1995, էջ 114, 115): Այս փորձը բացառիկ նշանակություն ունեցավ Մեծ եղեռնի ծրագրավորման և գործադրման մեջ:

[2] Տես Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел. Под ред. Е. А. Адамова, М., 1924, էջ 29:

[II] «Արևմուտքեն կծկված Թուրքիան,- գրելու էր Կ. Սասունին Արևմտյան Հայաստանը կորցնելուց շատ տարիներ հետո՝ իմաստավորելով Բալկանյան պատերազմների դերը Հայաստանի ճակատագրի մեջ,- պիտի գար լայնանար Արևելքի մեջ, տարածվելով Կովկաս, Պարսկաստան-Թուրքիստան, վերագրտնելով իր կայսերական հողերու տարածությունը, առավել բազմապատկելով իր թիվը իրմե անջատված ազգակիցներով: Էնվերն ու Թալեաթը մեծ անձնավոր-

տահությամբ նետվեցան այդ ջրապտույտին մեջ...» (**Սասունի** Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, 1914-1919, Բոստոն, 1927, էջ26-27):

Եվ Բալկանյան ժողովուրդների ազատագրության հարցում էր, որ հայ քաղաքական ընտրանին հանդես բերեց գաղափարախոսական դոգմատիզմ, երբ խնդիրը աշխարհաքաղաքական էր և շոշափում էր հայ ժողովրդի անվտանգության հարցը: Երբ, մի կողմից, հանդես բերելով հավատարմություն Թուրքիային (Ա. Թոյնբի), մյուս կողմից՝ Բուլղարիայում կազմակերպում էր Անդրանիկի ջոկատը Թուրքիայի դեմ: Այս գործողությունը ԲՈՒՆ Հայաստանում կոտորածների վտանգ էր առաջացնում (Տե՛ս **Թորլաքյան** Մ., Օրերուս հետ, Բ հրատ., Բեյրութ, 1963, էջ 176): Մինչդեռ իրավիճակի անելանելիությունը ենթադրում էր ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ապստամբություն (և ո՞չ հավատարմություն), ինչպես պահանջում էր Ռուբենը Բալկանյան պատերազմի օրերին (Տե՛ս **Դարբինյան** Ռ., Կյանքիս գրքեն, հ. Ա, Բեյրութ, 1972, էջ 421): Սակայն, հավաքական հայության երևակայությունից դուրս էր ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ տանող իրական ձեռնարկը:

III Սահմանադրության շրջանի համար, Տարոնի ՀՅԴ կազմակերպության օրինակով, Ռուբենը հայոց մարտական կազմակերպության համար մի ընդհանրացնող դիտողություն է անում. իբրև թե Սահմանադրությունից առավելագույն օգուտ քաղելու և դրան համապատասխան վարքագիծ մշակելու համար «կազմակերպությունը գրեթե կդառնար կուլտուրական հիմնարկություն մը, ... ֆետայությունը կոչնչացվեր ու հիմք կդրվեր խաղաղ, ստեղծագործ աշխատանքի» (Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. Ե, էջ 75): Այսպես զինաթափվեց ՀԱՅԱՍՏԱՆԸ:

3 Տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 130:

4 **Զոհրապ** Գ., Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ, թարգմ. ֆր., Բ տպ., Բեյրութ, 1983, էջ 9:

5 Տե՛ս **Վարանդյան** Մ., Հ.Յ.Դաշնակցության պատմություն, հ. Բ, Կահիրե, 1950, էջ 9:

IV «Դրօշակը» ճշգրտելով Դաշնակցության վերաբերմունքը Ներսես Վարժապետյանի ծրագրի հանդեպ, գրում էր. «...Տաճկահայերի կողմից միանգամայն անօգուտ և մինչև անգամ վտանգավոր է հույս դնել օտարի վրա և սպասել, թե Թուրքիո կառավարությունը ինքը իր կամքով բարենորոգումներ կշնորհե հայերին: Ցանկացած վիճակը ձեռք բերելու համար մեզ մնում է միայն դիմել այն միջոցին, որին դիմել են մեզանից առաջ միևնույն հանգամանքներու մեջ գտնվող ուրիշ մեզ նման քրիստոնյա ազգերը: **Այդ միջոցը ժողովրդական ապստամբությունն է: Ուրիշ ելք չկա** (ընդգծումն իմն է.- Լ. Շ.)» («Դրօշակ», 1891, մայիս, թիվ 1, էջ 3):

V Մինչև օրս անհասկանալի է, թե ի՞նչ չափանիշի կիրառությամբ և ո՞ր տեսական հայեցակարգի շրջանակներում 1908 թվականին Թուրքիայում իրականացված **սովորական զինվորական** հեղաշրջումը որակվեց հեղափոխություն: Սակայն, դրանով իսկ, Դաշնակցության վրիպումը, թեկուզև, Իթթիհատի հետ համագործակցության մեջ չէր: Ո՛չ: Այլ հեղափոխության պաշտպանության կարգախոսի տակ իր մարտական գործունեության մակարդակն ու որակը, հետևապես սպառազինման վիճակը բարելավել չկարողանալու մեջ էր: Իսկ ՀՅԴ հմայքը երիտթուրքերի աչքում իր մարտական ուժն էր: Դաշնակցության հետ համագործակցելու վաղանցիկ շրջանն էլ, թերևս, նույն մարտական հմայքից էր բխում:

6 Տե՛ս **Վարանդյան** Մ., Հ.Յ.Դաշնակցության պատմությունը, հ. Բ, էջ 20:

7 Նույն տեղը:

8 Նույն տեղը, էջ 21:

VI Զարմանալի հետևողականություն ունի թուրքի քաղաքական հոտառությունը: Քրդական խնդրի ճանապարհը փակելու մտահոգությամբ այսօր առաջարկվում են Իթթիհատի քաղաքական խաղերը, կիրառված հայոց հանդեպ թուրքական «հեղափոխության» շրջանում և հանգեցրած (թուրքա)Հայաստանի ամայացմանը, քրդական կողմին: Քաղաքական աշխարհին քաջածանոթ Մեհմեդ Ա. Բիրանդը, բաղձալի նպատակին հասնելու համար, ի մասնավորի, գրում է («Հյուրիեթ», 2005, դեկտ. 8). «Ամեն բան պետք է ընել (ներառյալ լայնածիր ներումը) PKK-ն լեռներեն իջեցնելու և զենքը վար դնել տալու, ահաբեկչութենեն հրաժարեցնելու համար: -Պետք է արտոնվի, որ ծագումով քուրդ քաղաքական դեմքեր քաղաքականությամբ զբաղին, Ազգային ժողով մտնեն: Քյուրտերուն քաղաքական դաշտ ներքաշվելով, ահաբեկչությունը արգելակել կդյուրանա: -Պետք չէ դյուրազգաց ըլլալ քրդական ինքնության բացահայտ կերպով նշումին, իրենց մշակույթը շարունակելուն դեմ: Ընդհակառակը, պետք է ընդառաջել անոնց»: Բիրանդը նշմարելով Թուրքիայի քաղաքականության «քրդական ուղղությունը», նաև շտապում է. այս ոլորտում «հապաղումը կրնա անդարմանելի ըլլալ»,- ասում է նա,- «ավելի երկար ժամանակի մինչև իսկ երկրին հյուսիս-արևելք գոտին (Բիրանդը որպես իսկական թուրք չի ասում Արևմտյան Հայաստանը - Լ. Շ.) կորուստին առաջնորդել...» (Տե՛ս «Յառաջ», 2005, դեկտ. 15): Բիրանդը չի ուզում ասել նաև, որ «քրդական քաղաքականության» շարունակությունը այս տեսքով կհանգեցնի քրդերի ցեղասպանությանը Արևմտյան Հայաստանում: Փոխարինեք PKK-ն ՀՅԴ-ով, քրդերը՝ հայերով, քեմալական Թուրքիան Թալեաթի Թուրքիայով, և կստանաք այն, ինչ որ քաջ հայտնի է:

9 Տե՛ս **Իշխանյան** Բ., Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907, էջ 21:

10 **Իշխանյան** Բ., Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, էջ 70:

VII Հայտնի է, որ Գերմանիան ամբողջովին մխրճված լինելով ռուս-թուրք-հայկական բանակցային գործընթացի մեջ, այդուհանդերձ, չստորագրեց համաձայնագիրը: Արդյունքները հայտնի են: Տասնամյակներ անց նույն տեսակետին էր հանգելու Վ. Նավասարդյանը. «Հայ Դատի» խորհրդային շրջանը մի անգամ ևս ապացուցեց, որ այն «կա՛մ կլուծվի իբրև միջազգային դատ, միջազգային համագործակցությամբ և միջազգային համերաշխության մեջ, և կամ չի

լուծվի»: Սևրը, որը ազգային դարավոր պայքարի արդյունք էր, «Հայ Դատի լուծման միակ եղանակն էր, ուր **միջազգային մրցորդ ուժերը իրենց հավասարակշռությունը կգտնեին ի շահ բոլորի** (ընդգծումը իմն է.- Լ. Շ.)»: Նավասարդյանը գտնում է, որ Հայ Դատի լուծման «այս եղանակեն դուրս ուրիշ եղանակ չկա»:

VIII Գաբրիել Նորատունկյանը 1912-1913 թվականների բալկանյան պատերազմի ժամանակ դեմ է եղել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը եվրոպական դիվանագիտության խնդիր դարձնելուն, այսինքն՝ չի ուզել 61-րդ հոդվածի կիրառության փորձ անել: Թե ինչո՞ւ, պատճառները անհայտ են:

11 «Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 3, Եր., 1999, էջ 245:

12 **Kolarz Walter**, La Russia et ses Colonies, London, 1952, էջ 192, տե՛ս **Իզմիրլյան Կ.**, Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս: Քննական տեսություն, Բեյրութ, 1964, էջ 157:

13 **Փափազյան Վ.**, Իմ հուշերը, հ. Բ, Բեյրութ, 1952, էջ 187:

14 **Իզմիրլյան Կ.**, Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը, էջ 157:

IX Հայոց ճակատագրի մեջ էական դեր խաղացած բարեփոխումների ծրագիրը այսպես է ներկայացնում Վահագն Տատրյանը. «Պոլսո պատրիարքին թելադրությամբ և Ամենայն Հայոց Կաթողիկոսին կարգադրությամբ,- գրում է նա,- մարմին առավ Պողոս Նուբարի դիվանագիտական առաքելությունը: Թեև առաքելության նպատակը Արևմտյան Եվրոպայի մեծ տերությունները հայոց ի նպաստ զորաշարժի մղել էր, բայց իրականության մեջ ռուսական դիվանագիտությունն էր, որ զորաշարժի անցնելով նախագիծ պատրաստեց, Թուրքիո վրա ճնշում բանեցուց, բանակցությունների նախաքայլերը առավ և անսովոր համբերատարությամբ մը այդ բանակցություններու արդյունավորումը ապահովեց: Գլխավոր դեր խաղացին ԱԳ նախարար Սազոնոֆ, դեսպան Գիրս և ավագ թարգմանիչ Անդրե Մանդելստամ»: Ռուսական այս նախաձեռնությունը բխում էր գլխավորապես, ինչպես հաստատեց բանակցությունների ընթացքը, գերմանական Թուրքիա ներթափանցումից: «Իրենց բուն պայքարը թուրքերեն ավելի,- ամփոփում է Վ. Տատրյանը,- գերմանական դեսպան Վանգհայմի դեմ էր, որ ամեն կերպով պաշտպանելով թուրքական շահերը, թուրքերի հետ միանալով՝ բանակցություններու ընթացքին ճակատ բռնած էր ռուսերու դեմ» (**Տատրյան Վ.**, Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, էջ 122):

X Հայ քաղաքական ղեկավարության համար անհասանելի մնացին փոփոխությունների այն մասշտաբները (միտումները), որոնց ենթարկվելու էր Օսմանյան կայսրությունը Համիդից հետո: Եվրոպայից արտամղվելով, դեպի Առաջավոր Ասիա «սեղմվող» օսմանյան զանգվածը պետք է շատ շուտով կորցներ Բալկանները, արաբական երկրները, աֆրիկյան գաղութները (շուրջ 1,5 մլն. քառ. կմ տարածք), փորձելով «տեղավորվել» Անատոլիայում և Արևմտյան Հայաստանում: Որ 150 տարի անընդհատ նահանջ ապրող երկիրը ավանդական թալանի մշակույթը, եղեռնաբաղձությունն ու ավարառության կիրքը ուղղորդելու էր ներս՝ առաջին հերթին **Հայաստան,** հայության և անդրենածին ժողովուրդների դեմ:

15 Տե՛ս **Իշխանյան Բ.**, Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, էջ 19:

16 Տե՛ս **Սարգսյան Ե. Ղ.**, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Եր., 1964, էջ 100:

17 Տե՛ս **Գանգրունի Հ.**, Հայ հեղափոխությունը Օսմանյան բռնատիրության դեմ, 1890-1910, Բեյրութ, էջ 302:

18 Տե՛ս Հուշամատյան Մեծ Եղեռնի, Բեյրութ, 1965, էջ 29:

19 **Լազյան Գ.**, Հայաստան և Հայ Դատ ըստ դաշնագրերու, Կահիրե, 1942, էջ 77:

XI Այս առնչությամբ տեսեք թե ինչ է գրում Կարո Սասունին՝ ներկայացնելով պատերազմի առաջին օրերի ազդեցությունը հայոց վրա: «Պատերազմը ընդհանուր բեկում առաջ բերած էր և շվարումի մատնած հայ հասարակությունը... հայոց օրիանթասիոնը եվրոպական հավաքական կամքի (անշուշտ խախուտ հավաքականություն մը) վրա հիմնված էր: Այդ հավաքական կամքը չկար» (**Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, էջ 21): Այդ կամքն, անշուշտ, չկար պոզիտիվ իմաստով: Սակայն «եվրոպական հավաքական կամքը» միասնական էր նեգատիվ իմաստով՝ հայոց համար չվնասել իրենց շահերը Թուրքիայում, միաժամանակ՝ ըստ հնարավորինս օգտագործելով հայերին նույն թուրքերի դեմ:

20 **Մինախորյան Վ.**, 1915 թվականը. Արհավիրքի օրեր. Վենետիկ – Ս. Ղազար, 1949, էջ 51, 52:

21 **Զոհրապ Գր.**, Հայկական հարցը, էջ 27:

22 Նույն տեղը, էջ 9:

23 **Ռուբեն**, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. Ե, էջ 33:

24 Նույն տեղը, էջ 34-35:

25 **Սասունի Կ.**, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 24:

26 **Doumerque Emil**, L'Armenie, les massacre et la question d'Oriemt, 1916, էջ 10-11, Տե՛ս **Իզմիրլյան Կ.**, Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը, էջ 107:

Իշխան ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

1915թ. Մեծ եղեռնի հետևանքով Արևմտյան Հայաստանից կատարված աննախադեպ բռնագաղթը հայերին դարձյալ սփռեց աշխարհով մեկ:

Իրենց պատմական հայրենիքում բնաջնջումից մազապուրծ եղած հայերը աշխարհի համարյա բոլոր անկյուններում ստեղծեցին նոր գաղթօջախներ և 20-րդ դարում թե Հայաստանում, թե հայրենիքից հեռու ապրող հայի համար հաճախակի գործածվող բառեր դարձան «սփյուռքն» ու «սփյուռքահայը»:

Թեև ծվատված ու մասնատված, մեծ երկրից ընդամենը մի փոքրիկ հողակտորի վրա ձևավորված հայկական պետության փաստին, աշխարհասփյուռ հայը հայացքը միշտ ուղղել է դեպի հայրենիք, ուշադիր հետևել է երկրի տնտեսական, հասարակական և մշակութային կյանքում տեղի ունեցող դրական տեղաշարժերին, աշխատել իր ներդրումը ևս ունենալ երկրի վերաշինման ու հզորացման, մշակույթի զարգացման ոլորտներում:

1921-1965 թթ. հայրենիք-սփյուռք առնչություններում ծանրակշիռ տեղ է զբաղեցրել նաև հայրենադարձությունը, որին հայ պատմագրությունը մի շարք ուշագրավ ուսումնասիրություններ է նվիրել:

Ընդունելով հանդերձ, որ հայ պատմագրության մեջ այս թեման բավականին ուսումնասիրված և լուսաբանված է, այնուամենայնիվ պետք է նշել, որ հասկանալի պատճառներով կատարվել է ոչ այնքան անկողմնակալ քննություն:

Բանն այն է, որ բոլոր ուսումնասիրություններն այս հարցը քննել են՝ շեշտելով Հայաստանի կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշխանության դերակատարումը, անտեսելով հայ քաղաքական մյուս կուսակցությունների (ՀՅԴ, Ռամկավար, Հնչակյան) կարևոր դերակատարությունը և վերաբերմունքը այս հարցում:

Մինչդեռ, վերոնշյալ կուսակցությունները հայրենադարձության գործընթացի ծավալման ժամանակ ունեցել են կարևոր դերակատարություն, չնայած միասնական ճակատով չեն գործել, ունեցել են տարբեր, երբեմն իրար հակասող մոտեցումներ և վերաբերմունք:

Ս.Դ. Հնչակյան կուսակցությունը սփյուռքում գործող կուսակցություններից առաջինն էր, որ հենց սկզբից որդեգրեց Խորհրդային Հայաստանի հետ համագործակցելու ուղին: 1920-1965 թթ. իրականացված հայրենադարձության ժամանակ հնչակյանները դարձան Խորհրդային Հայաստանի դաշնակիցն ու նեցուկը սփյուռքում:

Բազմիցս հայտարարելով, որ կուսակցության հույսերի ու ցանկությունների կռվանը Խորհրդային Հայաստանն է՝ համայն հայության պաշտոնական ներկայացուցիչը, հնչակյանները դարձան հայկական գաղթօջախներում ձևավորված հայրենադարձությանն օժանդակող կոմիտեների հիմնական միջուկը:

Գործընթացի ողջ ընթացքում հնչակյաններն իրենց պարբերականներում տպագրում էին հոդվածներ, որոնք գովերգում էին սոցիալիզմի ուղին բռնած իրենց հայրենիքի ձեռքբերումները տնտեսության, գիտության ու մշակույթի բնագավառներում, միջազգային շրջանակներում ԽՍՀՄ-ի վարկանիշի աճը հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո և այլն:

Սակայն ուսումնասիրելով հարցի պատմությունը և ձեռքի տակ եղած նյութերը՝ նկատում ենք, որ կուսակցությունն այս գովերգները հասցրել է ծայրահեղության, «չի նկատել» Խորհրդային վարչակարգի վարած քաղաքականության անընդունելի ու դատապարտելի կողմերը, ուղղակի շրջանցել է դրանք, ինչի հետևանքով մոլորության մեջ է գցել հայրենադարձներին՝ ասելով, որ հայրենիքում նրանց դրախտ է սպասում, ակամա նպաստելով հայրենիք վերադարձած որոշ զանգվածի մեջ ձևավորվող հուսահատության և այնտեղից կրկին հեռանալու մտադրության առաջացմանը:

1923–1924 թթ., երբ Խորհրդային Հայաստանը հայտարարեց, թե պատրաստ է ապրելու միջոցներ ունեցող գաղթական հայերին ընդունել և տեղավորել հայրենիքում, ՌԱԿ-ի կենտրոնական և շրջանային վարչությունները անմիջապես արձագանքեցին առաջարկին և կանգնեցին հայրենադարձությանն աջակցող Հնչակյան կուսակցության, ՀՕԿ-ի, ՀԲԸՄ-ի կողքին՝ ազգահավաքի խնդիրը համարելով ամենակարևոր և կենսական հարցը աշխարհով մեկ սփռված հայերի համար: ՌԱԿ-ի պատգամավորական ժողովներում միշտ քննարկվել է Խորհրդային Հայաստանի հետ կուսակցության համագործակցության հարցը, իսկ պարբերաբար իրականացվող հայրենադարձության ժամանակ ՌԱԿ-ը եղել է գործընթացի ակտիվ կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը:

ՌԱԿ-ը համեմատաբար չափավոր և ոչ ծայրահեղ դիրքորոշում է ունեցել այս հարցի նկատմամբ:

Հայրենադարձության նկատմամբ ամենակոշտ ու անհաշտ քաղաքականություն վարել է Հայ հեղափոխական դաշնակցությունը:

Դաշնակցականները՝ փաստելով, որ նախորդ երկու հայրենադարձությունները եղել են անհաջող և ձախողված միջոցառում, մտահոգություն էին հայտնում, որ այս անգամ էլ հայրենադարձությունը «սովետադարձություն» է նշանակելու և ազգային գաղափարներով ու հույսերով ապրող հայի «վերադաստիարակում»: Ոչ մի դաշնակցական չէր անտեսում հայրենադարձության փրկարար էությունը, ինչը, անտարակույս, ապազգայնացումից կփրկեր սփյուռքահային, դաշնակցական հայը վարանում չուներ «դեպի տուն» դիմելու իր զգացումի մեջ, բայց իրավացիորեն ուներ որոշ մտահոգություններ: «Ո՞վ է կազմակերպում ներգաղթը, ինչպե՞ս են կազմակերպում, ո՞ւր են տանում հայերին, ինչո՞ւ են տանում: Ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով են տանում»,- հետագա կործանարար հետևանքներից խուսափելու համար հարցնում էին այդ օրերի ՀՅԴ մամուլի խմբագրականները:

«Գացողը կը փրկուի ազգային ուծացումէ,- այս է ընդհանուր համոզումը: Ազգապահպանումի մտահոգութենէն թելադրուած այս արդար եզրակացութիւնը փաստ է անշուշտ: Թէ հայրենի հողի վրայ դալար կը մնանք իբրեւ հայ, թէ հայրենի հողը ընդմիշտ կը կապէ մեզ մայր զանգուածին եւ «ամբողջին» - ոչ մէկ կասկած այդ մասին»,- հավաստում է «Հայրենիք» օրաթերթի խմբագրականը (1962 թ. դեկտ. 25):

ՀՅԴ-ն գտնում էր, որ ուծացման վտանգը սպառնում է որոշ գաղթօջախներում ապրող հայերին միայն, մինչդեռ կան երկրներ, որտեղ ապաստանած հայերի համար այլևս ծուլման վտանգ չկա, հայերը կարող են դիմանալ, արմատներ ձգել և ընձյուղվել, եթե այդ գործը խելամտորեն ծրագրվի և կազմակերպվի:

Դաշնակցությունը դեմ չէր որոշ հայաշատ գաղութներից հայերի հայրենադարձությանը, սակայն մի վերապահությամբ՝ հայերը մնան Հայաստանում, հայկական

հողի վրա, չքշվեն «խոպան հողեր» և այլուր, կամ կյանքի դժվարությունները տեսնելով, սեփական նախաձեռնությամբ չտեղափոխվեն Բաքու, Մոսկվա և այլ խոշոր արդյունաբերական կենտրոններ, ինչի հետևանքով արդյունքը կլինի այն, որ Ֆրանսիայի, Հունաստանի, Լիբանանի, Կիպրոսի կամ այլ գաղութի օտարացման վտանգին ենթակա սերունդները, այս անգամ, կռուսանան կամ կդառնան «սովետական քաղաքացի» ու կրկին կկանգնեն ազգային ինքնությունը կորցնելու վտանգի առաջ:

Դաշնակցության համար հայրենադարձությունը լոկ հայապահպանության հարց չէ. Հայ դատի, հայկական հողերի և հայի պատմական իրավունքների խնդիրը ևս նրանք կապում էին հայրենադարձության հետ:

Խորհրդային կառավարող շրջանները այս մասին ընդհանրապես չէին մտածում, մինչդեռ հայրենիքից դուրս գտնվող գաղթօջախները կարող էին դառնալ Հայ դատի լուծման կարևոր ազդակներ:

Ահա այստեղ է, որ Դաշնակցության դիրքորոշումը տարբերվում էր մյուսներից և, կարծում ենք, որ Հայ դատի լուծման հեռահար նպատակն է նաև վճռորոշ դեր խաղացել ՀՅԴ-ի քաղաքականության մեջ, և հենց սրանով պիտի բացատրել նրանց ճիգ ու ջանքը սփյուռքում՝ հոծ զանգված ունենալու ուղղությամբ:

Ներգաղթի գաղափարը հայ ժողովրդի ազգահավաքության, հայկական հողի վրա հաստատվելու ամենափայփայված գաղափարն է եղել ոչ թե Հայաստանի խորհրդայնացումից հետո, այլ ժողովրդի պանդխտության հենց առաջին օրերից:

«Ներգաղթի գաղափարականը,- գրում է Արմեն Ազատը «Հայրենիքի» 1963 թ. օգոստոսի 29-ի համարում,- գաղութահայի մտքում զուգահեռ է հայրենիքի սիրոյ եւ պաշտամունքի զգացումին հետ»:

Սակայն հայ մարդը, երբ ասում էր ներգաղթ, հասկանում էր ազատ ու անկախ հայրենի հողի վրա ազգահավաքի կազմակերպումը, իր ստեղծագործական բոլոր ունակությունները հայ ազգի բարգավաճմանն ու հզորացմանն ի սպաս դնելը, իսկ համայնավարների համար՝ ներգաղթը հայ ժողովրդի ազգային միավորումը չէր, այլ Հայաստանում փակ գործարանների աշխատող ուժի կարիքը գոհացնելու միջոց:

Մյուս կողմից էլ կոմկուսը փորձում էր աշխարհին համոզել, թե հայերը վերադառնում են հայրենիք՝ «սիրո՛վ ապրելու իրենց ռեժիմի տակ»:

ՀՅԴ-ն իր մամուլի միջոցով քննադատում է ռամկավարներին և հնչակյաններին այն բանի համար, որ նրանք, քաջատեղյակ լինելով Հայաստանի կյանքին ու այնտեղ կատարվող անցուդարձին, այնուամենայնիվ կեղծում էին իրողությունն ու այդ կյանքը ներկայացնում ոչ այնպես, ինչպես իրականում կար:

Այս սխալ քարոզչության պատճառով նախկինում արված հայրենադարձությունները այնքա՞ն հիասթափությունների ու գեղեցիկ պատրանքների փլուզման պատճառ դարձան:

Մինչդեռ այս բոլորը չէր լինի, եթե յուրաքանչյուր հայ տեղյակ լիներ հայրենիքում տիրող վիճակին և գիտակցաբար մեկներ այնտեղ՝ պատրաստ՝ տանելու բոլոր դժվարություններն ու անհարմարությունները, ուստի պետք էր ճշմարտությունն ասվեր սփյուռքահային, խոսվեր Հայաստանի թե՛ նվաճումների, թե՛ բացթողումների մասին, քանի որ Հայաստանի տերը հայ ժողովուրդն է՝ հայրենիքի թե սփյուռքի մեջ:

«Ալիքի» 1963 թ. նոյեմբերի 18-ի «Հայրենադարձների «աւերիչ գաղափարները»» խմբագրական հոդվածում նշվում է, որ Հայաստանի կոմկուսի ղեկավար Զարոբյանը դժգոհ է, որ հայրենադարձները իրենց հետ բերում են «ավերիչ գաղափարներ», այսինքն՝ ազգայնականություն, և առաջարկում է շուտ ձերբազատվել դրանից, «վերադաստիարակվել» և փառաբանել կոմունիստական կուսակցությանն ու Նիկիտա Խրուշչովին:

«Ի՛նչ տարօրինակ, ի՛նչ առեղծուածային եւ ի՛նչ ողբերգական ճակատագիր ունի հայ մարդը:

Նա պանդուխտ է, գաղթական, տարագիր, ապրում է օտարութեան դաժան ցուպը ձեռքին, ու միշտ հայրենաբաղձ, հայրենիքի սէրն ու կարօտը սրտին, աչքը մըշտապէս յառած դէպի հայրենիք, պատրաստ՝ վերադառնալու Հայաստան եւ այնտեղ ապրելու իբր հայ, աշխատելու, ստեղծագործելու հայկականութեան մէջ եւ հայկականութեան համար:

Եւ, ահա, նա վերադառնում է՝ դէն շպրտելով օտարի աւետարանը: Սակայն իր երազած հայրենիքի հողը չկոխած՝ նրա ձեռքը տալիս են մի ուրիշ օտարի աւետարանը ...»,- ավարտում է խոսքը խմբագրականը:

«Ներգաղթը եւ 23-րդ համագումարը» խմբագրականը, որ տպագրվել է «Ալիքի» 1964 թ. մարտի 24-ի և 25-ի համարներում, անդրադարձել է կոմկուսի 23-րդ համագումարում ներգաղթի հարցի շուրջ ծավալված քննարկումներին, ուր տեղ են գտել անհիմն քննադատություններ Դաշնակցության հասցեին: Ձախողված միջոցառման համար քավության նոխազ փնտրելով և ողջ մեղքը բարդելով Դաշնակցության վրա՝ նրանք համարում էին, որ Դաշնակցության շանտաժի և ահաբեկման հետևանքով տուժեց հայրենադարձության գործը:

Մինչդեռ Դաշնակցությունը, «դաշնակցական պարագլուխները» եւ դաշնակցականները շանտաժներ չեն արել, այլ հիմնվելով իրական եւ փաստական տվյալների վրա, բացահայտել են կոմկուսի իրական քաղաքական նպատակները, որ թելադրվել է իրենց ազգային և քաղաքական պարտականության կողմից, քանի որ Դաշնակցությունը շատ լավ գիտակցում էր, որ հայրենադարձությունը, իբրև այդպիսին, իրականում չկա. կա սովետադարձություն, քողածածկ մի նպատակ, որի հետևանքով հայրենադարձության ձախողման պատճառ դարձան և՛ նրա կազմակերպչական եղանակներն ու ձևերը, և՛ նրա բուն էությունն ու բնույթը:

Խ. Հայաստանի կառավարությունը հայրենադարձությունը հռչակեց իբրև ազգահավաքման գործ և սփյուռքում նրանց կամակատարներ հնչակյան և ռամկավար կուսակցությունները թմբկահարեցին այն՝ դրվատելով հայկական պետության ազգաշեն և ազգանվեր գործունեությունը, և հենց սրանով թյուրիմացության մեջ գցեցին հազարավոր գաղթականների, խեղեցին արդեն իսկ բնավեր դարձած հազարավոր հայերի ճակատագրեր:

Քարոզչության ընթացքում երբեք չշահարկվեց «սովետական» բառը, իսկ երբ սկսվեց հայրենադարձությունը, պարզվեց, որ ոչ բոլոր հայերի դարձն է ցանկալի հայրենիքի համար, որ եթե Հայաստանը կա, պետություն է, կառավարություն ունի, ապա ինչո՞ւ գնացողները ամիսներով ու տարիներով պետք է ստիպված սպասեին ռուսական դեսպանատների առջև:

Ներգաղթի կազմակերպիչները միշտ խոսել են հայրենիքի և հայրենասիրության մասին և երբեք չեն խոսել սովետական մարդ ստեղծելու և նրան «սոցիալիստական ինտերնացիոնալիզմի» ոգով վերադաստիարակելու մասին, սակայն հայրենիք վերադարձած հայը զգում էր, որ տարբեր բան էր լսել, երբ Սփյուռքում էր գտնվում, տարբեր բան է լսում եւ տարբեր բան են ասել տալիս, երբ Հայաստանում է գտնվում:

Սա պատճառ դարձավ ներգաղթի բարոյահոգեբանական երկրորդ հիասթափության և բեկման համար, ինչը հուսախաբության մատնեց ոչ միայն ներգաղթած հայերին, այլև սփյուռքահայությանը:

Հուսախաբված ու հիասթափված հայությունը Մերձավոր Արևելքի և Եվրոպայի շատ երկրներից նորից բռնեց արտագաղթի ուղին, փորձեց հեռավոր Ամերիկայում, Կանադայում, Ավստրալիայում և այլուր որոնել իր բախտն ու հիմնական բնակավայրը:

ՀՅ Դաշնակցությանը, փաստորեն, մտահոգել են հարցեր, որոնք ամենևին էլ անհիմն չեն եղել, և կուսակցությունը իր մտավախությունն է հայտնել, որ Խորհրդային Հայաստան մեկնող հայերը դարձյալ հայտնվելու են գաղթականի կարգավիճակում՝ ցրվելով անծայրածիր Ռուսաստանում և մյուս հանրապետություններում, որ նրանց շարունակելու է սպառնալ ուծացման վտանգը, և վերջապես՝ սփյուռքի հայաթափությունը հետագայում մեծ վտանգի տակ կդներ և՛ Հայ դատի, և՛ մեր պատմական հայրենիքի գոնե մի մասը ետ ստանալու մեր ժողովրդի իրավացի պահանջը:

Հ. Գ. - Հիմնախնդրի ուսումնասիրությունը կարևոր և արդիական է մի այլ տեսանկյունով ևս: Այսօր, երբ հայ ժողովրդի կեսից ավելին բնակվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, երբ հանրապետության օրենսդիր մարմինը դարձյալ լուրջ քննարկումներից ու ծայրահեղորեն տարբեր կարծիքների բախումներից հետո այնուամենայնիվ ընդունեց երկքաղաքացիության մասին օրենքը, հայրենադարձության խնդիրը կա ու լինելու է երկկողմ ուշադրության կենտրոնում, ուստի հարցի պատմության և փորձի ուսումնասիրումը ունի մեծ նշանակություն՝ հետագայում հիմնախնդրին ճիշտ լուծում տալու համար:

Հայ և հրեա համայնքներ.

համագործակցության հնարավոր միտումներ

Կարեն Վերանյան

Տեղաշարժեր հրեական համայնքներում

Վերջին 15 տարիների ընթացքում հրեական համայնքների ներսում աստիճանաբար տեղի են ունենում նոր տեղաշարժեր, որոնք պայմանավորված են մի շարք հիմնախնդիրներով և ունեն գործընթացի ակտիվացման, ընդլայնման միտումներ: Համաշխարհային հրեականության նորագույն պատմության մեջ շոշափելի այդ տեղաշարժերն իրենց հիմքում կրում են ինչպես սոցիալ-տնտեսական, քաղաքական, այնպես էլ գաղափարական շարժառիթներ: Մասնավորապես, վերջին 10 տարիների կտրվածքով, ի հաշիվ հիմնականում Միացյալ Նահանգների, Կանադայի, Արևմտյան Եվրոպայի հրեական համայնքների, նաև Իսրայելի հրեա բնակչության, ընթանում է համաշխարհային հրեականության մի զգալի հատվածի տնտեսական, քաղաքական ու գաղափարական կապիտալի (ռեսուրսներ) կենտրոնացում Արևելյան, Հարավարևելյան Ասիայում: Դա է վկայում վերջին ժամանակներս ասիական մայրցամաքի տարբեր հատվածներում հրեական խոշորագույն նոր կազմակերպությունների, կենտրոնների հիմնադրման իրողությունը: Հարցի կապակցությամբ, սակայն, հարկ է հստակեցնել մեկ կարևորագույն առանձնահատկություն. համաշխարհային հրեականության այն ստվար հատվածը, որ մտադիր է իր ապագան կապել ասիական մայրցամաքի հետ, մեծ հեռանկարներ է տեսնում առաջին հերթին Ռուսաստանի Դաշնության հետ այդ համայնքների համագործակցության խորացման գործում: Ավելին, ինչպես հաստատում են արևմտյան և ոչ միայն արևմտյան լրատվամիջոցներն ու փորձագիտական հանրությունները, Ռուսաստանը հսկայական ներուժ ունի առաջիկա տարիներին Իսրայելի սահմաններից դուրս համաշխարհային հրեականության խոշորագույն կենտրոններից մեկը դառնալու: Պատահական չէ, որ վերջին շրջանում արագ քայլեր ձեռնարկվեցին Ռուսաստանի Դաշնությունում հրեական հոգևոր և աշխարհիկ խոշորագույն կենտրոնների հիմնադրման, համաշխարհային հրեական

կազմակերպությունների ներկայացուցչությունների բացման ուղղությամբ: Այսպես. դեռևս 1993 թ. փետրվարին, ռուսաստանյան հրեական հոգևոր համայնքների միավորման ու կենսագործունեության պայմանների բարելավման նպատակներով, հիմնադրվեց «Ռուսաստանի հրեական կրոնական համայնքների ու կազմակերպությունների կոնգրես»-ը (ՌՀԿՀԿԿ): Ներկայումս Կոնգրեսը միավորում է ՌԴ տարբեր քաղաքների 33 հրեական համայնքներ: Նկատենք, որ կազմակերպությունը չունի վարչական իշխանություն, այլ իրականացնում է զուտ խորհրդատվական-համակարգող, ինչպես նաև ներկայացուցչական գործառույթներ: ՌՀԿՀԿԿ-ն հիմնականում զբաղվում է տարածաշրջանային գիտաժողովների կազմակերպման, հրեական համայնքներում գործունեություն ծավալելու նպատակով կադրերի վերապատրաստման և այլ աշխատանքներով: Կոնգրեսը ղեկավարում է Ռուսաստանի հրեաների գլխավոր Ռաբբին (Ադոլֆ Շաևիչ): Իսկ 1996 թ. մի խումբ հրեա խոշոր գործարարների, հրեական համաշխարհային կազմակերպությունների ղեկավարության և հայտնի հոգևոր հրեա գործիչների նախաձեռնությամբ ու աջակցությամբ Ռուսաստանի Դաշնությունում հրեական համայնքների սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքի ակտիվացման նպատակներով հիմնադրվեց «Ռուսաստանի հրեական կոնգրես»-ը (ՌՀԿ): ՌՀԿ-ն իրենից ներկայացնում է մի կառույց, որը կարճ ժամանակամիջոցում կարողացավ իր շուրջը միավորել Ռուսաստանում նախորդ դարի 90-ականներին գործող և միևնույն ժամանակ միմյանցից անկախ ու անտեղյակ բազմաթիվ հրեական կենտրոններն ու կազմակերպությունները, որոնք ներկայացնում էին ռուսաստանյան հրեական համայնքների հոգևոր, մշակութային, սոցիալ-տնտեսական, քաղաքական և գաղափարական շերտերը[1]:

1998 թ. նոյեմբերին, ետխորհրդային տարածքում բնակվող հրեա հոգևոր և աշխարհիկ համայնքների առաջնորդների աջակցությամբ, հիմնադրվեց «ԱՊՀ հրեական համայնքների դաշնությունը», որի առաքելությունը խորհրդային վարչակարգի փլուզմամբ նորանկախ հանրապետություններում գործող հրեաների ու հրեական համայնքների սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային գործունեության զարգացումն ու այդ համայնքների միջև կապերի ամրապնդումն էր: «ԱՊՀ հրեական համայնքների դաշնությունը» ֆինանսավորում են ինչպես տարբեր հասարակական կազմակերպություններ (օր.՝ «Խաբադ-Լյուբավիչ շարժումը», «Ջոյնթը», «Բոստոնի հրեական բարեգործություն» կազմակերպությունը), անհատ գործարարներ ու մասնավոր հիմնադրամներ (Լազար և Պերլա Ժիլսինսկիները Ֆլորիդայից, «Նյուտոնի և Ռոշել Բեկերի հիմնադրամը»), այնպես էլ պետական կառույցներ (Իսրայելի կրթության և կրոնի հարցերի նախարարությունները): Կազմակերպության կենտրոնական գրասենյակը գտնվում է Մոսկվայում, ներկայացուցչություն ունի նաև Միացյալ Նահանգներում:

«ԱՊՀ հրեական համայնքների դաշնության» ստեղծումից կարճ ժամանակ անց՝ 1999 թ. Ռուսաստանում սկսեց իր գործունեությունը ծավալել «Ռուսաստանի հրեական համայնքների դաշնությունը» (ՌՀՀԴ), որն իրենից ներկայացնում է համառուսաստանյան հրեական կրոնական կամավոր կազմակերպությունների միավորում, որը ներառում է ՌԴ-ում մշտական հիմունքներով բնակվող և հուդայական կրոնի հետևորդ հանդիսացող քաղաքացիներին: Նշենք, որ կազմակերպության հիմնական նպատակն է Ռուսաստանի հրեաների կրոնական, ազգային-մշակութային կյանքի բարելավման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: ՌՀՀԴ-ն կարևորում է նաև ԱՊՀ տարածքում և այլ տարածաշրջաններում բնակվող հրեական կրոնական կազմակերպությունների հետ կապերի զարգացումը:

Գործունեության առավել լայն շրջանակներ է ընդգրկում մասնավորապես Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս բնակվող ռուսալեզու հրեաների համախմբման նպատակով 2002 թ. հիմնադրված «Ռուսալեզու հրեականության համաշխարհային կոնգրես»-ը (ՌՀՀԿ): ՌՀՀԿ-ն կարողացավ միավորել ռուսալեզու հրեական համայնքներին, որոնք ընդհանուր առմամբ ներկայացնում էին շուրջ 27 երկիր (Իսրայել, Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, ԱՊՀ և ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջաններ): Կազմակերպության ղեկավարության առանձնահատուկ ուշադրության կենտրոնում են գտնվում ետխորհրդային տարածքում բնակվող հրեական համայնքների միավորման ու նրանց սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի բարելավման խնդիրները: ՌՀՀԿ պաշտոնական տեղեկատվության համաձայն, աշխարհում ներկայումս բնակվում է ավելի քան 3 մլն. ռուսալեզու

հրեա, ինչը կազմում է ողջ հրեա բնակչության շուրջ 25%-ը: Նշենք նաև, որ 2007-ի նոյեմբերի 5-ին, Մոսկվայում կայացած ՌՀՀԿ մայրցամաքային ներկայացուցչությունների խորհրդի նիստում, կոնգրեսի նախագահի պաշտոնում ռուսաստանյան ներկայացուցչի՝ Բորիս Շպիգելի ընտրությունը, ինչպես նկատում է վերլուծաբանների զգալի մասը, նոր լիցք կհաղորդի ինչպես Ռուսաստանի հետ ռուսալեզու հրեական համայնքների կապերի ամրապնդմանն ու խորացմանը, այնպես էլ կնպաստի Ռուսաստանի և Իսրայելի միջև համագործակցության ընդլայնմանը: Ի դեպ, վերջերս Միացյալ Նահանգներում ստեղծվեց ՌՀՀԿ Ամերիկյան ֆորումը, որը լուրջ գործունեություն է սկսել ծավալել ռուսալեզու հրեական համայնքների շահերի պաշտպանության ուղղությամբ՝ միավորելով տեղի շուրջ 87 ռուսալեզու հրեական կազմակերպություններին: Կոնգրեսը լուրջ աշխատանքներ է իրականացնում նաև Գերմանիայի հրեա բնակչության շահերի պաշտպանության հարցերում՝ ոլորտում սերտորեն համագործակցելով «Գերմանիայի հրեաների կենտրոնական խորհրդի» հետ, որի ղեկավարն ունի պետնախարարի կարգավիճակ[2]:

Անհրաժեշտ է նշել, որ Ռուսաստանի Դաշնությունում գործող հրեական հոգևոր կամ աշխարհիկ կենտրոնների ցուցակը չի սահմանափակվում վերը նշված կազմակերպություններով, սակայն սույն վերլուծությունում խնդիրը նրանց զուտ ներկայացնելը չէ: Առավել կարևոր է ծանրանալ հիմնական այն դրդապատճառների ու միտումների վրա, որոնք հիմք հանդիսացան վերջին 15 տարիներին Ռուսաստանում հրեական քաղաքական-տնտեսական, գաղափարական կապիտալի կենտրոնացման համար: Այսպես.

Խորհրդային կարգերի փլուզումը և Ռուսաստանի Դաշնության հռչակումը, որի արդյունքում նոր հորիզոններ բացվեցին Ռուսաստանում և ետխորհրդային մնացած տարածքում հրեական համայնքների ազգային, հոգևոր-մշակութային կյանքի բարելավման ուղղությամբ.

Ռուսաստանում հրեական համայնքների ենթակառուցվածքների ձևավորումն ու զարգացումը.

ԽՍՀՄ փլուզումից հետո և հատկապես վերջին կես տասնամյակում Ռուսաստանի տնտեսական աճի բարձր տեմպերը և երկրի քաղաքական կայունությունը կարևորագույն երաշխիք են ՌԴ-ում հրեական տնտեսական կապիտալի ակտիվացման գործում.

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության փոփոխությունները Մերձավոր Արևելքում (նավթագազային գործոն, ԱՄՆ-արաբական աշխարհ, ԱՄՆ-Իսրայել հարաբերություններ, ահաբեկչության դեմ պայքար և այլն) դանդաղ, սակայն զգալի բացասական ազդեցություն են թողնում տեղի հրեա բնակչության տնտեսական, քաղաքական կապիտալի պահպանման վրա (նկատի առնելով նաև վերջինիս ապահովագրության երաշխիքի հարցը).

Ըստ որոշ մասնագետների, Միացյալ Նահանգների ներքին քաղաքականությունը, փոխկապակցված արտաքին մարտահրավերներով, ինչպես նաև ամերիկյան հասարակությունում ընթացող խորքային սոցիալ-տնտեսական փոփոխությունները, նույնպես դրական հեռա-

նկարներ չեն կանխատեսում տեղի հրեաների բարեկեցության ապահովման համար.

ԱՄՆ-ի հանրապետական վարչակարգի տարիներին Միացյալ Նահանգների տնտեսությունում, ինչպես հաստատում են բազմաթիվ մասնագետներ, նկատվում է հրեական ֆինանսական կապիտալի ազդեցության ու դերի աստիճանական նվազում.

որոշ տվյալների համաձայն, պաղեստինա-իսրայելյան հիմնախնդրի չկարգավորվածության, ժամանակ առ ժամանակ ընթացող ռազմական բախումների, ահաբեկչությունների հետևանքով Իսրայելի բնակչության մի մասը և հատկապես խորհրդային հայրենադարձները, անվտանգ ու բարեկեցիկ կենսապայմանների ակնկալիքով գերադասում են արտագաղթել Ռուսաստան.

Իսրայելում խորհրդային և ետխորհրդային հայրենադարձների մի մասը շարունակում է կապեր պահպանել ռուսաստանյան ազգականների հետ և դեռևս կրում է ՌԴ քաղաքացիություն.

Ռուսաստանում և ԱՊՀ տարածքում հրեական համայնքների զարգացման հարցում շահագրգռված է նաև Իսրայելի պետությունը՝ ԱՄՆ-ի հրեականությանն այլընտրանքային հրեական կենտրոնների ձևավորման, աշխարհաքաղաքական նոր տրանսֆորմացիաներին համարժեք արձագանքման նպատակներով (օր.՝ Չինաստանի գործոնը).

Եվրոպայում և մասնավորապես Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում ու Բելգիայում հակահրեականության միտումների ուժեղացմամբ՝ տեղի հրեաների մեծ մասը գերադասում է տեղափոխվել հիմնականում ԱՄՆ, Կանադա, Ռուսաստան և Իսրայել[3]:

Այն հանգամանքը, որ Ռուսաստանը պոտենցիալ հնարավորություններ ունի դառնալու համաշխարհային հրեականության խոշորագույն կենտրոններից մեկը, հաստատում են նաև հրեական խոշոր կազմակերպությունների ներսում վերջին զարգացումներն ու իրադարձությունները: Նախ առանձնացնենք այն փաստը, որ 1986 թ. հիմնադրված «Եվրոպական հրեական կոնգրես»-ի (ԵՀԿ) նախագահի պաշտոնում 2007-ի հունիսին, կոնգրեսի պատմության մեջ առաջին անգամ, ընտրվեց ռուսաստանյան ներկայացուցիչ, «Ռուսաստանի հրեական կոնգրես»-ի նախագահ Վյաչեսլավ Կանտորը՝ թեժ մրցակցության արդյունքում հաղթանակ տանելով կոնգրեսի նախկին նախագահ, ազգությամբ ֆրանսիացի Պիեր Բեսնայնուի նկատմամբ: ԵՀԿ նախագահի պաշտոնում ռուսաստանյան ներկայացուցչի առաջադրումը և արդյունքում հաղթանակը խորհրդանշում են երեք իրողություն. նախ այն, որ վերջին ժամանակներս համաշխարհային հրեականությունը սկսել է էլ ավելի կարևորել Ռուսաստանի դերն ու նշանակությունը հրեական համայնքների զարգացման հեռանկարների առումով, երկրորդ՝ Ռուսաստանը, պայմանավորված երկրի տնտեսական աճի բարձր տեմպերով ու քաղաքական կայունությամբ, բարեկեցիկ կենսապայմաններ է խոստանում տարբեր աշխարհամասերից ու երկրներից դեպի Ռուսաստան հրեաների արտագաղթի համար: Եվ երրորդ՝ Ռուսաստանը հետագայում պոտենցիալ հնարավորություններ է ձեռք բերում մեծացնելու դերակատարումը եվրոպական հրեական համայնքային կյանքում և դառնալու նրանց առաջատարը[4]: Նշենք, որ ԵՀԿ-ն, որի գլխավոր գրասենյակը տեղակայվում է Փարիզում, միավորում է Եվրոպայի շուրջ 42 հրեական համայնքներ՝ ընդհանուր առմամբ 2,5 մլն. բնակչությամբ[5]:

Անհրաժեշտ ենք համարում առանձնացնել նաև, որ նախքան ԵՀԿ նախագահի պաշտոնը ստանձնելը՝ 2006 թ. փետրվարին Վ. Կանտորի նախաձեռնությամբ ու նախագահությամբ հիմնադրվեց «Եվրոպական հրեական հիմնադրամ»-ը (ԵՀՀ)՝ Եվրոպայում հրեական համայնքների կենսապայմանների բարելավման, հակասեմականության վերացման ու հրեական ազգային-մշակութային ինքնագիտակցության բարձրացման, հրեականության առջև կանգնած միջազգային սպառնալիքների (ահաբեկչություն, միջուկային զենքի տարածում) դեմ պայքարի նպատակներով: Ի դեպ, Վ. Կանտորը 2002 թ. նշանակվել էր վերջերս ստեղծված, սակայն արդեն միջազգային բարձր հեղինակություն ունեցող «Եվրասիական հրեական կոնգրես»-ի փոխնախագահ՝ Հարավարևելյան Ասիայի երկրների ու Չինաստանի, ինչպես նաև Ռուսաստանի հետ մշակութային և այլ փոխհարաբերությունները համակարգելու հարցերով:

Եվս մեկ կարևոր ցուցիչ. 2005 թ. Լեհաստանում կայացած «Կյա՛նք իմ ժողովրդին» (Let my people live!) առաջին միջազգային ֆորումում Իսրայելի, Լեհաստանի և Ռուսաստանի ղեկավար-ներկայացուցիչները հանդես եկան «Հոլոքոսթի հիշողության համաշխարհային ֆորում» հիմնադրամի ստեղծման մասին հայտարարությամբ: Հիմնադրամի հռչակագրի համաձայն, նորաստեղծ կառույցն իր առջև դնում էր երկու հիմնական առաքելություն՝ Հոլոքոսթի հիշողության կանոնավոր միջազգային ֆորումների կազմակերպում և «Յադ-Վաշեմ» Հոլոքոսթի հիշողության ուսուցման միջազգային դպրոցի ու «Եվրոպական հրեական կոնգրես»-ի համատեղ նախաձեռնությանը պատկանող «Հոլոքոսթի հիշողության եվրոպական կրթական ծրագրի» իրագործում: Հիմնադրամը, որի հիմնադիրն է համարվում կրկին Վ. Կանտորը, ներկայումս ներկայացուցչություններ ունի Մոսկվայում, Ժնևում և Երուսաղեմում[6]:

Ռուսաստանի հայությունը. համագործակցության հեռանկարներ

Վերջին տարիներին ասիական մայրցամաքում և առաջին հերթին Ռուսաստանում ու ԱՊՀ տարածքում, հրեական համայնքների ակտիվացման միտումներին գրեթե զուգահեռ, նոր տրանսֆորմացիոն գործընթացներ են տեղի ունենում նաև Հայաստան-հայկական համայնքներ հարաբերություններում ու Ռուսաստանի հայության ներհամայնքային կյանքում: Առանձնահատուկ պետք է անդրադառնալ Հայաստանի սահմաններից դուրս հայկական սփյուռքի հասարակական-քաղաքական, սոցիալական ու մշակութային կյանքում Ռուսաստանի հայության դերի մեծացման միտումներին, որի համար կարելի է առանձնացնել մի քանի հիմնական նախադրյալներ.

Հայաստանի Հանրապետությունից, գերազանցապես սոցիալական դրդապատճառներով, աշխատուժի զանգվածային կանոնավոր արտահոսքը դեպի Ռուսաստանի Դաշնություն.

հայ-ռուսական քաղաքական, տնտեսական բարիդրացիական հարաբերությունները, և ամենակարևորը՝ երկու ժողովուրդների միջև հոգևոր-մշակութային ընդհանրությունները (ի տարբերություն ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի).

ԱՊՀ տարածքում բնակվող, այդ թվում և Վրաստանի հայության, ջավախահայության, աբխազահայության, ինչպես նաև ԼՂՀ մի ստվար հատված, սոցիալ-տնտեսական իր բարեկեցության ապահովումը տեսնում է նախ և առաջ Ռուսաստանում, ոմանք էլ գերադասում են հայրենադարձվել հայրենիք.

և վերջապես, հատկապես վերջին տարիներին, Ռուսաստանի հայությունը ներկայանում է ոչ թե սոցիալականացված մի կառույց, ինչպես նախկինում էր, այլ ձեռք է բերել համայնքային կազմակերպվածության բավականին բարձր մակարդակ:

Վերջին շրջանում Ռուսաստանի հայության համայնքային կյանքում տեղի ունեցած պատմական իրադարձություններից առաջին հերթին պետք է նշել 2000 թ. ռուսաստանյան խոշոր հայ գործարար Արա Աբրահամյանի նախագահությամբ «Ռուսաստանի հայերի միության» (ՌՀՄ)՝ որպես համառուսաստանյան հասարակական կազմակերպության ձևավորումը: Առավել կարևոր և միևնույն ժամանակ խորհրդանշական առաքելություն պետք է վերապահել 2003 թ. հոկտեմբերին, կրկին վերջինիս ղեկավարությամբ, միջազգային կարգավիճակ ունեցող «Համաշխարհային հայկական կոնգրես»-ի (ՀՀԿ) հիմնադրումը: «Ռուսաստանի հայերի միության» ղեկավարության նախաձեռնությամբ «Համաշխարհային հայկական կոնգ-

րես»-ի հիմնադրումը Մոսկվայում հաստատում է այն տեսակետը, որի համաձայն Ռուսաստանի հայությունն այսօր լուրջ հայտ է ներկայացնում դառնալու Հայաստանի սահմաններից դուրս համայն հայության խոշորագույն կենտրոններից մեկը[7]: ՀՀԿ-ն ակտիվ գործունեություն է ծավալում Հայաստանի և Արցախի սոցիալ-տնտեսական, առողջապահական ու կրթական ոլորտներում, ակտիվացրել է իր մասնակցությունը 1915 թ. հայերի դեմ իրագործված ցեղասպանության միջազգային ճանաչման գործում: Կոնգրեսն իր առջև խնդիր է դրել նաև ակտիվ մասնակցություն ունենալ և աջակցել Արևմտյան Հայաստանի հայության հետնորդների երրորդ համագումարի կազմակերպման ու անցկացման գործում՝ արևմտահայերի լիազոր ներկայացուցչական մարմինների ստեղծման նպատակով: Վերջին ժամանակներս Ռուսաստանի հայ համայնքում, որն ընդհանուր առմամբ ընդգրկում է շուրջ 2,5 մլն. բնակչություն, տեղի ունեցած այս և այլ արմատական տեղաշարժերը վկայում են, որ վերջինս պոտենցիալ ռեսուրսներ ունի մոտ ապագայում առավել համակարգային գործունեություն ծավալելու, միջազգային հարաբերություններում իր ազդեցության ու կշռի բարձրացման ուղղությամբ:

Անդրադառնալով վերլուծության բուն նպատակին՝ հարկ ենք համարում հաստատել, որ մի կողմից ասիական մայրցամաքում և առաջին հերթին Ռուսաստանում ու ԱՊՀ տարածքում հրեականության ռեսուրսների կենտրոնացումը, Ռուսաստանի հայության համայնքային կյանքի կտրուկ ակտիվացումը և միջազգային դերի բարձրացումը, մյուս կողմից՝ վերոնշյալ երկու միտումների կարևորումը Ռուսաստանի ղեկավարության կողմից, առաջնակարգ նպաստավոր նախադրյալներ կարող են հանդիսանալ երկու համայնքների միջև համագործակցության ակտիվացման համար: Մյուս կարևորագույն նախապայմաններից մեկն էլ այն է, որ հարցում շահագրգռվածություն են ցուցաբերում թե՛ Իսրայելի և թե՛ Հայաստանի պետական բարձր շրջանակները՝ թեև իրենց առջև ունենալով այլ խնդիրներ ու շահեր: Սակայն կողմերի միջև երկխոսության կայացման հարցում ձևավորվում է կարևորագույն մի գործոն, որի առկայությունը կարող է ապահովել կողմերի միջև ընդհանրական շահերի դաշտ: Ինչպես արդեն նշվեց, վերջին ժամանակներս ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը բացասական հետևանքներ է թողնում ԱՄՆ-ի հրեականության քաղաքական, ֆինանսական կապիտալի ազդեցության վրա՝ ուղեկցվելով լուրջ գաղափարական տարակարծություններով: Ավելին, ԱՄՆ-ի հանրապետականները, կրկին պայմանավորված Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի շահերով, լուրջ ճնշումներ են բանեցնում իշխանության դեմոկրատական ճամբարի վրա, որը և ներկայացնում է Միացյալ Նահանգների հրեականության առավել համախմբված ֆինանսական վերնախավը: Արդյունքում, ինչպես նկատում է ամերիկյան վերլուծաբաններին մի զգալի մասը, արմատական, կարելի է ասել՝ նույնիսկ հակադիր փոխակերպումների են ենթարկվում նաև այդ իսկ ընտրանու գաղափարական, աշխարհաքաղաքական դիրքորոշումներն ու շահերը: Մյուս կողմից, նման տեղաշարժերն, իհարկե, չեն կարող չանդրադառնալ Իսրայելի պետության արտաքին քաղաքականության և ընդհանրապես պետական շահերի վրա:

---

[1] Ռուսաստանի հրեական կոնգրեսի առաջին նախագահը եղել է Վլադիմիր Գուսինսկին (1996-2001 թթ.), որին հաջորդել են Լեոնիդ Նևզլինը (2001), Եվգենի Սատանովսկին (2001-2004 թթ.) և Վլադիմիր Սլուցկերը (2004-2005 թթ.): 2005 թ. նոյեմբերի 10-ին ՌՀԿ նախագահ է ընտրվում ռուսաստանյան հայտնի գործարար Վյաչեսլավ Կանտորը:

[2] «Գերմանիայի հրեաների կենտրոնական խորհուրդը» ստեղծվել է դեռևս 1950 թ. Ֆրանկֆուրտում: Հետագայում խորհուրդը տեղակայվում էր Դյուսսելդորֆում, այնուհետև՝ Բոննում: 1999 թ. ապրիլի 1-ից «Գերմանիայի հրեաների կենտրոնական խորհրդի» վարչությունը տեղակայվում է Բեռլինում: «Գերմանիայի հրեաների կենտրոնական խորհրդի» կազմում ներառվում են 23 տարածքային միություններ, որոնք միավորում են 102 հրեական համայնքներ՝ ընդհանուր առմամբ 105 հազ. բնակչությամբ: Խորհուրդը, որը համախմբում է ուղղափառ, ռեֆորմիստական, լիբերալ ու պահպանողական ուղղության հետնորդներին, դրանով իսկ ներկայանում է որպես Գերմանիայի ողջ հրեա բնակչության կրոնական շահերի ներկայացուցիչ:

[3] Եվրոպայի հրեաների փոքր թվաքանակն է միայն ցանկանում վերադառնալ Իսրայել՝ կապված երկրի ու մերձավորարևելյան ռազմաքաղաքական անկայունությամբ:

[4] Հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, որ վերջերս էապես վատթարացել է եվրոպական հրեաների վիճակը (հակասեմականության ուժեղացում):

[5] ԵՀԿ-ն ներկայացուցչություններ ունի նաև Բեռլինում, Բրյուսելում, Բուդապեշտում և Ստրասբուրգում: ԵՀԿ-ն սերտորեն համագործակցում է եվրոպական տարբեր երկրների կառավարությունների, եվրոպական առաջատար միջազգային այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Եվրոմիությունը, Եվրոպայի խորհուրդը, ԵԱՀԿ-ն:

6 Վ. Կանտորի նախաձեռնությանն է վերագրվում նաև 2006 թ. Թել-Ավիվի համալսարանում հիմնադրված «Եվրոպական հրեական մշակութային հետազոտությունների կենտրոն»-ը:

[7] Թեև «Համաշխարհային հայկական կոնգրես»-ի գլխավոր գրասենյակը տեղակայվում է Երևանում, սակայն կազմակերպության հիմնադիր նիստը տեղի է ունեցել Մոսկվայում:

Տարեմուտի տոնական հավաքում ես հանկարծ նկատեցի, որ ինձ համար միևնույն է, թե որ սեղանի շուրջ նստեմ: Ամենուր մտերիմ, հարազատ դեմքեր էին: Հարազատ, մտերիմ էին, նույնիսկ, ինձ անծանոթ, նոր դեմքերը: Ընկերականության շունչ էր թեւածում ընդարձակ սրահում:

Որպես թաքուն կենաց ես ինքս ինձ ասացի. «Հայաստանում վերջապես կայացավ Դաշնակցությունը»: Ուրախությունս բարձրաձայն չարտահայտեցի ոչ այն պատճառով, որ ինձ սխալ կարող էին հասկանալ, այլ որովհետեւ զգացողություններ կան, որ չեն ձեւակերպվում բառերով: Եվ հետո՝ զգացողությունները սնող, սրող, թանձրացնող հուշեր կան, որոնց շըղթան ամբողջական չի լինի, եթե հանկարծ, մանավանդ բանավոր խոսքում, անտեսում ես որեւէ, թեկուզեւ, աննշան թվացող օղակ:

Տարեմուտի խնջույքն արդեն ՀՅԴ նախագահության թեկնածու Վահան Հովհաննիսյանի կենացին էր հասել, իսկ ես, օղակ-օղակ ետ գնալով, փորձում էի հիշել Սկիզբը, Դաշնակցության հմայքով տարված այն առաջիններին, որոնց մի

մասն հիմա չկան, մի քանիսն էլ, ցավոք, չդիմացան փորձություններին: Ամենատարբեր բնավորություններով, ամենատարբեր ծագումով ու մասնագիտությամբ տղերք էին, մեծամասամբ ռոմանտիկ, ազնիվ, հայրենասեր, բայց մեկմեկու անծանոթ: Միևնույն խարույկի շուրջ էին հավաքվել, բայց մեկմեկու չգիտեին: Խարույկի կրակից կարմրատակող դեմքերն էին միայն երևում, ներսը՝ անտեսանելի էր: Կազմակերպությունը ձևավորվում էր, Դաշնակցության գաղափարախոսությունը՝ մարսվում, բայց բացակա էր, կամ գրեթե բացակա էր ընկերականությունը: Մարդկային ընկերականությունը: Մարդկային ընկերական սերը: Այդ սիրո ծարավը դաշնակցականները հագեցնում էին իրենց անհատական ընկերական շրջանակներում: Երկակի կյանք էր: Մարդկայինը եւ կուսակցականը ապրում էին կողք-կողքի, զուգահեռաբար: Եվ այս մեծ ու սկզբնական շրջանում բնական թերությունը պիտի վերացներ մարդկայինի եւ կուսակցականի համատեղումը միայն, ինչը խաղաղ պայմաններում ու հարթ ճանապարհին շատ ավելի դանդաղ ընթացք էր ունենալու: Մեր պայմանները, սակայն, բարդ էին եւ ճանապարհն էր անհարթ: Եվ մեր այս ընթացքը փոքր-ինչ արագ ընթացավ: Ճանապարհին եւ դժվարին օրերին են, չէ՞, մարդիկ ճանաչում մեկմեկու: Ճանապարհին եւ դժվարին օրերին են, չէ՞, մարդիկ բացահայտում իրենց թերություններն ու առաքինությունները:

Վահան Հովհաննիսյանի հետ թե երկար ճանապարհ եմ անցել եւ թե դժվարին օրեր ապրել: Միասին ենք եղել ՀՅԴ Հայաստանի կազմակերպության առաջին երկու կենտրոնական կոմիտեներում, որոնց նիստերից հաճախ էր բացակայում, որովհետեւ միտումնավոր երկարաձգում էր արցախյան գործուղումները: Նրա շունչն ուղղակի կտրվում էր Երեւանում, ուշքն ու միտքը Արցախն էր:

Միասին ենք ՀՅԴ Բյուրոյի անդամ ընտրվել ընդհանուր այն ժողովում, որի բացումը կատարվեց Երեւանում եւ տեղնուտեղն էլ ընդհատվեց, որովհետեւ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին անհանգստացրել էր դաշնակցական պատվիրակների «դեսանտը»: ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխյանը ուղղակի վտարվեց երկրից՝ ողջ վիճակում այլեւս չվերադառնալու հեռանկարով:

Ընդհանուր ժողովը շարունակվեց Փարիզից ոչ այնքան հեռու մի գյուղաքաղաքի հյուրանոցում, որտեղ բոլոր երեկոներն անցնում էին Վահան Հովհաննիսյանի հոր՝ Էդուարդ Հովհաննիսյանի թամադայությամբ: Ընկերասիրության խելառ էր այդ մարդը եւ ընդգծված ջերմություն էր ցուցաբերում հատկապես հայաստանցիներիս նկատմամբ: Կարոտը խեղդում էր:

Տարիներ անց, նրա մի գրքում, որի առաջաբանը գրելու պատիվն եմ ունեցել, այսպիսի տողեր կան գրված. «Եթե ընկերական սերը մտնում է կուսակցական ընկերների փոխհարաբերությունների մեջ, ապա այդ կուսակցությունը հավերժ է: Կկործանվի այն դեպքում, երբ ներսից կամ դրսից կատարվող նենգությունների հետեւանքով խաթարվի կուսակցականների ընկերական սերը: Եթե ընկերական հավատարմության հավատը տիրի ժողովրդի ու իշխանությունների միջեւ, այդ պետությունը, ազգը, համայնքը երբեք չեն կործանվի...»:

Այդ օրերին մենք դեռ հեռու էինք ընկերականությունից: Դեռ ճանապարհ ունեինք անցնելիք եւ ապրվելիք՝ դժվարին օրեր: Չորս հայաստանցի, այդ ժողովում, Բյուրոյի անդամ ընտրվեցին: Հայաստանյան մեր «մինի» բյուրոն իր նիստերը գումարում էր սկզբում «Նորք»-ի իմ առանձնասենյակում, հետո արդեն ձեռք բերված գրասենյակում, իսկ լիագումարների համար ստիպված էինք արտասահման մեկնել, որովհետեւ Հրայր Մարուխյանը, վերին հրամանով, Հայաստան ոտք դնելու իրավունք չուներ: Հետո Մարուխյանը կաթվածահար եղավ, հետո «Դրո» կոչված գործը հրապարակ նետվեց եւ Հրանտ Մարգարյանը ձերբակալվեց: Հետո ՀՅԴ հայաստանյան կազմակերպությունը փակվեց, ջարդուխուրդ եղան մեր գրասենյակները, խմբագրատները, նույնիսկ «Նորք» գրական ամսագրի խմբագրատունը ոտնատակ արեցին եւ մեկ տարով կնքեցին դռները: Հետո Վահան Հովհաննիսյանը ձերբակալվեց: Հետո դատական անվերջանալի քաշքշուկները ծավալվեցին... Մեզ ջարդելով իշխանություններն իրենց մկաններն էին մարզում: Բայց մենք էլ էինք մարզվում: Հաղթող բռնցքամարտիկը ոչ միայն պիտի դիպուկ հարվածել իմանա, այլեւ կարողանա դիմանալ դիպուկ հարվածներին: Թերեւս, ավելի շատ

հարվածին դիմանալն է կարեւոր, քան հարվածելը: Որովհետեւ՝ եթե դիմանում ես, հարվածներն աստիճանաբար թուլանում են եւ կորցնում իրենց դիպուկությունը: Մենք դիմացանք: Ես հպարտ եմ, որ մեր ընկերները դիմացան բոլոր հարվածներին եւ դարձան ավելի ուժեղ ու կենսունակ: Իսկ Հրանտ Մարգարյանը եւ Վահան Հովհաննիսյանը բանտից դուրս եկան, նույնիսկ, իմաստնացած:

Մեղքս ինչ թաքցնեմ, նրանց խնայելով եւ կուսակցության արագ վերականգնումը նկատի ունենալով, ես կարծում էի, թե մեր ընկերները որոշ ժամանակով պիտի չերեւային կուսակցության առաջին շարքերում: Կարծում էի՝ հեշտ խոցելի են լինելու եւ համակված հասկանալի դառնությամբ ու վրեժխնդրության զգացումով: Սակայն, առաջին իսկ քայլերից, առաջին իսկ արտահայտություններից, պարզվեց, որ բանտը, անօրինականությունը նրանց չեն դառնացրել այնքան, որ թունավորվի քաղաքական, պետական գործչի հասունացման առողջ ընթացքը: Բանտը, անօրինականությունը, բռնությունը կարող են ճզմել մարդուն, բայց կարող են նաեւ թեւեր տալ: Անազատության մեջ նրանք ձեռք էին բերել զուսպ, զսպված ազատություն, մի շնորհ, որ հաճախ չի այցելում մահկանացուներիս: Բանտից նրանք դուրս եկան ընկերականությունն ամրապնդած: Եվ նրանց օրինակը վարակիչ եղավ կուսակցության համար:

Վահան Հովհաննիսյանի առաջադրումը ՀՀ նախագահության թեկնածու, կուսակցական հավուր պատշաճի ակտ չէ: Ոչ թե կուսակցության, կուսակցական կազմակերպության, այլ կուսակցական ընկերության թեկնածուն է Վահան Հովհաննիսյանը եւ այս իրողությունը Դաշնակցության ամենակարեւոր ձեռքբերումն է: Որովհետեւ՝ Դաշնակցությունը կուսակցական ընկերությունն է:

Ահա թե մոտավորապես ինչ էի մտմտում տարեմուտի խնջույքին, որի մթնոլորտը, թերեւս առաջին անգամ այդքան զգալի, ընկերականությամբ էր շնչում:

Ռուբեն ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

№ 1 (189) XVIII ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍԱՐ 1908

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Քաղաքական տեսություն

Սոցիալիստական հոսանքը Անգլիո մեջ.-Անգլիո Հոլ քաղաքին մեջ հունվար 20-ին գումարված Անգլիո «Աշխատավորական կուսակցության» կոնգրեսի երկրորդ նիստին 514,000 ձայնով, 469,000-ի դեմ ընդունվեցան հետևյալ որոշումները, իբր վերջնական նպատակ:

1. Արդյունաբերության, բաշխումի և փոխանակության միջոցներու համայնացում՝ ընդհանուր հասարակության շահերուն համար:

2. Բոլորովին ազատագրել աշխատությունը կապիտալիզմի և մեծ հողատիրության տիրապետութենեն:

3. Երկու սեռերու ընկերային և տնտեսական հավասարություն:

Սոցիալիզմի համար մեծ հաղթանակ մը կը համարվի այդ օրը և կարևոր դեպք մը Անգլիո քաղաքա-տնտեսական պատմության մեջ:

* * *

Գերմանիա և Լեհաստանը.- Բրուսական Լանդթակը (խորհրդարան) հունվար 17-ին վերջնապես ընդունեց լեհերը սեփականազրկելու օրենքը: Այս առթիվ լեհ երեսփոխանները հանդիսավորապես բողոքեցին «անարդար օրենքին դեմ՝ որ կը գործադրվի պետության մեջ անպաշտպան փոքրամասնության մը դեմ»: «Մենք,- հարեց լեհ երեսփոխան մը,- անկանգ քաջությունով մը պիտի սկսինք կռիվը մեր հայրենի հողին համար, ուր կը հանգչին մեր հայրերու նշխարները և ուր կը գտնվին մեր պատմական անցյալի հիշատակները: Մեր դատը արդար է և ազնիվ: Մենք պիտի հաղթենք ամեն ճախորդության: Ինչ որ ենք իբր ժողովուրդ, կուզենք մնալ և պիտի մնանք»: Ռուսական Լեհաստանի թերթերը «ատամն ընդ ատամանի» սկզբունքը կը քարոզեն գերմաններուն դեմ. «Ոչ մեկ թիզ հող գերման գաղութներուն, որոնք կուգան անբարոյականություն տարածելու լեհերուն մեջ»:

* * *

Ժողովրդական ցույց.- Հունվար 12-ին Պերլինի մեջ ժողովրդական մեծ ցույցեր եղան, որոնք բուռն արձագանք գտան երկրում: Սոցիալիստները պարագլուխներն եղան ժողովրդական սույն շարժումին: Հունվար 21-ին անգործ բանվորներու ուրիշ ցույց մ'եղավ Պերլինի մեջ: Կառավարության միջամտությունը առաջ բերավ արյունահեղություն: Ցուցարարները ոստիկաններու երեսին կը պոռային «արյունկզակ շուներ»:

* * *

Պարսկաստան.- Մեճլիսը կրցավ Շահի պետական հարվածը դերև հանել: Դըժբախտաբար իր գեղեցիկ որոշումները «օդային» կը մնան և երկրին մեջ կը շարունակվի անիշխանական դրությունը: Ազատականներու և հետադիմականներու ընդհարումները կը շարունակվին երկրին զանազան կետերու վրա, մասնավորապես Թավրիզի մեջ, ուր շատ մարդիկ սպաննված և շուկաները փակված են:

Մինչ այս, մինչ այն, թրքական զորքերը կը հառաջանան և պարսիկները ոչ մեկ դիմադրություն չեն կրնար ցույց տալ թյուրքերու արշավանքին:

Պոլսո պարսկական դեսպանը հեռագրած է սահմանագլխի պարսիկ կոմիսերին, թե թյուրք կառավարությունը հրամայած է նոր հողեր գրավել Պարսկաստանեն, և թե կոմիսիոնի քննությունը պարզ աչքակապություն մըն է:

* * *

Իզմիրի դեպքը.- Հունվար 24-ին Իզմիրի մեջ ձերբակալվեցավ Օսման Խուլուսին՝ երբ ֆրանսական փոստեն դուրս կելլեր: Վրան գտնվեցան երիտասարդ թյուրքերեն եկած նամակներ, որու հետևանքով ձերբակալվեցան Մեհմեդ Նեճիպ, վիլայեթին քաղաքական դիվանին քարտուղարը, Ճեմիլ Միդհատ՝ հույն լրագրներու գրաքննիչը և ուրիշներ: Մեհմեդ Նեճիպ կամբաստանվի, որ դրամով կուսակիցներ վարձած և երիտասարդ թյուրքերու հրատարակություններ տարածած է:

Ամսալուրեր

1905-ին սուլթանի դեմ եղած սպանության փորձեն հետո ձերբակալվելով, մեր ընկեր Էդվարդ Ժորիսը, ծագումով պելճիգացի, ինչպես հայտնի է, դատապարտված էր մահվան: Երեք տարիե ի վեր Պոլսո բանտին մեջ տառապելե հետո, այժմ ազատված է և վերադարձած Անվերս՝ իր հայրենիքը:

Իր ազատության առթիվ «Դրօշակի» խմբագրության շնորհավորության ի պատասխան, Ժորիս պատասխանած է. «Երեք տարվա տանջանքը ոչ միայն բարոյապես թուլցուցած չէ զիս, ընդհակառակը՝ ավելի զորապնդած: Ես միշտ կը մնամ ազատության, հարստահարվածներու ու թույլերու կողմը, աշխարհի մեծամեծներուն անարդարության և բռնակալության դեմ»...

* * *

Ուրախալի մի փաստ տեղի ունեցավ նորերս Ատրպատականում,- քյուրդ խմբերից մեկը դիմեց Դաշնակցության տեղական մարմնին, հրավիրելով նրան միջնորդ և հաշտարար լինել իրենց մեջ ծագած ներքին կռիվների համար: Մեր մարմինը սիրով և աջողությամբ կատարեց այդ դերը:



Գաղափարական գանձաքաղ

Հրաչ Տասնապետյան (Հոդվածներու ժողովածու), Համազգայինի «Վահե Սաթյան» հրատարակչատուն, Բեյրութ, 2007 թ., 640 էջ:



Այլեւս գրասեր հասարակության սեղանին է մեծանուն մտավորականի, տեսաբանի եւ վերլուծաբանի հոդվածների ու ելույթների ժողովածուն, որ նրա մահվանից հետո առաջին լուրջ փորձն է արժեւորելու մարդկային մի կյանք՝ առլեցուն ազատագրական պայքարի էությունն ու նպատակները սերունդների ենթագիտակցու- թյունը հասցնելու, ամբողջական հայության եւ ամբողջական Հայաստանի տեսլականին մարմին ու ձեւ հաղորդելու վեհ ձգտումներով:

Հոդվածների ժողովածուն, որ հրատարակության է պատրաստել հիշյալ հրատարակչատան աշխատակցուհի Սալբի Քյուրքչյանը, բացվում է Հ. Տասնապետյանի ինքնակենսագրությամբ: Վերջինս ամենայն մանրամասնությամբ վերհիշում է մանկության եւ ուսումնառության տարիները, ապա ողջ գործունեությունը՝ բաժանված կյանքի շրջանների եւ համեմված անմոռաց տպավորություններով: Ինքնակենսագրական հարուստ տեղեկություններին հետեւում են հատորի հիմնական գլուխները, որոնցում ամփոփված հոդվածներն ու ելույթները ընթերցողին հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմելու Հ. Տասնապետյանի՝ որպես հրապարակախոսի եւ հրապարակագրի, մանկավարժի եւ հասարակական գործչի, ՀՅԴ գաղափարների նվիրյալի ու անխոնջ ուսումնասիրողի կերպարի մասին: Գրքում բերվում են նաեւ Հ. Տասնապետյանի կողմից օգտագործված գրականության ցանկը, արժեքավոր տեղեկություններ ՀՅԴ նշանավոր դեմքերի ու գործիչների հետ նրա անձնական շփումների մասին:

Ավելացնենք նաեւ, որ հատորը հրատարակվել է Լոս Անջելեսից տեր եւ տիկին Խաչիկ եւ Էլո Մուրադյանների մեկենասությամբ:

Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները

Արա Պապյան (հոդվածների ժողովածու), Երեւան, 2007, 120 էջ:



Ներկայացվող գրքի ստեղծման անհրաժեշտության ու շարժառիթների մասին հեղինակը՝ Արա Պապյանը, հիմնավոր փաստարկներ մեկ անգամ չէ, որ ներկայացրել է Հայ դատի ու հայ-թուրքական հարաբերությունների ոլորտներին առնչվող իր հոդվածներում, հեռուստաելույթներում և մամուլի ասուլիսներում: Իսկ նրա «Հայ-թուրքական իրավական (de jure) սահմանը. անցյալի ժառանգությունն ու ապագա հնարավորություններն ըստ միջազգային իրավունքի» հոդվածում, որ տպագրվել է «Դրոշակի» 2007 թ. երրորդ համարում, այն հստակ համոզումն է հնչում, որ, նկատի ունենալով քաղաքական, տնտեսական կամ ռազմական բնագավառներում Թուրքիայի և Ադրբեջանի ընդհանուր ներուժի հանդեպ ՀՀ և հայ ժողովրդի հավաքական ներուժի առավել համեստ հնարավորությունները, անհրաժեշտություն է առաջացել պայքարի ու դիմակայության ողջ գործընթացը տեղափոխել այլ ոլորտ, ուր մենք ոչ միայն չենք զիջի նրանց, այլև կունենանք շոշափելի առավելություն: «Այսինքն,- գրում է հեղինակը վերոհիշյալ հոդվածում,- անհրաժեշտ է հայ-թուրքական հարաբերությունները տեղափոխել իրավական դաշտ և այդ հարաբերություններում առկա բոլոր խնդիրներին տալ իրավական լուծումներ և ձևակերպումներ»:

Գրքում տեղ գտած տասնչորս (վերջինը՝ անգլերեն) հոդվածների վերնագրերի հպանցիկ ընթերցումն իսկ հուշում է, որ հենց այդ գերագույն նպատակին՝ խնդիրը իրավական դաշտ տեղափոխելու անհրաժեշտության բացահայտմանն է նվիրված այս աշխատությունը: 2006-2007 թվականներին գրված հոդվածներում քննության առարկա են դարձել Առաջին աշխարհամարտից հետո Հայաստանին ու հայ ժողովրդի ճակատագրին առնչվող իրադարձություններ, միջպետական տարբեր պայմանագրեր ու համաձայնա-գրեր, անգամ առանձին փաստաթղթեր, որոնք ներկայացված են միջազգային իրավունքի լույսի ներքո: Հեղինակը բացատրել ու մեկնաբանել է դրանց նշանակությունը Հայ դատի համար նպաստավոր լուծումներ փնտրելու ճանապարհին: Այս տեսակետից առավելապես կարևորվում են Սևրի դաշնագրին ու ԱՄՆ-ի 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի՝ հայ-թուրքական սահմանային խնդիրների իրավարար վճռին վերաբերող հոդվածները, որոնց ծանոթագրություններում ներառված փաստական հարուստ նյութը մեկ անգամ ևս ընդգծում է հայկական կողմի պահանջատեր լինելու հանգամանքը:

Գրքում առանձին անդրադարձներ կան Մոսկվայի ռուս-թուրքական (16 մարտի, 1921 թ.) և Կարսի պայմանագրերին, Սևրի և Լոզանի պայմանագրերի իրավական փոխհարաբերություններին, Հայոց ցեղասպանությանն ու հայ ժողովրդի նյութական կորուստներին, Արևմտյան Հայաստանում մեր պատմամշակութային հուշարձանների կարգավիճակին, Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման խնդիրներին: Որպես ասվածի ամփոփում՝ հեղինակը հոդվածաշարին կցել է նաև իր՝ «Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները» ելույթը, որով նա հանդես է եկել 2007 թվականի մարտի 13-ին Երևանում տեղի ունեցած Հայ դատի հանձնախմբերի խորհրդաժողովի ժամանակ:

Գրքի մի կարևոր արժանիքն էլ այն է, որ հեղինակը լոկ միջազգային իրավունքի տեսաբան չէ, այլ դիվանագիտական աշխատանքների ու միջպետական գործնական փոխհարաբերությունների կազմակերպչի հարուստ փորձ ունեցող քաղաքագետ, ում տեսակետները, անկասկած, հաշվի կառնվեն Հայկական հարցի լուծման ներկա ու ապագա բոլոր շրջափուլերում:

ՀՐԱՆՏ ԴԻՆԷՔ



Երբեմն ինձի օտարները կհարցնին, կըսեն, թե թուրքերը ինչու Ցեղասպանությունը չեն ճանչնար, չենք հասկնար մենք, չենք հասկնար՝ ապուշ են, ի՞նչ են, եթե ըսեն՝ հա, եղել է, կճանչնանք, իրենք պատիվ պիտի ունենան, իրենք քաղաքակիրթ ժողովուրդ պիտի դառնան, չենք հասկնար կըսեն եւ պատճառը ի՞նչ է՝ կըսեն: Ոմանք կհոլովեն, թե թուրքերը կվախնան, եթե ճանչնան, վերջը հող պիտի տան, հատուցում պիտի տան, ո՜չ ,ո՜չ, ո՜չ, թուրքերը անկե չեն վախնար, ըսեմ ձեզ: Թուրքերը շատ լավ գիտեն, որ հող առնել-տալը միայն ուժով կըլլա, գիտեն իրենց ուժը, գիտեն Հայաստանի ուժը, գիտեն ատիկա: Իր ապագայի տեսակետեն՝ երբեք հող առնված-տրված չէ, անկե չեն վախնար: Գալով հատուցումին հարցին, շատ չնչին կազատեն անկե, նույնիսկ քիչ մը կուտան ալ, բան չտարբերիլ, ուրիշները կօգնին, նորեն կուտան, ատիկա բան չէ, ան ալ իրենց համար հարց չէ: Իրենք ունին ուրիշ մտավախություն. անոնք ստեղծեցին նոր քաղաքացի մը, նոր ինքնություն մը, որ կկոչվի թուրք, եւ ատիկա ունի իր պատմությունը, իր մշակույթը, որ արհեստական պատմություն է, արհեստական մշակույթ է եւ եթե հիմա այդ ինքնությունը այս պատմությամբ չեղյալ ըլլա, երկրաշարժ կանցընե, եւ եթե այդ ինքնությունը կտապալի, այդ երկի՞րը կտապալի: Եթե գանք փլուզումի հետեւանքներուն, ատիկա պիտի չըլլա զենքով, պիտի չըլլա բահով, բրիչով, ատիկա պիտի ըլլա միմիայն ինքնության տապալումով եւ ես ձեզի ըսեմ՝ այն Թուրքիան, որ Եվրոմիություն մտած պիտի ըլլա, այդ Թուրքիան, այս Թուրքիան պիտի չըլլա:

HEPİMİZ ERMENİYİZ HEPİMİZ
COD MEKTUP
Kardeşimiz HRANT DİNK'i Katlettiler

Hrant Dink öldürüldü!

HEPİMİZ ERMENİYİZ HEPİMİZ



KATİL 301'CİLER
KATİL